ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Գ. ՏԱՐԻ ԻԷ. ՄԱՐՏ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊՈՏՄԱԿԱՆ.	ՆՈՐ ԾԱԾԿ. Նամակներ. (Միսաքան) .	191
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.	ՃԱՆԱՊԱՐ. Նկատող. (Քաջբերունի) .	200
	ԼԱՋԻՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՔՈՒՐԴԻՍՏԱՆ. Էլիզէ Ռէկլիւ. (Միսաքան) .	218
	ՈՒՈՂ. ՀԱՅՐՄԸ ԵՐ. Նոյ. (Յ. Ամատ.	240
ՊՈՏՕՆԱԿԱՆՔ.	ՔԱՂՈՒԱԾՔ Սինօղի օրագ. . .	251
	Մ. Ամոռի ընդ. ծախ. Հաշիւը .	273

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ

ՌՅԽԱ—1892

ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Գ. ՏԱՐԻ ԻԷ. ՄԱՐՏ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ
ՌՅԽԱ—1892

ՀՐԱՄԱՆԱՒ

ԱՄԵՆ Տ. ՏԵԴԱԿԱԼԻ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ։



ՊԱՏՄԱԿԱՆ

ՆՈՐ ԾԱԾԿԱԳԻՐ ՆԱՄԱԿՆԵՐ·

Դարիս սկզբին Էջմիածնի միաբանութիւնը բաժանուած էր երկու որոշ և միմեանց խիստ հակառակ կուսակցութիւնների։ Ամբողջ աղգը՝ Պոլսից մինչև Հնդկաստան, նոյնպէս բաժանուած էր երկու բանակի, պատկանելով Էջմիածնի այս կամ այն կուսակցութեանը։ Պատմութեան մէջ այս կուսակցութիւններն յայտնի են Դաւթեան և Դանիէլեան անուններով, իւրաքանչիւր կուսակցութիւնը կրելով իւր կաթողիկոսացուի անունը։ Դաւթեան և Դանիէլեան կուսակցութիւնները իրենց պայքարում չէին քաշւում ո՛չ մի միջոցից, ո՛չ մի բռնութիւնից։ Այս կողմից ո՛չ մի բանով նրանք բարձր չէին տիրող պարսկական իշխանութիւնից։ Դաւթեան կուսակցութիւնը յետադէմ, պահպանողական կուսակցութիւն էր, կապուած իւր համակրութիւններով և հակումներով տիրող պարսկական խանութեան հետ։ Իսկ Դանիէլեան կուսակցութիւնը դժգոհ էր եղած վիճակից և իւր բոլոր ձգտումներով ու համակրութիւններով «հիւսիսականների», այն է՝ ռուս տիրապետութեան կուսակից էր, այդ քրիստոնեայ տէրութեան ուժով կամենալով վերջ դնել տիրող ասիական խաւարին։

1888 թուի «Արարատում» մենք հրատարակեցինք Դանիէլեան կուսակցութեան անդամների գործ ածած ծածկագրերի գիտը և այդ ծածկա-

գրերով գրուած երկու նամակի վերծանութիւնը։ Այժմ տալիս ենք երեք նոր նամակների վերծանութիւն։ Այս նամակները Մեսրոպը սրբազանի ուղղակածներն են, որոնց մասին արդէն առիթ ենք ունեցել խօսելու (տե՛ս «Արարատ», 1888, յունուար, ապրիլ և մայիս)։

Ուղղագրութիւնը և կէտադրութիւնը թողուած է նոյնութեամբ, ինչպէս որ է բնագրում։

ՄԻԱԲԱՆ.

ՅԱՆԿԱԼԻԻՄ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴ(Ա)ՊԵՏ.

Սուրբ ողջոյն ձօնեմ։

Յանցեալսն մի գիր գրեցի վասն կոկծալի անցիցն որ առ Կարբեցին և առ Անտոն վարդապետսըն. որք և զուրկ ի մօրաց և կողոպտեալք ի գոյից կան անկեալք ի բանդի։ Եւ ըստ ապաչանաց ընտանեաց նոցին խանումքն [1]) գրեցին առ դեկոսըս [2]) զի արձակեսցէ զնոսա. այլ սա ի ձեռն կաշառաց հաճեցոյց զկամն նոցա չանսալ ընտանեացըն, որք և ղանց արարին։

Եւ ողորմելիքն անկեալ կան ի բանդի անօգնական։

Զիք վրացի Ստեփանէն գիր եկն առ Դեկոսն և առ աթոռագայլն որ է 40 աւուր գիր յօգոստոսի 10 գրեալ։ Գրէ մոնթական բանս։ Թէ պատրիարգն ասացել է թէ նա չէ միաբան Լ.Ջ միածնի, ասացի թէ. ես Ղուկասու օրհնե(ա)լեմ և բարսեղ եպիսկոպոսի ընկեր. նա մուղամի օրհնեալ և հօսի ընկեր. և այլք։ Եւ թէ մարտիրոսն առանց ինձ եկն և էրզրում բան յինէն շատ է ասացեալ գիտեմ և դեկոսիդ, որ սրբազան [3]) գրէ։ Եւ թէ միաբանքն լաւ շահէք և մեծա(ւ)որին հարազատ լինիս և թէ նոքա այնքան ասա խոստացել են որ թէ սառնատունն [4]) ոսկի լի լինի չէ բաւական. և թէ իզմիրցիք ասեն թէ մեր դեկոսն Դաւիթն է և առաջնորդն Մարտիրոսն։ Եւ թէ ռուստաց կողմն ձեռաց թողուք և այլ այսպիսիք։ Եւ թէ ձեռս մի չօփ առեալ կամիմ զծովն պղտորել և թէ մինչև ց ծե օրն ես և սրբազանն հան-

գլուցանամք [5]։ Ա.թոռագայի գիրն ըստ այսմ մտօք. և թուի թէ դեկոսինն ևս էր ըստ այսմ զոր և գրէ պատասխանին։

Արդ մենք ամենայն կողմանց տարակուսեալ եմք և ոչ ինչ կարեմք առնել և ըստ յորում գրէ վրացին թէ լաւ շահէք միաբանն. պարտի այդի ցուցանել որպէս։

Եւ ի կողմանէ այդր գտանեցեալ եպիսկոպոսացն որք ի սմանէ են և այդր դիմեալ են մանսէրս [6] գրեցուսցես և չորքդ այդոքիկ և թէ այլ ևս իցէ կնքեալ առաքեսջիք առ ազգն զի ծանիցեն բարեկեցութիւն մեր։

Ա.յս իցէ ձեր ծանուցելին. մի թէ հարեալք ի խ(ղ)ճէ որք էաք պոռնկորդիք դիմեցաք առ ոսս սորին լինիլ ծնու(ն)դ հոգևոր։ Երկրորդ զի ի կողմանէ ողորմելի և վշտակիր մի(ա)բանութեանն որք նոցին կամաք դիմեցաք այսր ծանուցանեմք զմիշտ նոցին. զի նոքա գոլով ի վանդի վաս(ն) տալոյն զձեռագիրս տուժելո 100 թումման և գերծելոյ զմուրուս չկարեն գրել։ Եւս և զա(նց)ս կարբեցոյն և Ա.նտանին որք վասն խիստ գործոց իւրոց և վասն չ(ը)նդունելոյ զինքն այս անցք կրեցին։ Եւ զկողոպտումն տանց ողորմելե(ա)ցն որք յաշխար(հ)ական կարգի վասն աղքատութեան դիմելեալք են այդր. որ և այսօր ևս Թադէոն վարդապետի քեռ գինին կամէին յասլշտակել և ողորմելի կինն աղիողորմ արտասուս հեղոյր և ոչ ոք լսէր։ Եւ այլ այսպիսիք անթուք [7] զամենայն բանութիւն չարին քանիս գիր արծանացուցեալ. ի Ջմիւռին Պօլիս և այլս յլեռջիք ի կողմանէ զոցին չորից եպիսկոպոսացդ որովք ծանիցէ աշխար(հ) ամենայն չարաչար բանութիւն սորա և մերս ողոմելութիւն և վանդ։

Ցաճիկն եկն և չիմացաք ինչ։ Վասն Բարսեղի ծնողացն խոստացա ցարեան տալ։ Եւ գէորգ(ի) կինն վախճանեալ գոլով գնացաք ի միխիթարութիւն՝ գիրսն որ վասն բարսեղի ծնողացն տեսաք և ըստ այնմ արասցուք՝ ասա հանբաւեն թէ Փիլիպպոս նամիրայն մեռեալ է և քեռսա քահիայի գլուխն հատեալ։ Որովք միխիթարին։

Ասսի չորք հարիւր ասպատակողք ելեալ են յայդ կոյս թէպէտ առ կողմանս վանա և այլուր վասն ասպատակութեան են գնա-

ցեալ ըստ գիտելոյ մեր. բայց մայրդ զարհուրեալ մարդ էր առաքեալ մեզ ծանուցանել ձեզ. և թէպէտ ոչ ինչ է այլև զգուշանալ պիտոյ է։

Յառաջն և ես գրեցի ըստ բաւականին մեր վասն և հօրդ իւղ յղեսցես և ձեզ թէ ինչ հարկաւոր է ծանուսջիք, ի յղել և մեք ի ձեր միաբանութենէ եմք։

Աստուած միսիթարեսցէ զսիրտ մեր և ձեր. զի մի ապշիկ ի հօռմնիմայէս և զաւակ մի նորածինն կարասցեին. և մի ևս մեր տանէն փոխեցան առ տէր։ և Գայիանէն ծնաւ ապշիկ. աստուծոյ վառք՝ տեառն տուրք է։

Արդ և այսօր ըստ դրդելոյ ոմանց կրկին Դեկտն որոնել ետ զտուն աւետիքին և գտին մի գեղին իպրուշ մի բօթի 8) և մի չինի, զայնս ևս բերին։

Ի նաղլուխանի տղայոցն և ի ալէ(ք)սանդր վարդապետէն և քրդի տղայէն և այլոցն ևս միմի կարաս գինի ջաւմա 9) առին և Հանապազ խոկա չարիս որ և գործէ և ձեզ հարկաւոր է գրել աղգին ի բերանոյ չորիցդ։

Վասն մեծ կնքոյն մնացեալ եմք ի մեծ հոգս. զի ողորմելի տէր Խաչատուրն ասէ թէ յերբ աջնում 10) ի ձեռս սարատի կալնու զիս և գողամ և յերկուղէն ի ներքոյ հողոյ թաղեալ է. և որքան ստիպեմ՝ չառնու յանձն եթէ կարելի է ի Կարին տուք շինել և թէ ոչ ես ևս հետևելոց եմ՝ բայց ոչ առնու յանձն վասն մեծ տաքնապին. և որպէսն գրեսցես եթէ հարկաւոր իցէ այս գրով մի գիր տէր յօհանի վերայ և տէր Խաչատուրի վերայ գրէ որ ցուցեալ լինի թէ շինեսցէ։

Ի սեպտեմբերի ութն ի վերայ իմ՝ և վերայ գրիգորին գրեալ թուղթքն և յովհաննէս վարդապետին գրեալն ի սեպտեմբերի 10 ի պայազոոյ առ կարբեցին որ վասն հարկաւորացն այսօր որ է հոգտեմբերի 3 ընկալայ անբաղջ քնքով 11) թէպէտ յոյժ անագան իմացա զգրեալսն ես զի գրիգորն գնացեալ է և կարբեցին ի յարգելանս է։

Արդ ասա յովհաննէս վարդապետին զի մի այլ և այդպիսի վատագաւոր բանն ուղիղ գրով գրէ որ ի ձեռս չարին անկեալ չար ծնանի

այլ թէ հարկաւորիցի այսու գրով ձեզ գրեցուցէ։ Եւ բանիցն հոգ չտարի այժմ եթէ կամի ի գրելն հոգ տարայց բայց այսու գրով գրեսջիք։

Լերուք ողջ ի սէր Ռէթէ վշտացելոյս։

Ի հոգտեմբերի 4 ի սբ. Էջմիածին։

Արդ զան(ց) ջինի մանսէր առնելն և յապշտակութիւ(ն)ք սորին։ Կոզոպտեաց սա յակ(սբ)ոս վարդապետն. զիչտուրն զյովհաննիսեանն, վէքիլն. զբարսեղն. Կարբեցին. զանտօնն և զմիւս անտօնն և զգիւլացիս. զայսոսիկ այրեցմանէ սրտիս գրեմ և դուք հոգ տարջիք որ իմացին միաբանից շահելին։

Յերեկոյիս հանբաւեցին որպէս թէ այդի փախեալ էր. և սկըսեալ են նորանոր սուտս ասելն։

---

1) Երևանի խանի կանայքը։ 2) Դաւթի մականունը, Դանիէլեան կուսակցութիւնից տրուած։ 3) «Սրբազան»՝ կաթուղիկոսական տիտղոս այս դարի սկզբին։ 4) Էջմիածնի սառցատունը մի մեծ ստորերկրեայ շինութիւն է, որը ձմեռը լցնում են սառուցով ամառուայ գործածութեան համար։ 5) = հանգստանամք։ 6) հանրագիր։ = 7) անթիւք։) 8= Բօթիլ = շիշ (գինու և այլն)։ 9) Տուգանք։ 10) = Առնում։ 11) = Կնքով.

ԲԱՂԶԱԼՈՅԴ ԻՄՈՅ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Վ. ա ր դ ա պ ե տ ի ս ի ր ո վ ո ղ Ջ ո յ ն։

Գիրդ ընկալաք և իմացաք զինմայսն [1]) և ըստ այնմ լիսիին ծանուցի հարցն որք պատասխանեցին թէ մեք այդպիսիս չեմք խորհրդեալ ընդ նմայ և ոչ գրեցեալ ինչ. զի թէ մեր համակամ և բազմագումար ժողովմամբն չեղև ինչ որ զիմեցաք առ դրունս իւրեանց այլ վտանգեցաք և ինթիզամ ևս առեալ հաղիւ զերծաք ի ձեռաց։ Այս որպէս կարեմք այժմ խօսիլ այդպիսիս որ ի 24 ժամն աւուրն զանձն մեր ի վտանգի է։ քանզի 'քանիցս է որ զգուշացուցանեն զմեզ ի Երևանու թէ ամենայն լուսնագլուխ [2])

դաւանանդ այդ գրէ առ առտուանն իւր առ խանն և առ կինն վասն ձեր թէ երկուքս այսք խառնակեն աթոռս. արա սոցա չարիս և այլն։ Այլ խանն չլինի ունկնդիր, բայց դուք պահեցէք զանձինս ձեր ի չարէդ և այսպիսիք։ Վասն որոյ չէ հնար խօսիլ մեզ և թէ հարցցես հարկաւորի ասել մեզ խորամանկացն [3]) թէ սա է մերն [4]). զի զինչ այլ և ասելոց տեղիք գոյ. ոչ ապաքէ(ն) ընդ հանուրս յայտնի է որ անընդո(ւ)նակ [5]) է չիքս այս և բնաւ չէ ընդունելի մեզ։ Այլ թէ որպէս է այդ բանք մեզ չէ յայտ։

Արդ դոքա խորհամանկ պարսիկք են և դոցա խօսիցն ոչ գոյ հաւատարմութիւն այլ զինչ և խօսին սուտ երևին և մեզ այնպէս երևի զի թէ ի հիւսիսականաց [6]) պատերազմիւ և բռնութեամբ գլուխ չելանէ՝ չէ հնար այլովք լոկ խօսիւք վճարիլ ինչ։ Եւ այնմ ոչ երևի նշան արդեօք և յո(ւ)սաբեկ եմք ըստ ամենայնի։

Իսկ ձեր տուեալ պատասխանքն յոյժ հաւանելի է և ընտիր և թէ այլև դիպեսցին ըստ այդ պատասխանատրեսջիք։

Եթէ առնելոյ ինչ են այն է որ կառնեն և թէ ոչ զուր է զոր խօսին և լօխմանի [7]) վասն է։ Ձեր պատասխանի այս է որ թէ եկեսցեն. թէ կամիք շինութիւնն օճախին [8]) որն որ ձէրն է այնպէս արասջիք և այլն։

Ի կողմանէ չիք վրացուն չիմացաք ինչ և թէ որպէս է պօլսոյ բանքն և չիքն զինչ գործէ անդ. և ի Եփրեմ արքայն ևս չիմացաք թէ ուր է արդեօք ի Կայսերէն ողորմութիւն լինի թէ ոչ և թէպէտ ի յոհաննէս արքայն ընկալայ մասնաչափ գիր և յուսադրութիւն բայց չերևի նշանն գեռ։

Կարապետն մեք գնացեալ գիտեմք ի Թիլիզ և երևի թէ անդր է։

Կարբեցին և անտոնն անտեսանելի են ի փոքր. դազարապատի [9]). և պիճոն այդր է թէ այլուր չգիտեմք։

Վասն կնքոյն գրեալ եմ թէ երէցն չառնու յա(ն)ձն վասն երկիւղին թէ կարելի է մնասցէ և թէ ոչ հոգամք որպէս և իցէ ի գրելոյ։

Լեր ող ողջ (ողջ) ի սէր իմ Ռէթէոս։

Ի հոկտեմբերի 22 ի Ս. Էջմիածին։

Հարք Սուրբք ամենեքեան և Հայրդ ողջոյն ասան։
ղգու 10) քոզքն եթէ հարկաւոր է գրես յղեմ։

---

1)=ըզ ի նմայսն, այսինքն թէ նրա մէջ եղածները։ 2)=ամենագլուխ մահմետականների։ 3)=պարսիկներին։ 4)=մեր ընտրելին (կաթուղիկոսացուն)։ 5)=անընդունելի։ 6)=Ռուսներից։ 7) Մենք կարդումենք «լօխմայի վանն է», որ նշանակումէ՝ կաշառք առնելու համար է։ «Լօխման» ժողովրդին յայտնի համբաւաւոր Լոքման բժշկի անունն է, որ այս տեղումմիտք չունի։ 8)=Էջմիածնի վանք։ 9) Երկու հիւրատուն ունի Էջմիածինը՝ Ղազարապատ և փոքր Ղազարապատ։ 10)=սկիհ։

ՆԵՐՍԷՍ Վ(Ա)ՐԴԱՊԵՏ ՀՈԳԻՈՅՍ ՀԱՏՈՐ։

Ի յոգոստոսի քսան և հինգ գրե(ա)լ թուղթքդ ի Պետրպօրքու եկե(ա)լ թղթոյ օրինակաւն մեզ հասին և համայն գրուԹե(ա)նց ձերոյ վերահասու եղաք և թարգմանեալ զնոսա ընդ քանի մի օրինակաց անտի եկելոյ հասուցաք առ նորին մեծութիւնն 1)։ որպէս ուրախացեալ միշտ և հանապազ օրհնօղ է ձեր ամենեցուն երախտաւորացդ և մեր ամենեցունց պաշտպան եղելոցս։ փառք տարարչին մերոյ, որ մինչի կեաս գրոյս առողջ և ուրախ է միամիտ լերուք։ բայց միայն աչքն ի ճանապարհի է թէ արդեօք երբ իցէ նոցին փրկարար գալուստն զոր տէր յաջողեսցէ։ Դեկտ անուանե(ա)ն գեռ Երևան նստեալ է որպէս լուեալ իցէք եկեղեցին վերհարանի ի հիմանէ քակել ետ և տակն խորտցոյց որ մնաղաղայ լինի և վերայն կրկին եկեղեցի այնու պաշարե(ա)լ նստեալ է անդ։ Իսչքիլսի Սահակ վր 2) բերեալ է յաթռուս որ լուեալ իսկ էք։ Ռուսմելու գէորգն ևս սիւրկիւնով 3) յղեալ էր պատրիարքն։ այժմ ի յերևան է ընդ դեկ(ո)սին, տեսցուք այլ ինչ ունի առնել։ Թադէոս առաքելու 4) գէորքն ևս գրեալ էր որ մերձ ասուրքս գալոց է ի ռուրբ աթռուս ի տեսութիւն։ զինչ արասցեն խղճալիքն ճար և տէր չունին։ անիծեալ լինի փաշայն։ այժմ յոյժ տարաբութիւն ունի ի թշնամեաց։ Մշու փաշայն շատ նեղն է ձգեալ։ Ա-

տալն և այժ նեղէ, մեր խանէն զօրք էր ինդրեալ. խօստացաւ և ոչ եաւ, որ որպէս թէ մշու վաշայի վերայ պիտի գնայր։ Վ.ասն քօլու որդւոյն լուաք թէ մինչև ցթօխսթ գնացեալ է և անդ արգելեալ են. բայց Ճշմարիտն և սուտն հաւատեաւ չմնացաք։ Եկեսցուք Աբրահամ և յակօբ վարդապետաց բանն, մինչ ձեր գրեանքն եկեալ էր ես ի յերևան էի գնացեալ ըստ խնդրոյ մեկին [5]) մերոյ, մինչև իմ գալն ինքեանք յետ էին դարձեալ յետ աւուրց ինչ թուղթքն ինձ հասին աբրահամինն իւրն եռու և յակօբինն իւրեան յղեցի երևան. ընթերցեալ զթուղթս իւրեանց զմիտ բանին իմացան. բայց նոցա պատասխանն այս էր թէ այս հոկտեմբեր ամիսս անցանի տեսցուք որպէս լինի. յայն ժամանակն զոր ինչ պատասխանի ունիմք տալու՝ տացուք. և ես պատասխանեցի թէ դուք գիտեք՝ ձեր բանն ես չեմ խառնվիր որպէս կամիք այնպէս պատասխանի տուք։ Ի կողմանէ ընտանեացդ և որպիսութեանց նոցին ի հարկէ եկողքն պատմած լինին այլ մեզ չունիմք ինչ գրելու։ Ի ներկայս Բաղէշու բէկն մէկ գիր էր գրեալ նմայ թէ ի հնդկաց երկրէն մէկ ոևագլուխ եկեալ է ասդ արգելեցի ես։ Թէպէտ ինքն ասայ ես Լ.Ջմիածնի եմ՝ ես չհաւատացի թէ սուտ ասէ. այժմ ահա գրեմ՝ եթէ քո մարդն է գիր գրես մարդ յղես որ բաց թողնում—գայ. իսկ սա մելիք սահականն և չէչոտ Մարտիրոսն յղեաց ընդ նոսին թուղթ գրեաց, որ գնացին բերելու, այսպէս կարծեցին թէ յակոբ վարդապետն լինի, յետ նոցա գնալուն իմացաք որ Եվրեմ՝ սրբազանի փեսայ տէր Խաչատուրի եղբայր յօհաննէսն է լե(ա)լ։ Դեռ գնացողքն չեն եկեալ. այս և այսպէս իմաստիք։ Շուշտակ Կարապետ վարդապետի Վ.արդան տբեղայն և քանի օր է ինքնին եկեալ է ի Ղազապատն [6]) նստի։

Նաև՝ ձեր յղեալ յուսաջին իրքն որ երևանցի պարոն Գրիգորն բերաւ մէկ շատոյ խէյաթի [7]), և վեց ջուխտ սպիտակ ջորասն և Բարսեղի վասն ծնօղացն յղեալ պունօթին [8]): Իսկ կես լիտր պունօթի որ ընդ հեքիմ թաթուլին յղեալ էիր՝ այն և հասեալ է՝ որ ձեռամբ տէր յօհան քահանային սակաւ առ սակաւ հասուցեալ (եմ) Սրբազանին մերոյ. միամիտ լեր։ յետին յղեալ կէս

լիսոն և ընդ թղթոյդ հասին մեզ. յորմէ պեռ չեմ տուեալ, յերբ առաջին յղեալդ վերջանայ յայնժամ այն և հասուցանելոց եմ Նորին մեծութեանն, միամիտ լեր։ Իսկ ի զօրաց կողմանէ ոչինչ լուր չեղև մինչև յարդ, ահա հոկտեմբեր ամիսն և դուրս եկաւ, առատաւած ինքն մեզ և ձեզ ողորմեսցի. որ այդքան աշխատութիւն և ճգանք ձեր մի ելցէ թերևս 9)։ Ի վեր անդր յիշեցաք թէ մեր բարսեղն բռնօթի էր յղեալ բայց այն յառաջ էր որպէս ինքեան և գրեալ եմ յառաջ։

---

1) «Մեծութիւն» կաթուղիկոսական տիաղոս, գործ է գրուած Դանիէլի համար։ 2)=վարդապետ, 3)=աքսոր, 4) Թադէոս առաքելոյ վանք, 5)=մէկին, 6)=Ղազարապատ, այն է՝ Էջմիածնի հիւրատունը, 7) Շատտա Երևանի չափ է, մօտ կէս գրուանքայ կշռող, այժմ գործածութիւնից դուրս եկած, խէյաթի=ապրեշումի թել. 8)=քթախոտ կամ ընչախոտ, 9)=ի դերևս, ի զուր։

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

(Շարունակութիւն 1)։

Ծ.

Պարսկա-Ռուսական հայ գաղթականութեան ուսումնասիրութեան կարեւորութիւնը.— Հասրաթ Աւովմեանի յիշողութիւնները.—Խոյի եւ Սալմաստի քաղաքական դրութիւնը գաղթականութիւնից առաջ.—Սուլէյման խանի ապստամբութիւնը.—Հայ ժողովրդի տագնապը.—Գեղեցկուհիների ցուցակագրութիւնը.— Բիւրդիրի ապստամբութիւնը.— Ռուս — Պարսկական պատերազմական շարժումը— Ֆաթալի շահի զայրոյթը հայերի վերայ —Հայերի դէմ բաբաց դիմաւորումն Ռուսաց զօրքին եւ զոհաբերութիւնը.—Գաղթականութեան քարոզիչները.—Գաղթելու պատրաստութիւնը եւ չու.—Գաղթողների նիւթական դրութիւնը ներկայում եւ ապագայում.—Աղոխանեանի յիշողութիւնները.—Դարալագեազի այն ժամանակի դրութիւնը,—Գաթականների զոհեղուիլը եւ փոխադարձ յարաբերութիւնը տեղական թուրքերի հետ։

Այսքան երկար ժամանակ ինձ զբաղեցնող Դարալագեազը, ինչպէս նախընթաց գլուխներից երեւաց, մշակուում է գլխաւորապէս հայ գաղթականների ձեռքով։ Նորանց ձեռքով մշակուում է ոչ միայն Դարալագեազը, այլ եւ Շարուրը, Նախիջեւանի եւ Երեւանի գաւառները։

Անխոնջ աշխատութեամբ եւ երկար տարիների ընթացքում ձեռք բերած նիւթական կարողութիւնները դէն ձգելով Պարսկաստանում եւ միմիայն ջլաս ձեռքերի վերայ յոյս դրած, պարսկահայ գաղթականներն անցան Արաքսի ձախ ափերն՝ նոր հայրենիք եւ նոր տնտեսութիւն հաստատելու։

Այսօր նոքա մշակում են ընդարձակ հողեր, ունկած ունին

---

1) Պ. Քաջբերունու այս աշխատութիւնից, որ երկար ժամանակ տպւում էր «Փորձ»-ում եւ վերջին տարիներս «Արարատ»-ում մնացել է երկու գլուխ միայն, որն եւ հրատարակում ենք։ Ծ. Խմբ.։

լայնատարած այգիներ և անտառներ, պարապում են անասնապահութեամբ և մեղուաբուծութեամբ, հասել են տնտեսական փոքր ի շատէ գոհացուցիչ բարօրութեան և մասամբ մտաւոր զարգացման և այդ բոլորը կատարել են նոքա մօտ քսան տարու ընթացքում:

Վաթսուն տարի առաջ մի բազմաթիւ ժողովուրդ ձգելով իւր կոյքը և հայրենիքը՝ գաղթել է մի պետութիւնից միւս պետութիւն, մի կլիմայից միւսը և այսօր ներկայացնում է իբրև արդէն կազմակերպուած համայնք, իսկ մենք դեռ և-ս չը գիտենք այդ գաղթականութիւնը յաջողցնող պայմանները, գաղթելու միջոցները, առաջին նուագ նոր հայրենիքում քաշած նեղութիւնները, միով բանիւ գաղթականութեան մանրազնին պատմութիւնը և չը գիտենք այն ժամանակ, երբ գաղթականութիւնը կատարուել է մեզանից ոչ հեռու ժամանակ և գաղթողներից շատ շատերը դեռ և-ս կենդանի են, դեռ և-ս խօսակցում են մեզ հետ և որոնք ուրեմն կարող էին տալ մեզ իւրեանց մասին մանրամասն տեղեկութիւններ: Սակայն մենք անուշադիր ենք այդ հանգամանքի վերայ, չենք տեսնում ոչ այդ կենդանի պատմողներին, ոչ նորանց անցած ճանապարհը, ոչ նորանց կենցաղավարութիւնը հին և նոր հայրենիքում:

Ես լիովին միջոց ունէի հարց և փորձ անել յիշեալ գաղթականութեան կենդանի վկաներին Դարալագեազում, Շարուրում և Նախիջևանի գաւառում, բայց ափսոս որ խիստ խորասուզուելով հնասիրական և աշխարհագրական նիւթերի մէջ, ես սկզբում աչքից փախուցի այդ կարևոր գործը և մոռացուեցի այն ժամանակ, երբ արդէն ուշ էր, երբ արդէն ստիպուած պէտք է թողնէի յիշեալ երկրները և շտապէի ծառայութեամբ դէպի վերջին Ռուս-Տաճկական պատերազմի դաշտը:

Բայց և այնպէս աւելորդ չեմ համարում հաղորդել հետևեալ տեղեկութիւնները յիշեալ գաղթականութեան մասին, որոց մեծ մասը գրել է իմ խնդրանօք Ազատակ գիւղի ծխատէր Սիմէօն քահանայ Կոստանեանը իւր համագիւղացի եօթանասնամեայ Հասրաթ մահտեսի Դանիէլեան Ատովմեանի յիշողութիւններից և

փոքր մասը գրել եմ ես Քեշիշքեանդցի Բէգլար Աղախանեանի յիշողութիւնից։ Նախ՝ յառաջ եմ բերում այստեղ Հասրաթ Ատոլմեանի պարզ պատմութիւնը։

«Ես, Հասրաթ Ատոլմեանս, ծնուել եմ 1807 թուականին Սալմաստ գաւառի Սարամերկ գիւղում։ Մեր գաղթելու շրջանում Պարսից պետն էր Ֆաթալի շահը։ Խոյ քաղաքում նստում էր նորա կուսակալը (սարդար) Ամիր խանն, որ շահի ազգականն էր և նորա դուստրը հարսնացրել էր իւր որդուն։ Սակայն մեր գիւղի անմիջական տէրը, իբրև կալուածատէր և կառավարիչ, էր Սուլէյման խանի որդի Աթամ խանը, որ նոյնպէս բնակւում էր Խոյ քաղաքում։ Բացի մեր գիւղը, Աթամ խանին պատկանում էին և այլ գիւղեր, Շոչէ, Օրբաան, Սո-լա-, Եղբ+էան, Ղաբա-Ռափայ, Շա+էարբեաղի, Մալլաջնո-ա, Կանի-գայնի, Կա-այ և այլք, թէ Խոյի և թէ Սալմաստի գաւառներում։ Մեր գիւղը, բացի Աթամ խանից և նորա ծառաներից, այլ և ուրիշ հարկապահանջ շահի կողմից չէր ճանաչիլ։

Սարամէրկ կամ Սարամերիկ գիւղն ունէր 250 տուն հայ լուսաւորչական, մի փայտեայ եկեղեցի և երեք քահանայ։ Բացառութեամբ մի քանի տներից, բոլոր երկսեռի բնակիչներն և կատաւգործներ էին։ Իւրաքանչիւր տնէտ տան և հինգ տարեկան հասակից վեր իւր կատաւգործութեան հորի համար տուանձին հարկ էր վճարում Աթամ խանին։ Իսկ 15 տարեկանից փոքրը ազատ էր նորա հարկից։ Ազատ էր նոյնպէս ով չը գիտէր կատաւգործութեան արհեստը։ Այնտեղ, մեր հասարակաց հարկերն էին հետևեալը.

ա) Գլխահարկ . . մի թուման (2 ռուբլի 50 կոպ.)։
բ) Կատաւգործի հոր. . մի թուման։
գ) Ծուփի հարկ . . մի ռէալ (30 կոպ.)։
դ) Կթան կովի հարկ . մի ռէալ։
ե) Կթան գոմէշի հարկ . մի ռէալ։
զ) Մատակ ձիու հարկ . մի ռէալ։
է) Մի տրօրի գարմանի հարկ տասն ռէալ։

բ) Երկրագործութեան ամեն տեսակ արդիւնքից և խոտից . . . 3/10 բաժին։
թ) Իւրաքանչիւր տանից տարին վեց տարակ (հնձող մշակ)։

Սորա էին մեզանից պահանջելի տարեկան բոլոր հարկերը։ Այլ և ուրիշ տեսակ հարկեր չկային ոչ վաճառականութիւն անելու, ոչ խանութ պահելու, ոչ գինի, օղի և կամ ծխախոտ ծախելու և այլն։ Հնձելու ձին նոյնպէս ազատ էր հարկից, ըստ որում արգելուած էր որձ ձի պահել։ այդ մի տատանձին արտօնութիւն էր, որ վայելում էին Պարսից մեծամեծները։ Մեր գիւղումն միայն Մելիք-Սիմէօն Աստվածատուրն էր, իմ հօրեղբայրը, որ միշտ ձիով կը շրջէր և ձիով համարձակ կը գնար խանի մօտ և կը խօսէր նորա հետ։

Սիմէօն Աստվածատրի վստահութիւնն և ազդեցութիւնն այնքան շատ էր, որ երբ խանին մատնել էին իմ մասին, իբրև թէ ես 15 տարեկանից վեր եմ և կատարագործութեան արհեստիս համար պարտաւոր էի հարկ տալ խանին։ Ինձ հետ մատնուած էին և մի քանի այլի կանայք մեր գիւղից։ Այն ինչ այն ժամանակ ես դեռ 12 տարեկան էի, իսկ այլի կանայք արհեստ չը գիտէին։ Աստվածատուրը համարձակութեամբ գնաց Սմիտամ խանի մօտ և վստահ վիճաբանութիւնից յետոյ մեղմացրեց խանի սիրտը և ազատեց հարկից ինձ և այլի կանանց։

Այս հանգամանքը պատմում եմ նորա համար, որ ցոյց տամ թէ Պարսկաստանում հարկապահանջութիւնը և հարկից ազատուիլը կախուած էր դէպքից և հանգամանքից։ Սորա հետ՝ երկրի կացութիւնը, ապրուստի և կեանքի անապահովութիւնը ցոյց տալու նպատակով՝ ես պատմեմ ձեզ մի պատմական միջնադէպը, որ լսել եմ իմ հօրից, մահտեսի Դանիէլ Աստվածատրից։

Սուլէյման խանը պարսկական զօրքով բանակ դրեց Ալմանատ գաւառի Դրիչկ գիւղի լայնատարած դաշտի վերայ։ Օրլոյ գեղի

ձախ ափում՝ և հրաժիրակ ուղարկեց Հովդարայ ամրոցի քիւրդ մեծաւորին՝ Շահաբաս բէգին՝ հնազանդութեան գալ նորա մօտ։ Հովդար ամրոցը՝ Սալմաստի հիւսիսակողմում՝ գրած էր Բաբարզան լեռնագօտու լանջի վերայ և այս պատճառով ամրոցը Բաբարզանի կողմից անմատչելի էր։

Բերդապահին հնազանդութեան բերելու մի քանի անգամ փորձ փորձելուց զկնի՝ Սուլէյման խանը պաշարեց ամրոցը երեք մատչելի կողմերից։ Սոյն պատերազմից խիստ չարիքներ ապատելով իւրեանց համար՝ մեր գիւղացիները ապաւինեցին իւրեանց սահմանակից բարձրութիւններին՝ ոմանք Թագնուեցան լեռների խորշերի և այրերի մէջ՝ ոմանք փախան մինչև Աղբակ գաւառը։

Մեծ յոյս չունենալով իւր սակաւաթիւ զօրքի վերայ՝ ամրոցապետ Շահբաս բէգը մտածում էր հայերի օգնութեամբ դէմ դնել Սուլէյման խանին՝ ուստի յորդորում էր Մելիք-Սիմէօնին իւր ժողովրդով հանդերձ գալ պատսպարուել Հովդար ամրոցում։ Իսկ Սիմէօնը՝ ընդհակառակը՝ խորհուրդ էր տալի ժողովրդին՝ որ մօտ տասն գիւղի բնակիչներ էին՝ փախչել Աղբակ գաւառի խանիկ գիւղը՝ Արնաւուլ լերան վերայ։ Որովհետև Մելիք-Սիմէօնը խանիկ գիւղում ունէր արտեր՝ ուստի ժողովուրդը խրտնեց նորա առաջարկութիւնից՝ ասելով որ «Սիմէօնի ցանքերը այնտեղ հասած են՝ մեզ տանում է հնձել տալու»։

Մի կողմից ժողովրդի խանիկ գնալուց հրաժարուիլը՝ միւս կողմից բերդապահի հրաւիրելը՝ ստիպեցին Մելիք-Սիմէօնին ընտրել վերջինիս ստիպողական առաջարկութիւնը։ Մելիք-Սիմէօնը ժողովրդի հետ տարաւ և իւր ընտանեաց կէսը՝ թողնելով միւս կէսը խանիկ գիւղում։

Հայ ժողովուրդը Մելիք-Սիմէօնի առաջնորդութեամբ հասաւ ամրոց այն միջոցին՝ երբ Սուլէյման խանի զօրքը արդէն հասել էր շրջապատելու ամրոցը։ Դորա պատճառով ամրոցի փակ գրոները անկարելի էին համարում բանալ ներսից և հայ ժողովուրդը ստիպուած էր մի կողմից անդրադարձնել Պարսից զօրաց

յարձակումն իւր վերայ, միւս կողմից թոկերով բարձրացնել ամրոցի պատերից մարդ, տղայ, կին և աղջիկ։

Այդ միջոցին, անհաւասար կռուի մէջ, որ տևեց առաւօտից մինչև երեկոյ, հայերից շատերը սպանուեցան, շատերը գերի ընկան, բայց և շատերին պարսիկներից սպանեցին։ Շատ ականատեսներ, թէ հայ և թէ քիւրդ, պատմում էին հայ կորիճների և Սիմէօնի քաջութիւնները։ Վերջինիս համար ասում էին, որ միայնակ 40 մարդ է սպանել, թէ սրով և թէ հրացանով։

Երբ Մելիք Սիմէօնը ամենից յետոյ ամրոց բարձրացաւ, յանկարծ նկատեց, որ իւր մեծ որդին, Փոխան անուն և սրա կինը չը կան։ Ականատեսներից ստուգուեցաւ, որ Փոխանը կռուի մէջ սպանուել է, իսկ նորա կինը գերի ընկել։ Սիմէօնը այնքան դայրացաւ, որ նորից սկսեց հրացանաձգութիւն պարսից դէմ։ Ասում են, որ բերդապահի կանայք հրացանները լցնում էին, իսկ Սիմէօնը դադարկելով գետին էր գլորում պարսիկներին։

Վերայ հասաւ երեկոյն։ Անհեռատես և վախկոտ բերդապահը, տեսնելով պարսից շատութիւնը և իրայինների սակաւութիւնը և կորցնելով իւր աղատութեան յոյսը, մնաւանդ երկար դիմանալու ուտեստի և պատերազմելու պաշար չունենալով, նա իւր երկու կանանց, զաւրանը ձեռքները տուած, մօլլայի ուղեկցութեամբ, ուղարկեց Սավէյման խանի ոտքը՝ հաշտութիւն խնդրելու։ Խանը խոստացաւ կատարել կանացի դեսպանութեան խնդիրը երեք պայմանով. ա) Բերդատէրը պատանդ տայ խանին իւր մեծ որդին, բ) վճարի պատերազմի ծախքը երկրի բերքերից և հարկերից և գ) տայ նորա ձեռքը բերդի միջի բոլոր հայերին։

Այս երեք պայմանով, երբ կանայք գիշերը վերադարձան ամրոց, Շահաբաս բէգը խորհրդի հրաւիրեց իւր մեծամեծներին և Մելիք-Սիմէօնին։ Միաձայն հաւանութեամբ վճռեցին, որ բոլորն էլ փախչեն ամրոցից, քան գերութեան մնանին, ըստորում պայմանները շատ ծանր էին։ Մելիք-Սիմէօնը ընտրելով հայ կրտրիճներին, ներս առաւ միւս ժողովուրդը, ընդամէնը մեծ և փոքր մի հազար հարիւր յիսուն հոգի և զգուշութեամբ գիշերը դուրս

գնացին ամիսներից։ Երկրի դիրքը, սար և ձոր, ժայռ և անտառ, բոլորը քաջ ծանօթ էր հայերին, ուստի նոքա մինչև լուսաբացը հասան Զարբհոթուն և Դուզաղ լեռանց բարձրութիւնները։

Առաւօտը Սուլէյման խանի զօրքը նկատեց, Հսմապարայ ամրոցը խարին լռութեան մէջ է։ Ահի և դողի ապդեցութեան ներքոյ զգուշութեամբ մօտենում են ամրոցին և տեսնում են, որ բոլոր իրերկէնները ցան և ցիր ձգած, մարդիկ անհետացել են յայտնի չէ ուր։ Այս անակնկալ դէպքից խորը զայրացած, Սուլէյման խանը ժողովում է Հսմապարի ձգած իրերկէնները և վերադառնում է Ատրպատական, տանելով իր հետ այս և այնտեղ ձեռքն ընկած գերիները, թուով մինչև 700 հոգի։ Իսկ ճանապարհին պատահած շէնները, ցանք և հունձերը քանդում և այրում էր, ամոյի դարձնելով ամենայն տեղ։

Սուլէյման խանի վերադարձից յետոյ տակաւ առ տակաւ երկիրը խաղաղուեց, ժողովուրդը քիչ քիչ դարձաւ իր փախուստից, բայց ապրուստի միջոց չը գտնելով ամայացած երկրում, ստիպուեցաւ ապմուերկիներով ոնանգ առնել, տալով մահուան շատ դէպքեր։ Այդ ժամանակ Վարդանայ գիւղի բլուրների վերայ անձրևի նման տեղայ մանանայ, որ ոռմալլուկ ժողովուրդը պարկերով հաւաքում էր և ուտում։

Սուլէյման խանը իր ատրպատականութեան միջոցին ոտառնայ նաև Ատրպատականի տէր Ջաֆարկուլի խանին, որի հպատակ ժողովրդի մեծ մասը, ապաստանելով նորա դէմ, անցաւ Սուլէյման խանի կողմը։ Ջաֆարկուլի խանը տուաւ իր հետ հաստատրիմ մնացած ռակաւաթիւ ժողովուրդը, նոյնդէս և հայերին, մահմեդական ձևի փոխելով սոցա զգեստը՝ որպէս զի չը ճանաչուին մահմեդականներից և հաստատախութեան չը բռնաբարուին, գնայ բնակուեցաւ Շիրուանում (Շամախու սահմանում)։

Այսպիսով Սուլէյման խանը տիրապետեց Ատրպատականը, մինչև Թէհրանի Բաբախան Ատրպատը, Դերբինի Ազամանդ շահի եղբօր որդին, Պարսից գահը բարձրացաւ Ֆաթալի շահ անունով։

Այս շահի օրով էլ հայերը չը կարողացան ազատ շունչ քաշել։ Եւ հոգիս ուզի տարեկան կը լինէին, որ շահի հրամանով

մարդիկ շրջում էին հայ գիւղեր և յուցակագրում էին գեղեցիկ աղջկանց (Ղըզ-եաղան)։ Ի՞նչ սարսափ և իրարանցում էր տիրում այդ միջոցին հայերի մէջ։ Ամեն ոք աշխատում էր թագցնել իւր դուստրը թէկուզ և ագեղ։ Ղըզ-եաղանները կամ իւրեանք գիտէին սիրուն աղջկանց տեղերը կամ իմանում էին ծածուկ մատնողութեամբ։ Յուցակագրուած գեղեցկուհիները պէտք է գնային Ֆաթալի շահի հարամխանան։

Այս չարախորհուրդ կարգադրութիւնից ազատուելու միակ ճանապարհը հայերի համար մնաց շուտով ամուսնացնել իւրեանց աղջկանց։ ուստի խորութիւն չը գրին երիտասարդ աղջկանց մեծահասակ կամ այրի աղամարդկանց մէջ, հարուստ աղջկանց և աղքատ դասակարգի աղամարդկանց մէջ և այլն, միայն թէ աղջիկ չը մնար տանը։

Իմ տատամեայ հասակումս, նոյն Ֆաթալի շահի օրով, ոչ սակաւ չարիք հասաւ մեր Պալմասաս հայ ժողովրդին քիւրդերի ասպատակութիւնից։ Հարայ ամրոցի տէրն այդ ժամանակ Ջաբարայ բէգ քիւրդ ցեղապետն էր՝ Օսման ազայի հետ միասին։ Շահի զօրքը մեր Պթամ խանի առաջնորդութեամբ, ուստ մայօր Սամսոնի և Խուսֆ խան պարսկի հետ, յարձակուեցան Հարայ ամրոցի վերայ և մեծ կոտորած անելով թէ իւրեանցից և թէ քիւրդերից, վերադարձան Պալմասաս։ Սորանով գրգռեցին քիւրդ ցեղապետ Ջաբարայ բէգին և Օսման ազային, որոնք իւրեանց բոսանիներով յանկարծուստ թափուեցին Պալմասաս գաւառի վրայ։

Այս պատահեց ամառը, հնձի ժամանակ, երբ գիւղացի հայ հողագործ դասակարգը ցրուած էին իւրեանց անդերում։ Զանազան հայ գիւղերում և շրջակայքում շատ հայեր ողանուեցան և շատ ուժ տարուեցան։ Որ հայ կարիճները ունէին քաջ առաջնորդ, այնտեղ քիւրդերը քիչ վնաս հասցրին, մինչև անգամ ինքեանք մեծ վնաս կրեցին։ Օրինակ՝ Մահլամ գիւղում Մելիք-Այօ խուգամերգեանը իւր կարիճների հետ շատ քիւրդեր ոպանեց և շատերին փախցրեց, հեռացրեց իւրեանց գիւղից։ Իւրաքանչիւր հայ գիւղ ոտիպուած էր ինքն իւրեան պաշտպանելու, ըստ որում պետական զօրքերից յոյս չէր մնացել։

Ահա այսպիսի խարխուլ վիճակի մէջ էին Սալմաստ և Խոյ գաւառները, իւրեանց հայ բնակիչներով, երբ սկսուեց 1827 թուին Ռուս-Պարսկական պատերազմը։ Ռուսն արդէն հասել էր Նախիջևանի սահմանները և մենք, յիշեալ գաւառների հայերս, ոչ միայն ապահովութեան յոյս չունէինք, այլ և փոքր էր մնացել զոհէինք մեր կեանքը Ֆաթալի շահի զայրոյթին։ Հէնց որ լուր տարածուեց թէ Նախիջևանի տէր Բեալբալի խանի որդի Էքսան խանը, առանց դիմադրութեան յանձնել է Աստապատի ամրոցը ռուս զօրապետին և Արաքսի ափերն արդէն բաց են յառաջ խաղացող զօրքի առաջ, Ֆաթալի շահը խիստ զայրացաւ և ռուսաց գալը վերագրելով իւր հպատակ հայերին, կարգադրեց կոտորել սորանց։

Երբ ձեռին փայտ բռնող (ալը դականագլի) զօրքերը Խորասանից եկան թափուեցին Խոյ գաւառը, մեր Ամամ խանը ուրբհանգակի ձեռքով թուղթ ուղարկեց իմ հօր եղբօրը, Մելիք-Սիմէօն Աստվածանին, թէ հաւատակիցներիդ շահի բարկութիւնից ազատելու համար փախցրու մի ապահով տեղ, մինչև տեսնենք թէ ինչպէս ենք անդորրացնում շահի սիրտը։ Մեր գիւղացիք և մեզ հետ շատ հայ գիւղեր, Վարդանայ, Շորիկ, Օրբան և ուրիշները, փախան մինչև Զարբոսթուն և Կուտայ լեռները։ Այս էր ամառը, հնձի ժամանակ։

Երեք օրից յետոյ, նոյն Ամամ խանից եկաւ մեզ մի նամակ շահի ներողամտութեան համբաւը բերելով։ Շատ յուսնածութիւնից, նեղութիւնից և սովից յետոյ, մենք լեռներից վերադարձանք, բայց ոչ թէ մեր գիւղերը, այլ դեռ ևս վստահութիւն չունենալով շահի ներման վերայ, մնացինք Զիլագ թրքաբնակ գիւղում մինչև տան և հինգ օր։ Վերջապէս հաւատացանք, որ հիշդ է շահի խոստումը և թէ դարձնում մենք պարտական էինք շահի որդու, Նայիբ Սանթանայ, Աբբաս Միրզայի միջամտութեանը։

Անցաւ այդ ամառը, նորա հետ բաղարեց և այդ տարին։ Հետևեալ գարնանը հէնց որ սա կոխինք Մայիս ամիսը, առաջին լուրերը թէ «ռուսն եկաւ» էր իմ հօր եղբայր որդի Մնացական

Տէր-Պետրոսեանը, որը այդ ժամանակ սարբազ (զինուոր) էր Պարսից զօրքում։ Կայծակի արագութեամբ լուրը տարածուեց բոլոր գիւղերում։

Տէր Աստուած, ինչ իրարանցումն էր, ինչ խռնումն, ինչ շարժում Սարամերիկ գիւղում։ Ոտ ոտ Խոյ և Սալմաստ գաւառները տանող Ճանապարհի բերանն էր։ Իսկոյն խմբուեցան բազմաթիւ հայ ժողովրդականք, ոտքա գլուխն անցան տեղական հայ հոգևորականք խաչ և խաչվառներով, շուրջառ և բուրվառներով, երգեցողութեամբ գլխաբաց ընդ առաջ ելանք Ռուսաց զօրքին։ Առաջին անգամ էր, որ գլուխ խոնարհեցրին երիսպանեաց եղիսաբներին, ջրտերին և ջրապետներին։ Ժողովրդականք մատուցին իւրեանց նուիրական զոհերը, մորթելով զօրքի առաջ հարուստները՝ եզներ և արջառներ, իսկ չունևորները՝ ոչխարներ։ Կային և այլ տեսակ նուիրատուութիւնք։

Ռուս զօրքը Սարամերիկից անմիջապէս անցաւ գնաց Դիլիման քաղաքը, ուր բաժանուելով բաժիններին, ցրուեցին դէպի Թաւրիզ, Ղազվին, Ղազիանթու և այլն։

Այդ երկրները գրաւելուց յետոյ՝ սրգէն բարձրացաւ գաղթականութեան խնդիրը։ Վերջինով զբաղուած էին իշխան Մովսէս երկայնաբազուկ Արղութեան և Եղիազար աղայ Լազարեանց, որոնք փոփոխակի գալիս էին մեր գիւղը և յորդորում էին հայերին գաղթել պարսկաստանից Ռուսաց նորանուաճ երկիրը, Արաքսի ձախ ափերը։ Յայտնում էին, որ ռուս զօրքը դուրս է գալու այս երկրից, Խոյ և Սալմաստ գաւառները Ատրպատականի հետ մնալու են Պարսից գերիշխանութեան ներքոյ։ Յիշեալ պարոնների հետ եկել էր և Նախիջևանցի Թադէոս քահանան, որ եկեղեցիների բեմից շարունակ յորդորում էր ժողովրդին գաղթել։

Իշխան Արղութեան և աղայ Եղիազար Լազարեան բնակութեան տեղ ընտրել էին մեր գիւղում Մելիք-Սիմէոն Ատոմեանի երկյարկանի տունը։ Շատ անգամ ամբողջ օրերով շրջում էին զանազան գիւղեր գաղթելու միտքը տարածելու և կրկին վերադառնում էին մեր գիւղը։ Երբեմն մնում էին Հաթուան գիւ-

զում՝ Մելիք-Ալոյի տանը և կամ՝ փայաջուկ՝ Մելիք-Մկրտչի տանը։ Մելիք-Մկրտիչը շատ ազգեցիկ և շահից արտօնեալ մարդ էր՝ Դիլիմանն քաղաքի ազգային խառն դատարանի անդամ էր։

Մենք չը տեսանք՝ բայց լսեցինք՝ որ Ներսէս Սրբազանը (վերջումն Կաթուղիկոս) եկել է Սալմաստի Հին քաղաքը (Քեօհնայ շըհար) և նոյնպէս քարոզում է հայերին գաղթել։ Գաղթականութեան խնդիրն այնքան արծարծուեց և տարածուեց՝ որ արդէն մեծ բազմութիւն պատրաստուեց գաղթելու Խոյից՝ Սալմաստից՝ Որմից՝ Թաւրիզից՝ Մարաղայից՝ Սօմնայից՝ Բրագօստից և այլ տեղերից։ Գիւղերի մեծ մասը գաղթեց՝ փորրամասնութիւնը մնաց։ Մեր գիւղի 250 տանից հազիւ 10—15 տուն չը գաղթեց։ Եւ ի՞նչպէս չը գաղթէին՝ երբ քարոզիչները այնպիսի բարերար խոստումներ էին տալի մեզ՝ որ մենք երևակայութեամբ հիանում էինք։

Պարսից իշխանաւորները գոհ չէն հայերի գաղթելուց և դէպքը բերած ժամանակ բանակցում էին ազգեցիկ հայերի հետ։ Մեր Ամամ խանը մի յորդորական նամակ ուղարկեց Մելիք-Սիմէօնին՝ խոստանալով նորան առաւել մեծ պատիւ և արտօնութիւն և ասկման ազնուութիւն՝ միայն թէ ինքը յետ կանգնի գաղթելուց՝ ըստ որում նա անձամբ կարող էր պատճառ դառնալ շատերի գաղթելուն։

Այս առաջարկութեան վերայ Սիմէօնը մտադրուեց չը գաղթել՝ բայց նորան ընդդիմացան ժողովրդականք և նորա հինգ որդիք՝ մանաւանդ նորա քաջ և նշանաւոր Կոստան որդին՝ որ հօրն ընդդիմանալով՝ ասում էր՝ «ես խօսք եմ տուել Մովսէս իշխանին և ազգայ Եղիազարին՝ այլ և ես կարող չեմ մնալ Պարսից իշխանութեան ներքոյ՝ թէկուզ խանութիւն անգամ խոստանան։ Մենք նորանց սատիսօսութիւնը վաղուց ենք լսել՝ խոստանում են և չեն կատարում։ Ռուսը նորանց պէս չէ՝ Մովսէս իշխանը ինձ հաստատեցրել է՝ որ գաղթելուց յետոյ ինչ որ մեր սիրտը ուզի՝ ռուսը կը տայ մեզ անվնաս և լիուլի»։ Իւր որդւոյ և ժողովրդականաց սահմանները դիջանելով՝ Մելիք-Սիմէօնը անձնատուրացած համաձայնեց գաղթելու։

Ամիսամ խանը Սիմէօնի վճռականութեան մասին շատ յուսեց և չը կամենալով առանց պարգևի ճանապարհ ձգել նորան դէպի ուրիշ Պեռսութիւն, նաև ուղարկեց Սիմէօնին մի լաւ ձի, կարմիր մահուդից շորիկ (լայն բինիշ) և մի քանի թանգագին ամաններ ուտելիքների և ըմպելիքների։ Սիմէօնը և իւր կողմից պարգևագրեց ընծաներ բերող պարսկին ոսկիներով և հագուստներով։

Թէ այսպէս և թէ այնպէս, գաղթականութեան շաժումն սկսուեց, բայց ոչ միանգամից և ոչ միահամուռ, այլ բաժին բաժին և միջոց առ միջոց, այն և ուսներից գրաւուած երկրներից։ Թէպէտ շատ էինք տանջուել պարսիկների ձեռքում ինչպէս վերը յիշեցի, թէպէտ երևակայութեամբ և տարագոյ յոյներով մանաւանդ քարոզիչների առաջ խոստումներով ուրախանում էինք, որ գնում էինք քրիստոնեայ տէրութիւն, բայց մի կողմից մեր ծննդավայրից յաւիտեան հրաժարուիլը, միւս կողմից տարագոյի անյայտութիւնը մեր սիրտը ճմլում էր։

Զունևոր դասակարգը առաւել հեշտութեամբ էր թողնում իւր աղքատիկ տունը, տեղը, երևակայելով այն վարդագոյն բարօրութիւնը, որ Մոմէս իշխանի և ազգ Եղիազարի խոստման համաձայն, նոքա պէտք է ստանային իւրեանց նոր հայրենիքում։ Սակայն ունևորների դրութիւնը շատ ծանր էր։ Նոքա թողնելու էին իւրեանց հարստատ կալուածքը — հողերը, այգիները, տները, ջրաղացները։ Օրինակ, Սիմէօն Աստուածատուր թողեց իւր մեծատարած այգին, զոյգ ջրաղացները, մեծ տնտեսը, բերքի տարատեղերը և նշանաւոր շինութիւնները։

Հարստահարներին համոզելու և նորանց ձեռքով գաղթականութիւնը յաջողցնելու նպատակով, իշխան Մոմէս Արղութեանը և ազգ Եղիազար Լազարեանը առաջուն շուայլում էին իւրեանց խոստումները, որ իբրև թէ Ռուսաց տէրութեան հայ գաղթականն ժողովրդին ապառում է և տուն և տեղ և հող և ջրաղաց և հարստութիւն և փառք և պատիւ և հանգստութիւն և հարկերից ազատութիւն և այսուհետև իբրաքանչիւր զրկանքի և կրաստի փոխարէն նոքա կստանան Ռուսաց իշխանութիւ-

նից հնգապատիկ և տասնապատիկ։ Յայտնի բան է, այս խոստումները բանաւոր էին և ոչ գրաւոր։ Իսկ մենք, շատերս գաղթականներից, որքան եմ հաւատում էինք բոլոր խոստումներին։ Լիսվի յայտերով գաղթած մելիքները, երկու ամբողջ տարի չը գանելով յիշեալ իշխանների խոստացածները, կորուած սրտով նորից վերադարձան իւրեանց հին հայրենիք։ Օրինակ՝ Հաթուանցի Մելիք-Ալօն, Փայաջուկցի Մելիք-Մկրտիչը և ուրիշ շատերը։

Գաղթող ընտանիքներից շատերը միանգամից չէին ձգում իւրեանց նախկին ծննդավայրը, այլ մի երկու հոգի մնում էին իւրեանց ունեցածի մնացորդը պահելու, մինչև վերջնական գաղթիլը։ Եւ որ այդ միջոցին 20—21 տարեկան երիտասարդ էի, նոյնպէս մնացի մեր տան մնացորդը պահելու և առանց ոչ ոքից մի նեղութիւն կրելու՝ շարունակում էի իմ կատարագործութիւնը։ Այդ է պատճառը, որ ես չը գիտեմ և չեմ կարող հաղորդել թէ գաղթականները ճանապարհին և առաջին նուագ իւրեանց նոր հայրենիքում ինչ նեղութիւն են քաշել, ինչ պատահարների են հանդիպել և այլն և այլն։

Սարանով վերջացնում է իւր յիշողութիւնները Հարութ մահտեսի Դանիէլեան Ատոմեանցը։ Այժմ յառաջ եմ բերում Գեղիշքեանդցի Բէգլար Ազատանեանցի յիշողութիւնները։

«Երբ ռուս զօրքը նուաճեց Խոյ և Սալմաստ գաւառները, այնուհետև Իշխան Մամէս Արղութեան և Աղբակու տարը Բարթուղիմէոսի վանքի վանահայր Խորայէլ վարդապետը սկսեցին անդադար շրջակայել հայ գիւղերը և քարոզել հայ ժողովրդին գաղթելու միտքը։ Արղութեանի տեղով մի քանի այլ քահանայք և վարդապետներ նոյնպէս քարոզում էին միւս գիւղերում։ Քարոզների մէջ յիշատակում էին շատ բարիքներ, որ պէտք է վայելեն հայերը գաղթելուց յետոյ։

Քարոզիչները ցուցակագրում էին գաղթելու ցանկացողների ազգանունները և խոստան յայտնում էին Իշխան Արղութեանին Դիլիման քաղաքում։ Դէպքը բերած ժամանակ, պարսիկ իշխանաւորները, ընդհակառակը, համեղում էին հայերին մնալ իւրեանց տեղում՝ խոստանալով նորանց ամեն տեսակ ապահովութիւն, հեշ-

սութիւն և հարկերի նուազումն։ Մինչեւոյն ժամանակ հաստատացնում էին հայերին, թէ ռուսը սկզբում կը հրապուրի, կը գաղթեցնի, բայց վերջը իւր խոստումները չի կատարիլ, կը փնտրի և նորանց կանանցը ֆանա-ղկայ կը շինի։ (անառակ մոքով)։

Հայ իշխանների և հայ հոգևորականների քարոզութիւնը սևեց գարնանից մինչև միւս գարունը։ Աղքատիկ դասակարգը հեշտութեամբ էր համաձայնում գաղթել, իսկ հարուստները, կալուածատէրերը — դժուարութեամբ։

Մի քանի մարդիկ կանխապէս գնացին Նախիջևանի և Երևանի գաւառները ապագայ բնակութեան տեղեր զննելու։ Բիւրդստանցի անասնապահները իւրեանց համար յարմար համարեցին ընտրել Դարալագեազի լեռները։ Հողագործ դասակարգը ընտրեց Նախիջևանի և Երևանի ընդարձակ դաշտավայրերը, իսկ արհեստաւոր և փոճառական մարդիկ գերադաս համարեցին քաղաքների շուրջը։ Տեղեկատուները վերադառնալով Պարսկաստան, պատմում էին Նախիջևանի, Երևանի, Դարալագեազի և այլ տեղերի դաշտերի ընդարձակութեան և բերրիութեան մասին, ըստ որում այն ժամանակ շատ քիչ բնակութիւն կար այն տեղերում։

Երբ վերջնականապէս հրաման տրին գաղթելու, շատերը հրաժարուեցան, պատճառ բերելով իւրեանց չքաւորութիւնը և տեղափոխելու միջոց չունենալը։ Կարգադրութիւն եղաւ զօրապետներից, որ այդպիսի չքաւորներին բաժանեն գանձարանից 3 մինչև 10 ռուբլի նպաստ, միայն թէ անպատճառ գաղթեն։ Կասկածելով որ մի գուցէ նոր հայրենիքում հանդիպեն ոտի և նեղութեան, հայերն իւրեանց ցորենը և գարին հորերու մէջ պահելու յանձնեցին իւրեանց ազգականներին և բարեկամներին։

Աշնանը ճանապարհի պատրաստութիւն տեսնելով՝ իւրաքանչիւր գիւղ առանձին բարձրացաւ։ Նոցանից միայն փոքր մասը գնում էին սայլերով, այն ինչ մեծ մասը, չքաւորութեան պատճառով, հետևում էր ոտով։ բեռները շալակած, իսկ կանայք՝ երեխանցը շալակած։ Գաղթականների տրամադրութիւնը մասամբ ուրախ էր և մասամբ տրտաքէկ, նայելով թէ որ դասակարգի և հասկացողութեան մարդիկ են։

Խիստ և խիստ սրատաշարշ և սրատաճմլիկ էր նորանց հրաժարականը ծննդավայրերին և ուխտատեղի վանքերին, որպիսիք են սուրբ Աստուածածնի՝ Դէրիկ գիւղի մօտ և Աղբակու սուրբ Բարդուղիմէոսի վանքը։

Շարժումն լինում էր հանդարտութեամբ, առանց զօրքի, մի օր գալով, երեք օր հանգստանալով։ Հանապարհին եթէ պարսիկ կը պատահէր, հայերը հայհոյում էին նորան, մինչև անգամ գանակոծում, բոլոր որում այլ ևս վերադառնալու նպատակ չունէին, որ վախենային պարսիկներից։ Իսկ ռուսների մասին հայերը յայտնում էին այն միտքը, թէ «ռուսը մեր հաւատը չը հոյհոյի, մեր ժամատայութիւնը չը ծաղրի, մեր ծիսակատարութիւնը, մեր լեզուն չարգելի, էլ դարդ չունինք»։

Ջուլա հայ գիւղերը համարեա բոլորն ևս գաղթեցին, բայց պարսկահատն գիւղերի հայ բնակիչների մի մասը մնաց։ Մեր գիւղացիք երբ հասան Խոյ քաղաքի Շահբաղի մօտ, այնտեղ գտնում լսեցող ռուս զինուորները մերկամարմին դուրս թռան ջրից և հեռաբրքրութեամբ նայում էին գաղթողների շարժուն բանակին։ Հայ կանայք, իրարանց կեանքում առաջին անգամ տեսնելով այդպիսի մի խարթ երևոյթ, փոց էին տալի իրարանց գլխին, ասելով թէ «ճիշտ է պարսիկների ասածը, որ ռուսը իրարանց կը տանի և Մաշո-ղկայ կը հինի»։

Աբասաբաթի դէմ Արաքսը անցանք բարայով (պարոմ) և այնտեղ մնացինք երեք—չորս օր։ Կանայք մնացին հայ թխելու և և լուայք անելու, իսկ տղամարդիկ գնացին Նախիջևան կարևոր պիտոյքներ գնելու։

Մենք, որ կանխատես ընտրել էինք Դարալագեազը, ուստի վաղ աշնանը դուրս գալով Պարսկաստանից, հասանք մեր նշանակած տեղը։ Առաջին նուագ շատ չարչարուեցինք, բոլոր որում չունէինք ասուն, տեղ, ապրանք, ապրուստ, որոշ գրութիւն, այն ինչ իսկ աշունքը բերաւ իւր հետ անձրև, ցուրտ և վրայ հասնող ձմեռը ապառնում էր իւր բքախառն ճիւնով։

Դարալագեազն, իբրև նորանուաճ երկիր՝ չունէր անգամ կազմակերպուած իշխանութիւն։ Բոլոր յարմար գիւղատեղերը

թուրքերի ձեռքն էին։ Ազդեցիկ բէգերը, պարսից իշխանութիւնից ժառանգած իրաւունքներով, իրենց մէջ բաժանել էին Դարալագեազը։ Արփաչայի հոսանքով, Շարուրից մինչև Արփայ գիւղը, Նայիջեցի Հիւսէին Սուլթանի ձեռքն էր։ Իսկ Արփայ գիւղից վերս, նոյն գետի հոսանքով, մինչև Մարտիրոս և Հերհեր, Առինջեցի Նաբի բէգի ձեռքն էր։ Սոցա բանի իշխանութիւնը ժողովրդի վերայ դեռ ևս երեք—չորս տարի տևեց մեր գաղթելուց յետոյ։

Որպէս զի իմանաք, թէ որպիսի անիշխան տէր էին հանրում իրենց յիշեալ բէգերը այս երկրում, բաւական է յիշել, որ Նախիջևանի Էքսան խանն եկել էր Կարապիլ և Սուլթան բէգ գիւղերի սահմանները կաքաւի որսի։ Եւ որովհետև Մարտիրոս գիւղը սահմանակից է այս երկու գիւղերին և Նաբի բէգի իշխանութեան ներքոյ էր, ուստի վերջինս Բեշիշքեանդում հէնց որ լսեց Էքսան խանի իբր յանդգնութիւնը, բարկացաւ թէ ինչպէս այդ խանը վատահացել է ոտք դնել նորա Նաբի բէգի պէր-ընէան մէջ։ Տէրութիւն էին անուանում այդ բէգերը իրենց ձեռքի հողաբաժինը Ռուսաց տիրապետութեան օրերում։։։ Ինչ և իցէ Նաբի բէգը իր ձիաւորներով անյապաղ յարձակուեց Էքսան խանի վերայ և հալածեց նորան իր պէր-ընի-ներից։

Այս գրութեան էր Դարալագեազ, երբ մենք ոտք դրինք այնտեղ։ Մեզ իրաւունք էր տրուած ընտրել որ գիւղատեղն և կամենայինք, մինչև անգամ թուրքերի բնակուած տեղերն, որոնց իսկոյն և եթ դուրս էին հանում այդ տեղերից։ Հեռևեալ 17 գիւղերը, որ այժմ հայաբնակ են, բոլորն ևս մեր գաղթած միջոցին թրքաբնակ էին։ Սոքա են, Կորպէլ, Սո-ղնան ջէջ, Աղիաղ, Մարգիրս, Փոր, Փաղալս-, Աղարէտ, Այար, Մալիկայ, Բաղէանդ, Օրնատէանդ, Բէղիզէանդ, Ղ.ոյնս-լ, Հասանէանդ, Էրդաբիլ, Թառանան և Բարագլու-խ։ Այդ բոլոր տեղերից թուրքերին հանեցին և մեզ բնակեցրին։

Յարաբ վերայ հասաս և մենք մնայինք ասանց բնակարանի։ Իշխանութիւնը թուրքերի տները ժամանակաւորապէս տուեց մեզ, իսկ նոցանից երեք—չորս գերդաստան բնակեցրեց մէկ

տան մէջ։ Այս մեծ դրացիութիւնից մեծամեծ դժգոհութիւններ ծագեցին հայերի և թուրքերի մէջ, որոնք շատ խէթ աչքով էին նայում հայերի վերայ և խիստ դժգոհ էին նորանց գալուն։ Դորանից ծագում էին անվերջ կռիւներ և ընդհարումներ։ Ուստի կառավարութիւնը ստիպուեցաւ զէնք տալ մեզ, հայերիս, դրացի թուրքերից պաշտպանուելու։

Ամբողջ եօթը տարի թէև պետական հարկերից ազատ էինք, բայց կրկին աղքատութիւնը չափազանց էր։ Ցնտեռութիւնը փոքր առ փոքր բարձրելու համար՝ կառավարութիւնը առաջարկում էր մեզ փոխարինաբար ցորեն, եզ և այլն. բայց գաղթականներս շատ չէինք հաւատում։ կարծում էինք, որ այդ փոխարինութիւնը եթէ իւր ժամանակին չը կարողանանք հատուցանել, այն ժամանակ ռուսը մեր երեխայոցը կը խլի, կը տանի և կը սիրապետի, կամ վերջապէս մեզ ստրուկ կը դարձնի։ Ուստի միշտ հրաժարւում էինք այդ նպաստներից։ Հետևեալ ցուցակից կիմանանք թէ Դարալագեազի այժմեան գիւղերի մեծամասնութիւնը Պարսկաստանի որ գիւղերից են գաղթել։

Դարալագեազ.	Պարսկաստան.
1) Կարագիզ.	Շիդան.
2) Ալմալու	Օրբան.
3) Սուլթանբէգ	Սարամէրիկ.
4) Սէս	Ենգիջայ.
5) Մարտիրոս.	Ենգիջայ.
6) Փաշալու.	Ռաշդիրան.
7) Փոռ	Սաւրի գեղ.
8) Ազատակ	Սարամէրիկ, Սաւրի գեղ, Ենգիջայ.
9) Մալիշկայ.	Սաւրի գեղ, Սարամէրիկ.
10) Այար	Շիդան, Ղարամերան.
11) Քեշիշքեանդ	Շօրիկ, Հուկեան, Գոլագում։
12) Օրթաքեանդ	Սօմնայի.
13) Բաշքեանդ	Ապանիկ, Հմբանաւայ, Սաւրի գեղ.

14) Ղ.ոյթուլ . . Սամայի.
15) Հասանքեանդ. Սամայի.
16) Քարագլուխ . Ղ.որուղ, Մահլազան.
17) Թառաթիւմ . Ղ.որուղ:

Սորանով վերջանում է Բէգլար Աղախանեանի յիշողութիւնը 1):

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ:

(Կը շարունակուի):

---

1) Ցուսալի և ցանկալի է, որ ձեռնհաս գիւղական քահանայք, Գէորգեան ճեմարանի և Ներսիսեան Դպրոցի Պարսկառուսական գաղթական երկրացի ուսանողները ուսուցիչներ և այլ անձինք, որոնք պտտուում են գաղթական ժողովրդի մէջ, չը զլանային կարելոյն չափ տեղեկութիւններ ժողովել ականատես ծերունիներից գաղթականութեան պատմութիւն կազմելու, աչքի առաջ ունենալով, որ մի սերունդ ևս անցած, արդէն թանկագին նիւթերը կը մտնին գերեզման:

Ք.

ԼԱԶԻՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՔՈՒՐԴԻՍՏԱՆ

Պոնտոսի, Թուրքական Հայաստանի և Քուրդիստանի բնակիչները, որոնք հաշուում են մօտ երկու միլիոն հոգի [1]), մեծ մասամբ պատկանում են նոյն ցեղերին, ինչ ցեղերի որ պատկանում են Անդրկովկասի բնակիչները։ Թէ ցեղաբանական և թէ աշխարհագրական տեսակէտից այս երկու սահմանակից երկիրները մի միութիւն են կազմում։ Երկու երկրումն էլ բնակւում են վրացիներ, թէև տարբեր անուանակոչութեամբ։ Թուրք Էրզրումը հայկական է, ինչպէս որ է ռուս Երևանը։ Քուրդ հովիւները տրածացնում են իրենց հօտերը ինչպէս Սևանի նոյնպէս և Վան լճի եզերքներում։ Քաղաքական սահմանը ազգերի համար բնական սահման չէ։ Այս էլ թէև ճիշտ է որ հակադարձ գաղթականութիւններ տեղի ունեցան մի երկրից դէպի միւսը, ոչ բոլորովին ինքնաբերաբար, Ռուսիայի ամեն մի նոր յաղթութեան ժամանակ։ Այսպէս՝ 1828-1830-ին հարիւր հազարից աւելի հայ, յուսալով քրիստոնեայ երկրում ազատութիւն գտնել, Թուրքիայից և Պարսկաստանից գաղթեցին, ազատան խնդրելով ռուս կառավարութիւնից և ստացան Թուրք ու քուրդ գաղթականների թողած երկիրները։ Իսկ այս վերջիններն քաշւում էին մահմեդական երկիրներ։ Նմանապէս էլ 1877-ին՝ ժողովրդի փոխանակութիւն տեղի ունեցաւ Թուրքական Հայաստանի և ռուսական Անդրկովկասին միացրած

---

2) Տրապիզոնի, Էրզրումի և Վանի վիլայէթների (նահանգների) բնակիչների մօտաւորական թիւը, ըստ Երիցովի, Մորգոմանի և այլն.

Թուրք և Թուրքմէն	800000	Լազ	100000
Հայ	600000	Չէրքէզ	50000
Քուրդ	450000	Թուրք	50000

Այլ և այլք — 20000

հանգների միջև։ Արտահանի և Կարսի թուրքերը իրենց հանջող բանակներին հետևեցան դեպի Էրզրում և Սըլազ։ Արդուինի թուրքերը գնացին դեպի Վանի բարձրաւանդակը, մինչդեռ վերին Ճորոխից, Էրզրումից և Վանից Հայերը եկան բռնելու ռուսական ամրոցների շուրջը բաց մնացած տեղերը։ Օսմանեան կայսերութիւնը, ընդհանուր առմամբ, աւելի օգուտ եց այս փոխանակութիւնից[1]), որովհետև մուսուլմանները չեն կամենում այլ ևս ապրել ռուս տիրապետութեան տակ և գնում են միանալու իրենց եղբայրներին, մինչդեռ թուրքիայի Հայերից շատերը աւելի քիչ են վախենում փաշաների բարբարոսութիւնից, քան Մոսկովեան վարչութեան բծախնդրութիւնից(6)։ Ռուսական արշաւանքների գլխաւոր հետևանքն եղաւ այն, որ Հայաստանը Թուրքաստան դարձաւ[2])։

Այսուամենայնիւ՝ այս ահագին փոփոխութիւնները ցեղաբանական տարրերի հաւասարակշռութեան մէջ,—փոփոխութիւններ, որոնց ընթացակից էր տարտարելի մահացութիւնը՝ պատճառուած սովից, ջերմախտից, հայրենիքի կորստից,—ամենևին չկարողացան ճշտել և յստակացնել ցեղաբանական սահմանները պայմանական քաղաքական սահմանագծի հետ։ Հասկանալի է թէ նոյնացեղ ժողովուրդների սահմանակցութիւնը ինչ մեծ առաւելութիւն է տալիս ռուս կառավարութեանը, եթէ նա Դրան հետ ընդհարումն ունենայ։ Յանուն իւր հպատակների՝ անդրկովկասեան վրացիների, կարող է նա միջամտել Տրապիզոնի վրացիների գործերին։ Կրև քուրդ հոլիների իշխողի՝ դիւրին է նրան պահանջել այդ թա-

---

1) Գաղթական շարժումը Ռուսիայի միացրած երկիրներում՝ 1878-ից մինչև 1881։

Եկաւորների թիւը		21890
Գաղթողների	»	87760
Կորուստ		65870

2) Palgrave, Notes on Eastern Questions.

փառականների վրայ հսկելու իրաւունքը՝ մի երկրից միւսն անցնելիս։ Բայց մանաւանդ իբրև Հայերին պաշտպան, իբրև սուրբ Էջմիածնին տիրող, բոլորովին իւր քաղաքական դերում կլինի նա՝ պահանջելով վարչական ինքնավարութիւն և բարենորոգումներ իւր հպատակների եղբայրների համար։ Եւրոպական Թուրքիայում կարողացաւ նա բարձրացնել իւր հզօր ձայնը ի նպաստ Բուլգարներին և նրանց տալ տուեց մի երկիր, որ տարածւում է մինչև Սալոնիքի ծոցը։ Սոյնպէս էլ, երբ յարմար առիթը գայ, նա ղինուած կլինի միջամտելու յօգուտ Հայ հասարակութեանց, որ սփռուած են Էրզրումի հովտից մինչև Ալեքսանդրէտ խորշի ծովահայեաց ափերը, ճիշտ դէմ առ դէմ Անգլիայի նոր տիրած Կիպրոսին։ Իսկ ինչ վերաբերում է Մեծ-Բրիտանիային, նա անկարող կլինի անխախտ պահպանել Թուրք պետութեան այժմեան սահմանները ընդդէմ ռուսների։ Եթէ սափրում է նա Թուրք կառավարութեանը կարգ ու կանոն պահել իւր ունատոլեան նահանգներում, այդ մի պատրուակ ունենալու նպատակով է, որ յետ առնէ իւր պաշտպանութեան անիսոհեմ խոստումը։ Պատռնում է, որովհետև չէ կարող գործել։

Տխուր է մտածել, որ մի այսչափ հարուստ երկիր, բարեխառն գօտու ամենագեղեցիկ և ամենաբերրի երկիրներից մէկը, որ իւր տարածութեան համեմատութեամբ ամենաշատ թիւն է տուել հայաբոյսերի, այսօր շատ սակաւ է մշակուած։ Հազիւ 6 ընակիչ կարելի է հաշուել մի քառակուսի քիլոմետրի վրայ և այն էլ շատ հաւանական է, որ պակասում է օրից օր։ Սակայն տիրող ազգը՝ Թուրքերը կամ աւելի ճիշտ՝ Թուրքմանները, — որովհետև դեռ մինչև այսօր էլ նրանք բաժանուած են առանձին առանձին ցեղերի, — ունին մեծ բարեմասնութիւններ, որով հաւանական է թէ ապագայում կարող են մեծ մասն ունենալ ազգերի ընդհանուր գործնէութեան մէջ։ Աշխատասէր, համբերող, սկսուած գործում տոկուն, Թուրքմանները նորից նոր սկսում են, առանց ձանձրանալու, օտարների արշաւանքներով ընդհատուած գործը։ Իրենց նախնեաց՝ Կարա-Կոյունլի և Աղ Կոյունլի, այն է՝ «Սև ու Սպիտակ Հոտիների» փառքին գիտակից՝ Թուրքմէնները պահպանել են ազ-

գային միութեան զգացումը, որ պակասում է իրենց հարևանների մեծ մասին և ցեղերի խառնուրդի ժամանակ գլխաւորապէս սրանց օգտին է կատարւում այդ ձուլումը։ Շատ գաւառներում լազերը, չերքէզները, քուրդերը վերջ ի վերջոյ ձուլւում են սրանց հետ, մանաւորապէս այն տեղերում, ուր թափառաշրջիկ սովորութիւնները տեղի են տուել երկրագործական կեանքին։ Այս թուրքմանների ուժեղ ժողովրդի մէջն է որոնելու Թուրքիան իւր «վերածնունդեան» տարրերը և ոչ թէ դաշնակցութեանց, պատերազմական անհատատատ բազմի և կամ «եւրոպական դրամագլուխների» օժանդակութեան մէջ[1])։

Բաթումի և Տրաբիզոնի միջև՝ ծովափի լազերը և եղերական լեռների ամարները մահմեդական վրացիներ են, ոչ պակաս վայելուչ, շնորհալի և գեղեցիկ քան իրենց Վրաստանի եղբայրները։ Նրանց բարբառը, որ շատ մերձաւոր է Մինգրէլիայում խօսուած գաւառաբարբառին, խառն է թուրք և յոյն բառերով[2])։ Կրօնի, քաղաքական—վարչական ձևի տարբերութիւնը, մանաւանդ ժամանակաւոր պանդխտութեան սովորութիւնը, որ ընդհանուր է Լազիստանում, աստիճանաբար աւելի մեծ տարբերութիւն են առաջացնում թուրքահպատակ լազերի և ռուսահպատակ վրացիների խօսակցական լեզուի մէջ։ Մի քանի գաւառներում, մինչև անգամ վերին և միջին Ճորոխի վրայ, թուրքերէնն է դարձել սովորական խօսակցութեան լեզու։ Լազերը ճարտար են արհեստների և ամեն տեսակ ձեռնարկութեանց մէջ, այլ և արկածախնդիր են։ Կար ժամանակ որ նրանք մեծ հաճոյքով պարապում էին ծովահնութեամբ և նրանց փոքրիկ մակոյկները՝ առանց ուշ դնելու մրրիկների վտանգին, ընկնում էին վաճառականական նաւերի յետևից, իսկ այժմ զբաղւում են ձկնորսութեամբ և ապրանքներ կրելով։ Հազարաւոր պանդուխտներ գիմում են կոստանդնուպոլիս բեռնակրութեամբ, նաւաբարձութեամբ և կաթսայագործութեամբ պարապելու[3])։ Տանը մնացողները հոլիներ են կամ

1) Palgrave, արդէն յիշուած։

2) Rosen, Ueber die sprache der Lasen.

3) Извѣстія Кавказскаго Отдѣла, tome V. 1877—1878.

երկրագործ, և մարդ հիանում է այն հոգածութեան վրայ, որով նրանք հաստատում են իրենց մշակութեան լանջերը (տեռաս) լեռների կողերի վրայ։ Բուն Լազիստանի գաւառում, որի արևմտեան սահմանն է Թէմէր հրուանդանը (Թէմէր բուռնու), բնակիչները գրեթէ ամբողջապէս լազեր են։ Դրանից այն կողմը՝ դէպի Տրաբիզոն և աւելի հեռու մինչև Պլատանայ, հեռաւոր պակասաթիւ են դառնում նրանց հաստակութիւնները և խառն բնակուած թուրքերի և յոյների հետ։ Լազերից յետոյ այս երկրում ցեղական ամենանշանաւոր տարրը կազմում են չերքէզները, աբխազները և կովկասից ուրիշ զանազան գաղթականներ, որոնց տարեկան եկաւորութիւնը հասնում է մօտ վեց հազարի։ Արանք յօժարութեամբ ձուլւում են բնիկների հետ ի մի ազգութիւն, տեղացի աղջիկների գեղեցկութեան շնորհիւ, որոնց նորեկները մեծ յօժարութեամբ իրենց կին են խնդրում [1]։ Հայերը ունին միայն գիւղերի մի փոքրիկ խումբ Կոպի'ի շուրջը, Բաթում գաւառի սահմանագծի վրայ, իսկ յունական գաղութը բաղկացած է միմիայն ծովեզերեայ քաղաքներում և գիւղաքաղաքներում առանձնացած մի քանի ընտանիքներից։ Ներքին մի քանի հովիտներում, մասնաւորապէս Ընկուզուտում (Ջևիզլիք), Տրաբիզոնից Գիւմիշ-խանէ տանող ճանապարհի վրայ, գտնւում են ԶՕՂԻՆ բնակիչներ (կէոկէներ)—«Մէցցօ-մէցցօներ», որ մարդ չգիտէ մուսուլման թուրքերի՞ հետ դասել թէ քրիստոնեայ յոյների հետ։ Աւաւօտեան խօսում են նրանք թուրքերէն և գնում են մզկիթ, երեկոյեան խօսում են յունարէն և կատարում են քրիստոնէական խորհուրդները։ Ծագած յոյներից, բայց Լազերի հետ խառնուած յոյներից, և տասնեօթներորդ դարում ընդունած իսլամը, այս երկլեզու և երկկրօն գիւղացիները ծածկում են օսմանցիներից իրենց քրիստոնէական ծէսերը, թէև այդ գաղտնիքը յայտնի է ամենքին և արհամարհանքով թոյլատրուած։ Այս էլ կայ, որ նրանց մահմեդականութիւնը զուտ կեղծաւորութիւն չէ։ Երկու կրօնքի

---

1) Palgrave, յիշուած։

2) Hamilton, Researches in Asia Minor;—Eli Smith;—Flandin;—Palgrave, etc.

արարողութիւններն էլ սովորութեամբ անհրաժեշտ են դարձած նրանց համար հաւատարապէս(7)։ Թերևս որանց մէջ պէտք է տեսնել այն Մակրոնների սերունդը, որոնց մասին խօսում է Հերոդոտը, իբրև թլփատութիւն գործածողների վրայ։ այդ դէպքում արանք «մուսուլման» եղած կլինին յառաջ քան Խալամի զինուորների այս երկիրների տիրելը 1)։

Ոչ մի տեղ, ոչ Թուրքիայում և ոչ էլ Անդրկովկասում, Հայկեանները կամ Հայերը չեն ապրում իբրև մի միաձոյլ ազգային մարմին, սակայն ճորոխի հովտի հարաւային զառիվայրերում նմանապէս և վերին Եփրատի գլխաւոր ճիւղերի վրայ նրանք են տիրող ժողովուրդը։ Փոքր Ասիայում՝ Զիմռէնի աւազանում բնակուած են նրանք բայառապէս մի քանի վերին հովիտներում։ Այսպիսով՝ Սև ծովից ճգուած մինչև Միջերկրականը՝ ամենալաւ կերպով այս տեղերումն են պահպանել Հայաստանի թագաւորութեան աւանդութիւնները։ Հայերի թիւը յայտնի չէ։ Նրանց քաղաքական գրութիւնը դառնալով առիթ սաստիկ վիճաբանութիւնների, երկու կողմից էլ չափազանցութիւններ են տեղի ունեցել, նայելով պայքարի շահերին։ Մի կողմին նայած՝ Թուրքիային մնացած նահանգների հայերի թիւը լինելու է երկուսից երեք միլիոն, միւսների ասելով—միմիայն հինգ հարիւր հազար։ Պաշտօնական վիճակագրութիւնները, որ կազմուած են իւրաքանչիւր տեղի ընակիչների թուի մօտաւորական ենթադրութեամբ, մշտապէս չեն պահում իւրաքանչիւր ազգութեան կանոնաւոր հաշիւը, սակայն ճանապարհորդների հետազօտութիւններով զանազան ցեղերի յարաբերական չափը յայտնի է մօտաւորապէս, ուստի և կարելի է թուրքական հայերի մօտաւոր թիւը հանել, որ հաւանականաբար լինելու է եօթից ութ հարիւր հազար, այն է՝ ամբողջ հայ ազգութեան մի երրորդը ընակուելիս պէտք է լինի Օսմանեան հողի վրայ(8)։ Էրզրումում ինչպէս և Կոստանդնուպոլսում Հայերը սարբերուում են թուրքերից աւելի բայ և ազատամիտ ոգով, ուսման աւելի մեծ սէր ունին, վաճառականութեան և արուեստների մէջ աւելի մեծ

1) De Gobineau, Trois ans en Asie.

ձեռներիցութիւն։ Վանի վիլայէթում չկայ տուն, որ նրանց ձեռքով շինուած չլինի, չկայ տեղական կոսր որ նրանց գործածը չլինի, չկայ պտուղ, որ նրանց պարտէզներից չլինի։ Նրանք դիմում են պանդխտութեան մեծ յօժարութեամբ։ Չհաշուելով վաշաների բռնութիւններից և աւազակ քուրդերի ասպատակութիւններից վախածները, հազարաւորներ կան նրանցից Ստամբոլում, Անատոլիայի և Եւրոպական Թուրքիայի միւս քաղաքներում։ Այս տեղերում բանում են նրանք իբրև որմնադիր, մշակ, բեռնակիր։ Կոստանդնուպոլսում Վան-Էրմէնիսի, «Վանեցի հայ» անունը գործ է ածւում ինչպէս «Օվերնա» բառը Ֆրանսիայի մեծ քաղաքներում։ Ամբողջ գիւղեր բնակուած են միմիայն կանանցով, որոնց այրերն ու եղբայրները պանդխտութեան մէջ են, իսկ իրենք մնացել են ընտանիքի տուն ու տեղին հսկելու։

Մինչդեռ հայ ժողովրդի ծանրութեան կեդրոնը գտնւում է ռուս հողի վրայ՝ Արարատ սարի ստորոտում, քուրդերինը[1]՝ ընդհակառակը թուրք հողի վրայ է, ուր և գտնւում են նրանց ամենաբազմամարդ ցեղերը։ Նրանց բնակութեան բուն կեդրոնը գտնւում է Վանի բարձրաւանդակութեան վրայ, թէև նրանց թափառած արօտատեղիները անսահման են։ Հաշուելով քուրդերի թւում նրանի եզերական լեռնագօտիների Լուռիներին և Բախտիարներին, նաև այն դանդաղ ցեղերին, որոնց պարսիկ թագաւորները տեղափոխել են Խորասանի և Բայազիտանի՝ սահմանների վրայ, այն ժամանակ շատ քիչ ազգ կլինի Առաջաւոր Ասիայում, որ այդչափ ընդարձակ երկիրներում սփռուած լինի։ Քրդերի տիրած գօտին, որ գրեթէ անընդհատաբար տարածւում է Համադանի մօտերից՝ մինչև Այնթաբ՝ 1000 քիլոմետր երկարութիւն ունի, 250 քիլոմետր միջին լայնութեամբ։ Նրանք բաժանուած են երեք պետութեան մէջ, բայց Ռուսաստանում եղածները համեմատաբար շատ սակաւաթիւ են և շրջապատուած են հայերով, վրա-

---

1) Թրքական հողում սրանց ցեղական անունը հնչւում է քիւրդ կամ քիւրտ։ Արաբները այս ազգն անուանում են քարտ, յոգնակի՝ էքրատ, իսկ իրենք իրենց կոչում են՝ քարտմանչէ։

ցիներով ու թաթարներով ու ոչինչ յարակցութիւն չունին իրենց գլխաւոր ցեղերի հետ։ Քուրդ ցեղերի մեծամասնութիւնը ճանաչում է Դրան գերիշխանութիւնը, արևելեանները կախումն ունին Պարսկաստանից, իսկ զանազան դժուարակոխ գաւառների ցեղեր, մանաւորապէս Դէրսիմ սարերինը, որ Էրզրումի հարաւ—արևմուքումն է, ապրում են փոքրիկ անկախ տէրութիւններով[1])։ Այն հովիտներում ուր քուրդ ցեղերը ապրում են խիստ աւ խիտ, մանաւորապէս մեծ Զաբ գետի աւազանում, նրանք կազմում են մի բաւական հզօր ազգայնութիւն, այնպէս որ թուրքերի և պարսիկների դիմաց մի անկախ պետութիւն կազմելու փառասիրութիւնը կարող են ունենալ։ Այս դարի կիսից սկսած, մանաւորապէս վերջին ռուս արշաւանքից յետոյ տեղի ունեցած ապստամբութիւններից շատերը անշուշտ իբրև նպատակ ունէին ձեռք բերել քաղաքական անկախութիւն։ Մինչև անգամ փորձեր եղան հիմնելու մի «քրդական դաշնակցութիւն»։ Հաղիւ է պատահում որ զանազան քուրդ ցեղերի մէջ անհամաձայնութիւններ ծագին, նրանք ընդհանրապէս յարձակւում են այլասեռ ցեղերի վրայ։

Քուրդերը ցրուած լինելով այսպիսի մի մեծ տարածութեան վրայ՝ չունին բնաւ միևնոյն ֆիզիքական տիպը և անկասկած տարբեր ծագումից են։ Ոմանք խառնուրդ են թուրքմէնների կամ թուրքաթաթարների, ուրիշները խառնուած են հայերի կամ պարսիկների հետ։ Մի քանի ցեղեր, որոնք համարւում են մաքուր հայկական ծագումից, նկատուած են իբրև սերուած նախկին քրիստոնեայ հասարակութիւններից, որոնք ընդունել են Խալամը։ Քրդական սարերում զօրանիստ ունեցող գրեթէ բոլոր թուրք զինուորները ամուսնանում են տեղական աղջիկների հետ[2])։ Դէմքի տարբերութիւնը

---

1) Քուրդ ժողովուրդները մօտաւորապէս հաշուած։ Թուրքական Քուրդիստան և Թուրքական Ասիայի ուրիշ երկիրները. 1300000 բնակիչ.
Պարսկաստան (Լուռիները և Բախտիարները չհաշուած). 500000 »
Աղուանիստան և Բալուջիստան 5000 (?) »
Ռուսական Անդրկովկաս 13000 »

2) Millingen, Wild Life among the Koords.

համապատասխանում է ծագման տարբերութեան. քրդերը տգեղ են և անճոռնի, բայց կան և այնպիսի քրդեր, որոնք կարող են մրցել ամենագեղեցիկ չերքէզների հետ ուժեղութեան և շնորհքի միջոցները տանելու համար: Վան և Ուրմիա լճերի աւազաններում տղրող քրդերը, որ համարւում են Պերսեպոլսի արձանագրութեանց մէջ յիշուած Քուդրահանների սերունդ, կամ սերուած կարդուքներից և գորդիացիներից, որոնց մասին խօսում են հին յոյն հեղինակները, միջահասակ են և թիկնաւէտ, խոշոր և հպարտ գծագրութեամբ: Իսկ պարսկական սահմանի քրդերը ունին ընդհանրապէս դէպի յետ փախած ճակատ, լայն և որոշակի բաժանուած կոպեր, երկայն արտևանունք, մեծ բերան, դուրս ցցուած կզակ, սաստիկ արծուրդանգ քիթ, որ սրածայր է և մոտ պինչերով[1]: Շատ քուրդ ցեղեր պարսիկների նման սև կամ կարմիր են ներկում իրենց թանձր մօրուքը և մազերը: Յաճախ կարելի է հանդիպել և այնպիսիներին, որոնք բնականից ունին շէկ մազեր և կապոյտ աչքեր, կարծես գերմանացիներ լինին[2]: Մ. Դիւհուսէի չափած հինգ քրդական գանգերը նշանաւոր կերպով կարճագլուխ (բաւխիսէֆալ) էին[3], և աչքի ընկնելու չափ տարբերւում էին արևելեան պարսիկների, աղուանների և հնդիկների գանգերից: Սակայն քրդերի մեծ զանազանութիւնը միմեանցից Վիրքիրական տեսակէտից թոյլ չէ տալիս այս մի քանի չափածութեան մէջ մի ընդհանուր իրողութիւն տեսնել: Ամերիկական քարոզիչները, որ շատ բազմաթիւ են քրդական երկրներում, այդտեղերի բնակիչներին նմանեցնում են կարմրամորթերին: Քրդական դէմքի ընդհանուր գծագրութիւնը, ասում է Դիւհուսէն, յիշեցնում է «գիշակեր գազանը», բայց զուրկ չէ գեղեցկութիւնից: Մանուկները սիրուն են, և թատրական-ների նկարչական կարաւաններում ոչ մի պատկեր

---

1) Duhousset, Etude sur les populations de la Perse, Revue orientale et Américaine; 1863.

2) Polak, Persien, Das Land und seine Bewohner.

3) Քրդերի գանգային նշանաչափը՝ 0,86. Միջին նշանաչափը ըստ Էռնէստ Շանտրի — 0,81.

չէ այնչափ շնորհալի, որչափ թամբերի եռևը, ձիերի գաւակների վրայ ամրացրած թեռերի (խուրջինների) միջից գուրս ցցուող փաքրիկ ժպտող գլխիկները[1]։ Կանայք երբէք չեն քօղարկում իրենց երեսը, ունին ընդհանրապէս խիստ կանոնաւոր գծագրութիւն, մեծ աչքեր, արծուային քիթ, խոշոր կազմուածք, երկայն հիւսած մազեր, որի մուք ոև գոյնը գաշնաւորւում է կաշու թեթևակի մթագին գունաւորութեան հետ։ Բայց ցաւալին այն է, որ շատ ցեղերում կանայք իրենց ապէզացնում են, ինչպէս հնդկուհիները՝ անցկացնելով ռունգներից ոսկի օղ (խզմայ) (9)։ Այդ մարդկանց պէս քաջ և հարկ եղած ժամանակ զէնք գործածող՝ սիրում են նրանք զարդարանքներ և գեղեցիկ զգեստներ, բայց հազիւ է պատահում որ գրանցով զարդարուին, որովհետև այրերը այդ իրենց են վերապահում։ Քուրդը սիրում է թանկագին և խայտաճամուկ զգեստներ, վառ փայլուն գոյներ, բարձր գլխարկներ՝ փաթաթուած շքեղ շալերով։ Իւր զգեստի ծանրութեանը աւելացնում է նաև իւր գօտու զինապանը՝ ատրճանակներ, դանակներ, եաթագաններ, հրացանն ուսընդանութ անցկացրած, յենուած երկայն և ժապաւէններով զարդարուն սրածայր նիզակի վրայ։ Բայց պատերազմի համար աշխատում է նա թեթև զինուիլ։ Բաղդատիլ է գալիս քրդական սարերը բամբուեղեգնի ցօղունը՝ նիզակների համար և ունգեղջիւրի կաշի՝ վահանների համար[2]։

Մ. Դիւհուսէն իւր ճանապարհորդութեան ժամանակ՝ քրդական բարձրաւանդակն անցնելիս հնկատեց Ղիզիքական տարբերութիւն քուրդ մեծերի և երկիր մշակող ամբոխի մէջ, բայց հետախոյզ ճանապարհորդները և քարոզիչները, որոնք երկար ժամանակ ապրել են այդ ցեղերի մէջ, միաբան վկայում են, որ քրդական շատ ցեղերում՝ Պարսկաստանում թէ Ասիական Թուրքիայում՝ կայ երկու բոլորովին որոշ գասակարգ, որ հաւանականօրէն պատկանում են երկու տարբեր ցեղաբանական բնի (ծագումի)։ Այս երկու գասակարգն են՝ ֆէրմանի կամ տաոիբէթա (աշիրէթ), այն է՝ ազնուական-

1) James Creagh, Arménians, Koords and Turks.

2) Thielmann, Streifzüge in dem Kaukasus.

ները և գուրանները — գիւղացիները։ Հարաւային Քուրդիստանում վերջիններս չորս կամ հինգ անգամ աւելի բազմաթիւ են քան առաջինները և նկատուած են՝ հաւանօրէն մեծ իրաւամբ, իբրև սերունդ մի յաղթուած և ստրկացած ազգի[1]։ Ասիական Թուրքիայում դրանց անուանում են ռայա, ինչպէս և միւս ճորտերին։ Մի քանի գաւառներում նրանք իսկապէս ստրուկներ են՝ պարտական հողը մշակելու իրենց տէրերի համար, որ համարւում են կեանքի և մահի իրաւունք ունեցող նրանց վրայ։ Ոչ մի դէպքում այդ ճորտ հողագործը չէ կարող բարձրանալ մինչև պատերազմիկ դասակարգը, նրան մնում է միայն հպատակել ճակատագրին՝ փոխել իւր տէրը, եթէ կռուի ելքը այդպէս է տնօրինում։ Իրենց կողմից ազնուականները կամ պատերազմիկները անպատուութիւն են համարում երկրագործութեամբ պարապել։ Միակ խաղաղական զբաղմունքը, որ նրանց է այս գերակայ մարդկանց՝ տաւարաբուծութիւնն է։ Բայի հովուութիւնից դրանց համար միմիայն արժանաւոր զբաղմունք են՝ աւազակութիւնն ու պատերազմը, կատարած կամ իրենց հաշուին, կամ ուրիշի՝ — իբրև վարձկան։ Մի քանի գաւառներում դրանք որոշւում են գուրաններից՝ կարմիր կրկնոց հագելով[2]։ Սրանք գուրանների դասակարգին պատկանող քրդերից տգեղ են, աւելի ծանր ու խոշոր կազմուածքով, դէմքերը ցցուած սուր անկիւններով, փոքրիկ և խոր ընկած աչքերով, մինչդեռ գուրանը ունի աւելի քաղցրաբարոյ, աւելի կանոնաւոր և յունական տիպին մօտեցող դէմք[3]։ Հայերի և քրդերի մէջ ապրում են նաև մի քանի չինգանէ կամ ցիգան—բոշա ընտանիքներ, որ ամեն բանով նման են Եւրոպայում գտնուածներին։ և Թերէ-քամէներ, որոնք համարւում են Թուրք ծագումից, իրենց խօսած բարբառի պատճառով։ Թերէ-քամէները մօտ հարիւր գիւղ ունին պարսկական սահմանի վրայ։

---

1) Moritz Wagner, Reise nach Persien und dem Lande der Kurden.

2) Millingen, Wild Life among the Koords.

3) Rich, Narrative of a Residence in Koordistan.

Քրդերի բարբառները ինչպէս և դէմքի գծագրութիւնը շատ զանազան են միմեանցից։ Հեռաւոր ցեղերի լեզուները սաստիկ տարբերւում են։ Կիլիկիայի սարերի մի քուրդ հազիւ թէ հասկանայ Կոպէտ-դաղի քրդին։ Նրանց բոլոր բարբառների կազմութիւնը էապէս իրանական է, արևելեան ցեղերի լեզուն հարուստ է պարսիկ բառերով, արևմտեան և հիւսիսային ցեղերինը—արաբ և թուրքաթաթար բառերով և դարձուածքներով։ Մի քանի գաւառներում շատ բազմաթիւ են ասորի բառերը, իսկ Անդրկովկասում քրդերը գործ են ածում նաև ռուսերէն ասացուածներ։ Զազա լեզուն, որ խօսւում է Մուշ և Բալու'ում, շատ նմանութիւններ ունի Կովկասի Օսերի բարբառի հետ։ Ըստ Լերխ'ի քրդական լեզուն բաժանւում է հինգ բարբառի, որոնցից մինը, քիր-մանջին, խօսում են Մուսուլից արևմուտք գտնուած բոլոր ցեղերը[1]։

Այս բոլոր բարբառները կոշտ են, հնչում են կարծես պայթիւններով, բայց աւելի պակաս շչող և կոկորդային ձայներ են պարունակում քան թէ հարևան ազգերի խօսած լեզուների մեծ մասը։ Մի քանի խարն զգացուած ժողովրդական երգեր, որ գովասանում են լեռները, գետերը, դիւցազներին, առանց երկար-բարակ բանաստեղծական քերթուածեան, կազմում են ընիկների միակ գրականութիւնը։ Ամերիկական քարոզիչները աւելացրել են պրա վրայ Աստուածաշունչի թարգմանութիւնը և մի քանի կրոնական երկեր (10)։ Քրդերը չունենալով սեփական գրութիւն՝ գործ են ածում արաբական այբուբենը՝ իրենց հարևան պարսիկների փոփոխած ձևով, իսկ կրթուած քրդերը սովորաբար թողնում են իրենց լեզուն և ընդունում են քաղաքակիրթ իրանցիների և կամ թուրքերի լեզուն։ Նրանց «քուրդ» անունն անգամ պարսկական ծագումից է և նշանակում է «զօրեղ» կամ «հզօր»։ Այս էլ կայ՝ որ թաթարները այս բառը հանում են գուրդ կամ «գայլ» բառից, այս հեգնական ստուգաբանութեամբ վրէժ առնելով մի ժողովրդից,

---

1) Forschungen über die Kurden und die Iranischen Nordchaldär.

որի արիւնոտ յաւիշտակութիւններից շատ անգամ նեղուել են։ Քրդերը յաւակնութեամբ համարում են իրենց արաբական ծագումից և կարելի է կարծել, որ իրապէս՝ նրանց մեծաւորների մի մասը պատկանելիս լինի այդ յաղթող ցեղին։

Ոչ Բալուճները, ոչ Բէդուինները, ոչ Հապաշները և ոչ էլ Պատագոնները գերազանցում են քուրդ պատերազմատէր ցեղերին իրենց աւազակաբարոյութեամբ և այդ բնազդման բաւականութիւն տալու արուեստով։ Մեծաւորը, որի ամբոցը ինչպէս մի արծուի բուն տիրում է կրծի բերանին, պահում է աւազակների մի վոհմակ, որ քրքրում են շրջակայ ճանապարհները և նրան են բերում ստացած աւարը։ Չինուածձեռքով գողութիւնը համարւում է գերազանց պատուաբեր գործ, իսկ մաքսանենգութիւնը արհամարհուած է, թէև այս լեռնային երկրներում, ուր հանդիպում են երեք պետութեանց սահմանները, դիւրին կլինէր նրա գործադրութիւնը։ Այս նենգաշահ տուրևառը թւում է քրդերին իրենց արժանապատուութիւնից ստոր։ Այսուամենայնիւ օգուտ են քաղում նրանք այս սահմանագծերի հանդիպումից իրենց արշաւանքները կազմակերպելու համար, երբեմն մի երկրում, երբեմն միւսում, այնպէս որ պատասխանատուութիւնն ընկնի իրենց դրացիների վրայ և սահմանը գնեն իրենց և իրենց հալածող զօրքերի միջև։ Երբ գործը գալիս է իրենց դէպի հայերն ունեցած ցեղական և կրօնական ատելութեան բաւականութիւն տալուն, այն ժամանակ նրանք ինչպէս ձուկը ջրումն են և մեծ ոգևորութեամբ պատրաստւում են աւազակային ասպատակութիւնների։ Այս վտանգաւոր դրացիներից խոյս տալու համար էր, որ շատ հայկական գաւառներ անմարդաբնակ դարձան՝ գաղթելով Անդրկովկաս։ Բարձրաւանդակների շատ երկրներ, թաղաքներ, հայկական ամբողջ գիւղախմբեր իրրև թէ պաշարուած լինին այս յաւիշտակիչներից, ոչ ոք չէ յանդգնում պարսէզների սինոուից դուրս գալ։ Սարսափելի պատիժներ, որ գործ են դրւում այս աւազակներին պատժելու համար, մինչև անգամ խարոյկն ու ցցահանութիւնը, չեն վախեցնում այս ցեղերին և յաճախ մինչև անգամ զայրացնում են նրանց և գրգռում ահռելի վրէժխնդրութիւնների(11)։ Այսուեղ

ընկճուած, կռիւն սկսում է մի ուրիշ տեղ, այնպէս որ շատ անգամ թուրք կառավարութիւնը ստիպուած է լինում զինուորական արշաւանքների դիմելու։ Ըստ Պոլակի կայ մի քրդական աղանդ, որ խստիւ արգելում է կենդանի մարդկանց վրայից յափշտակելը՝ բայց թոյլ է տալիս մեռածներին կողոպտել, ուստի և աղանդաւորներն իրենց թոյլատրուած են համարում նախապէս սպանել այն ամենքին, որոնց ունեցածին ցանկանում են։ Խաղաղ ժամանակ քուրդ աւազակները խնայում են մարդկային կեանքը, երբէք չեն սպանում իրենց կողոպտածներին և մինչև անգամ ուտեստ և զգեստ են թողնում իրենց աւարած գիւղերի աղքատներին։ Սակայն անգլիական հիւպատոս Աբոտը, որը փորձեց իրեն պաշտպանել, բրածեծ եղաւ և մերկ ձգուեց Դիարբեքիրի ճանապարհին իւր սարսափահար ծառաների մէջ[1]։

Քրդերն արիւն են թափում միմիայն անձնական կամ ժառանգական անողոքութեան վրէժը լուծելու համար և այս՝ վրիժառութեան սրբազան պարտքը կատարելու համար պատահել է որ նրանք յարձակուել են միմեանց վրայ և իրար կոտորել են մինչև անգամ մկկիթների մէջ։ Մեծաւորները, որոնց կուրծքն հպատակում են ցեղերը, հայոյ մարդիկ են, սեղանները միշտ բաց, և ստացած ընծաներն ու աւարառութեանց եկամուտը ծախսում են խնճոյքներում։ Օտարականը շատ լաւ է ընդունւում եթէ ներկայանում է իբրև հիւր։

Քրդերը խմբովին առած՝ և չնայած նրանց պատերազմական բարքին՝ իրենց շրջապատող այլացեղ դրացիներից աւելի աղնիւ են և աւելի հաւատարիմ։ Նրանք ընդհանրապէս պատուում են իրենց կանանց և աւելի մեծ ողորմութիւն են տալիս նրանց, քան թէ թուրքերն ու պարսիկները։ Բայց անընդհատ աշխատանքը դառնացնում է կանանց կեանքը և ասում են, որ շատ յաճախ մայրերը կամենալով աղջիկներին խնայել և ազատել այնպիսի թշուառ կենցաղից, որպիսին իրենցն է, ոչնչացնում են նրանց՝ ծնուելուն պէս։ Սակայն քրդերը երբէք չերքէզների պէս, որոնց այնչափ

---

1) James Creagh. Արդէն յիշուած։

նմանում են ուրիշ կէտերում, չեն ծախում իրենց աղջիկներին հարեմի կաւատներին։ Չնայած բոլոր բարեմասնութեանց՝ քրդերի էութիւնը փոփոխուած է թէ Պարսկաստանի և թէ Թուրքիայի շատ գաւառներում — նրանք պակասում են և տեղ տեղ էլ ձուլւում են շրջապատող ժողովուրդների հետ։ Ճորտ գիւղացին, որ բնակչութեան մեծագոյն մասն է կազմում, ոչ մի շահ չունի պահպանելու այն կապը, որով կապուած է ռազմիկ դասակարգի հետ, իսկ այս վերջինս իւր կենցաղավարութեամբ դատապարտուած է սպառուելու, լինելով պատերազմի մէջ ամէն ժամանակ և ամենքի հետ։ Կրօնական ատելութիւնն էլ, գոնէ Պարսկաստանում, օժանդակում է սպառման գործին, քանի որ քրդերի երեք քառորդը ջերմեռանդ սիւննի են, իսկ իրանցիք՝ իբրև շիաներ, բարեգործութիւն են համարում հալածել և սպանել հերետիկոսներին։

Այս երկրում որ իբրև ճանապարհ և անցք է եղել ազգերի համար և ուր այնքան ժողովուրդների մնացորդներ խառնուել են իրար հետ, ամեն տեսակ կրօնքներ թողել են իրենց հետքերը։ Պ. Շանտրին մասնաւորապէս եղել մինչև անգամ մի՝ բոլորովին կրօն չունեցող քուրդ ցեղի վրայ Աղերտի սանջակում։ Հայկական և քրդական բարձրաւանդակների ցեղերի մէջ գտնւում են ոչ միայն մահմեդականութեան և քրիստոնէութեան բոլոր ազանդները, այլ և հին մոգդեզականութեան անգիտակից ժառանգորդներ։ Կզըլ—Բաշերը կամ «կարմրագլուխները»—բաւ որ Աղուանիստանում և Արևելքի միւս երկրներում գործ է ածւում պարսկական ցեղի մարդկանց համար,—մեծ մասամբ քուրդ են։ 400000 ազանդաւորներից[1]) 15000-ը միայն պատկանում են Թուրքմէն ցեղին և երկու երեք ցեղ էլ իրենց արաբ են անուանում։ Կարմիր-գըլուխները, որոնց գլխաւոր հասարակութիւնները բնակւում են միջին Եփրատի աւազանում՝ Գերմիլիի տիերում և վերին Կզըլ—

---

1) Տ՛այլորը նրանց հաշւում է 250000-ից ոչ աւելի։

Իրմանքի հոլոռում՝ մուսուլմաններից համարում են իբրև քրիստոնէական ազանդ, որովհետև նրանք խմում են գինի՝ չեն քաղարկում իրենց կանանց՝ կատարում են միրոութեան և հաղորդութեան ծէսերը[1]։ Բոլոր ազանդաւորներից աւելի Կըզըլ—բաշերն են բացարձակապէս դատապարտուած իրենց դրացիներից—իրաւամբ թէ անիրաւացի՝ այդ յայտնի չէ—իբրև գիշերային տոնախմբութիւններ կատարողներ՝ ուր տիրում է ամենակատարեալ խառնակութիւն սեռերի՝ որից և առնուած է թեռահ Սոնդերան «Լոյս Մարդիներ» անունը՝ որով կոչւում են նրանք ընդհանրապէս[2]։ Կըզըլ—բաշերի կրօնական պետը նստում է Դէրսիմում՝ Մուրադ գետի (Արածանու) մօտ[3]։

Միւս ստոիկ ատուած ազանդաւորները նրանք են՝ որոնք իրենց հալեաններից անուանւում են «Սատանայ պաշտողներ»։ Եզիդի կամ Շեմսիէ քրդերը՝ թէև շատ սակաւաթիւ՝ հաղիւ յիսուն հազար տուն առաւելն՝ ցրուած են ահագին տարածութեան վրայ։ Նրանք բնակւում են գլխաւորապէս Սինջար լեռներում՝ Միջագետքի դաշտերից հիւսիս՝ բայց կան նրանցից նաև Վանի և Էրզրումի բարձրաւանդակների վրայ՝ այլ և Պարսկաստանում և Անգրիովկասում՝ Սևանի արևելեան ափի մօտ[4]։ Սրանց մի գաղութը հասել է մինչ իսկ Վոսփորին՝ Կոստանդնուպոլսի դիմաց[5] (12)։

Ատուած՝ անարգուած ամեն ցեղի և ամեն կրօնի դրացիներից՝ երբեմն ստիպուած կռուել պաշտպանուելու համար՝ երբեմն ստիպուած խուսափել իրենց հալածողներից՝ սպառուելով սովից և հիւանդութիւններից աւելի քան թէ սրից՝ այսուամենայնիւ յաջողել են նրանք դարերի ընթացքում պահպանել իրենց աղքատ

---

1) Taylor, Journal of the Geographical Society, 1868.

2) Peter Lerch, յիշուած;—A. Vambery, Allgemeine Zeitung, 27 դեկ. 1877;—Millingen, Wild Life among the Koords.

3) Ernest Chantre, Tableau des tribus Kurdes.

4) Moritz Wagner, Reise nach Persien und dem Lande der Kurden.

5) Von Hammer—Purgstall;—Carl Ritter, Asien.

հասարակութիւնները առանց ունենալու հրէաների նման հատատուն նեցուկ, որ մատակարարում է գրաւոր աւանդութեանց գիրքը և անցեալ երկարատև անկախութեան պատմութիւնը։ Նրանք ունին միայն իրենց հաւատը և երեկեան կռիւների յիշատակը վաղորդեան կռուի խրախուսելու համար։ Նրանք պնդում են, որ իրենց մեծ սուրբը, Ագի Շէյխը, գրեց վարդապետութեան մի գիրք՝ «Աստուած» կամ «Սև» անունով, բայց ոչ մի ապացոյց չկայ դրան հաստատող և այդ հնարուած է հաւանականաբար մուսուլմաններին ստիպելու որ իրենցից ակնածեն 1)։ Ոչ մի տեղում չեն պահել նրանք իրենց անկախութիւնը։ Սինջարի եզիդիները, որ քրդեր են արաբների հետ խառնուած և սերունդից սերունդ ապրում էին ինքնավար հասարակապետութեամբ իրենց ժայռերի ամրոցներում, մեծ մասամբ ջնջուեցան 1838-ին։ Ծուխ տուին քարայրերին, ուր նրանց մեծ մասը ապաստանած էր, կանանց ծախեցին իբրև ստրուկ և յեղի թշուառ մնացորդները ստիպուեցան ապրել մուսուլմաններին։

Եզիդիների սիռուած գաւառները այցելող ճանապարհորդների պատմածները իրար հետ համեմատելիս նկատւում է այնպիսի տարաձայնութիւն, որ հարկ եղաւ ստանալ պաշտող աղանդաւորներին համարել զանազան ծագումից սերուած։ Հայերի հարեւանութեամբ նրանք թուում են միևնոյն ցեղաբանական ընից ծագած և ճշգրիտ գրաւոր հաւատքներ յիշատակում են իններորդ դարի կէսը և մի գիւղ Վանի գաւառում, իբրև ժամանակ և տեղի, ուր ծնունդ առաւ այդ կրօնը, առաջ պարզապէս իբրև մի հերձուած հայկական դաւանութեան։ Սինջարում, ընդհակառակն, եզիդիներին տալիս են արաբական ծագումն և նրանց կրօնը համարում են իսլամից ծնած։ Պարսկաստանում համարւում են նրանք Գէբրերի սերունդ, թէև նրանց տրուած անունն իսկ կասկում է նրանց մուսուլման աշխարհի հետ, քանի որ Եզիդը այն ատուած իսլամին է, Հիւսէյնի մահուան պատճառը, Մարգարէի թոռը, որի անունով կոչւում են եզիդիները (13)։ Վերջապէս՝ քուրդ

1) Frederick Forbes, Journal of the Geographical Society, 1839

յեղերը չեն զանազանում դրանց ստորին գաշտագետիններում ապրող քրիստոնեայ ազանդաւորներից և պատմում են թէ մէկերի և թէ միւսների մասին շատ անհեթեթ պատմութիւններ։ Չկայ գարշութիւն, որ նրանց չվերագրեն, չկայ ցնորաբանութիւն, որ չերևակայեն նրանց մասին։ Նրանց ծիսակատարութիւնները սարբերւում են նայելով երկրին։ կան որ մկրտում են մանուկներին և հանում են խաչի նշանը [1]։ մի քանի գաւառներում թլփատւում են, մինչդեռ ուրիշ տեղ այդ արգելուած է։ Հայաստանում ապրող եզիդները խստութեամբ պահում են պասերը, մինչդեռ ուրիշ տեղի Դիւապաշտները աղատ են համարում իրենց ամեն ժամանակ ուտելու։ Մի տեղ տիրում է բազմակնութիւնը, ուրիշ տեղ խիստ միակնութիւնը։ Երբեմն մեծ մասը հագնում էին կապոյտ, այժմ այդ գոյնը գարշելի է նրանց և նուիրուած են սպիտակ գոյնին։ Այս էլ կայ, որ այս հալածուած ազանդաւորները ստիպուած են պարսկական հերձուածի հերետիկոսների նման կեղծել և արտաքուստ կատարել պաշտօնական գաւանութեան ծէսերը, այնպէս որ չկայ մի քրիստոնէական կամ մուսուլմանական սուրբ, կուզէ շիա, կուզէ սիւննի, որ նրանք չընդունեն իբրև իրենց սուրբը և չպաշտեն արտաքին ջերմեռանդութեամբ։

Տարբեր ծագման և զանազան գաւանութեան եզիդիների մէջ միացման կապն է Մէլէք-Թաուս՝ Սիրամարգ կամ Փիւնիկ թագաւորի՝ պաշտամունքը (14)։ Նա է Տէր Կենաց, Սուրբ Հոգի, Հուր և Լոյս։ Նրան եզիդները ներկայացնում են մի թռչնի կերպարանքով, աքաղաղի գլխով, բազմած Ճրագարկի (աշտանակի) վրայ։ Իւր առաջին պաշտօնեան է Արուսեակը — անկեալ հրեշտակը — Լուսաբերը, որին յարգելուց չեն գադարում եզեդիները, չնայելով նրա անկմանը։ Մենք էլ ընկած լինելով, ասում են նրանք, ի՞նչ իրաւունքով անիծենք ընկած հրեշտակին, և որովհետև իրենք էլ իրենց սեպհական փրկութիւնը սպասում են աստուածային շնորհից, ինչո՞ւ համար Մեծ Կայծակնահարն էլ չպիտի նորից իւր աստիճանին բարձրանայ իբրև Պետ երկնային Զօրքերի։ Թերևս նոյն

1) Azahel Grant, The Nestorians.

իսկ Մովսէս Մարգարէն, Մահմէտը, Յիսուս — Քրիստոսը նրա մարմնառութիւններն էին, թերևս նա ապրէն նորից բարձրացել է երկինքը վերստին կատարելու իւր բարձրագոյն պաշտօնէութիւնը, օրէնսդրու Աստուծոյ հրամանները։ Եղիպտիներին սարսափ է տիրում, երբ որ մուսուլմաններից կամ քրիստոնեաներից լսում են անկեալ Հրեշտակապետի անունը հայհոյուած, և սասում են որ նրանց մօտ մահուան պատիժ է նշանակուած այն մարդու համար, ով գործ կածէ «սատանայ» բառը։ Այդ լսողները պարտական են սպանել հայհոյողին և յետոյ անձնասպանութիւն գործել[1]։ Խոյս են տալիս նրանք մինչև անգամ այն վանկերի զուգաւորութիւնից, որ կարող է հայհոյութեան բառն յիշեցնել։ Ջերմեռանդութեամբ կատարում են իրենց քահանաների հրամանները և շատերը ուխտ են գնում Շեյխ Ադիի սրբավայրը, որ գտնուում է Մուսուլի հիւսիսում, Ամադիայի ճանապարհի վրայ։ Նրանց Պապը կամ Շեյխ-խանը նստում է Բաստրի բերդում, որ գտնուում է մի սեպացած քարաժայռի վրայ, բայց սրբարանը գտնուում է մի ուրիշ գիւղում՝ Լալէշ անունով, ուր ապրած է եղել մի մարգարէ՝ եզիպտիների «Մահմէդը»։ Այստեղ են կատարուում մեծ հանդէսները, այստեղ են դուրս հանում Մէլէք Թաուզի սուրբ պատկերը հաւատացեալների երկրպագութեան համար։ Առաւօտեան, երբ արևը ծագում է հորիզոնից, ուխտաւորների ամբոխը ողջունում է լոյսը երիցս երկրպագութեամբ[2]։ Բոլոր ճանապարհորդները, մինչև իսկ կաթոլիկ և բողոքական քարոզիչները, որոնք ընդունուած են եղել եզիպտիների մօտ և որոնք բնականաբար սէջաք է ստանում մատնելով, որ գտնուում են սատանայ պաշտողների ներկայութեանը, միաբան վկայում են որ եզիպտիները բարոյապէս շատ գերազանց են իրենց բոլոր հարևաններից, նեստորականներից, լուսաւորչականներից, սիւննիներից և շիաներից։ Նրանց վերին աստիճանի ազնուամիտ են, աւերող և աւարող՝ երբ

1) Taylor, Journal of the Geographical Society, 1868.

2. Niebur; — Garzoni; — Rich; — Ainsworth: — Rousseau:— Forbes;—Perkins;— Wagner.

պատերազմ է հրատապակուած, իսկ խաղաղ ժամանակ ծայրայեղ ակնածող ամեն բանից, ինչ որ ուրիշինն է։ Անատման հիւրասիրութիւն են ցոյց տալիս օտարականին, բարեացակամ են միմեանց վերաբերութեամբ, քաղցրաբարոյ և հաւատարիմ ամուսնութեան մէջ, շատ ջանասէր աշխատութեան մէջ։ Երեկոյեան հանգստի ժամանակ կամ հոգը մշակելիս նրանց երգած բանաստեղծութիւնները երբեմն դիւցազներգութեան կտորներ են, որոշ իրենց նախնեաց մեծագործութիւններն են գովաստանում, երբեմն սիրոյ երգեր, լի զգայմունքով, երբեմն էլ՝ տրտունջ ու մրմունջ. «Բոլորենին միայն դիակներն է հանում գերեզմանից, ակնածում է կեանքից, իսկ փաշան երիտասարդների արիւնն է խմում։ Նա անջատում է փեսացուն հարսնացուից։ Անիծեալ լինի ով սիրոյ սրտերն է բաժանում։ Անիծուի հղօրը, որ գութ չունի։ Գերեզմանը յետ չէ տալիս մեռածներին, բայց գերադոյն Հրեշտակը կլսէ մեր աղաղակը»։

Բուրդիստանի բնակիչների մէջ կան նաև քրիստոնեայ ազանդաւորներ։ Դլխաւորը դրանցից Նեստորական կոչուածներն են, թէև այդ կոչումը չեն ընդունում նրանք և իրենք իրենց անուանում են «Մեսոիական Նազարեցի», «Աստրիքի Նազարեցի» կամ պարզապէս՝ Նազարեցի և նրանց լեզուն խակապէս արամական մի բարբառ է, որ ծագում է հին ասորերէնից (սիրիաք)։ Բարոզիչները մոռացին եբրայական լեզուն ուսանել իրենց աշակերտներին, որոնք զարմանալի դիւրութեամբ, կարելի է ասել թէ առանց սովորելու, հասկանում են այդ լեզուն [1]։ Աւելի բազմաթիւ են քան թէ եզիդիները,—թերևս երկու հարիւր հազար [2], և եզիդիների նման սիւռուած են ընդարձակ տարածութեան վրայ։ Հաւանականաբար որանց ազանդին են պատկանում՝ Զինատանի նեստորականները, որոնց այժմ միայն յիշատակն է մնացել, նաև Մալաբարի ծոմափի Նասրանի—Մոպլահները, որոնք ասորերէնն են գործ ածում. իբրև սրբազան լեզու և իրենց պէս են հա-

1) Ernest Renan, Association scientifique de France, 1878.
2) Millingen, Wild Life Amongs the Koords.

նաչում Բաբիլոնի պատրիարքին, որ նստում է Մուսուլում։ Յայտնի չէ թէ ո՞ր ժամանակ և ինչ պատճառով Պարսկաստանի և Թուրքական Քուրդիստանի նեստորականները թողին իրենց ազգական Հայրենիքը՝ գնալու և հաստատուելու Համար այլատեղ, այլաղեղաւ և այլակրօն ժողովուրդների մէջ։ Այս անցքը անկասկածաւաջ է հիջրէթից։ Երբ որ մուսուլմանները տիրեցին Միջագետքին՝ իրենց նեղութիւն չտուին յարձակուելու Վան և Ուրմիա լճերի միջև գտնուած ջուլամերկ լեռնային գաւառի վրայ, ուր նեստորականներն ունէին ամրոցներ և բազմամարդ հաստատութիւն։ Այս իրապէս անկախ քրիստոնեաներն իրենց դրութիւնն համարում էին անխոնջ, ասկայն 1843 ին շրջակայի մուսուլման քրդերը, խրախուսուած թուրքական կառավարութիւնից, թափուեցին նեստորական գիւղերի վրայ, պաշտպանուող այդ մարդկանց սրի անցկացրին, կանանց գերեցին, մանուկներին թլփատեցին և բռնութեամբ դարձրին մահմէտական, ապագայ թշնամի՝ իրենց տեսչական ընտանիքին։ Այժմ Թուրքիան չունի ջուլամերկի քրիստոնեաներից աւելի հնազանդ ժողովուրդ։ Շրջակայ քրդերի նման նրանք էլ բաժանուում են երկու դասակարգի՝ ազնուական կամ աշիրէթ (աշիրէթ) և շինական, որ շատ սակաւ է տարբերուում տարկից։ Քահանաների մի ամբողջ նուիրապետութիւն կառավարում է նրանց՝ Մար-Շիմուն կամ «Ցէր Սիմոն» կոչուած քահանայ—թագաւորի պատրիարքութեան ներքոյ։ Պատրիարքութեան յաջորդութեան կարգը անցնում է քեռուց քուերորդուն։ Ապագայ պատրիարքի մայրը, երբ արդէն յղի է՝ պարտական է բանջարակերութեամբ բաւականանալ, ինչպէս որ տպրում է նաև բոլոր բարձր հոգևորականութիւնը։ Եթէ յղացածի յոյսը զուր գուրս գայ և աղջիկ ծնի, այդ աղջիկը դատապարտուում է կուսակրոնութեան ցմահ 1)։

Նեստորականները շատ չեն հեռաքրքրուում այն ատատուածաբանական նրբութիւններով Յիսուս—Քրիստոսի մարդկային և աս-

1) Eugène Boré, Mémoires d'un voyageur en Orient;—Milinngen, արդէն յիշուած։

ուսածային ընութեան վերաբերութեամբ, որի հետևանքն եղաւ դեռատրի հերձուածը։ Բայց ծիսակատարութեանց տարբերութիւնը բաւական եղաւ ստեղծելու դարաւոր ատելութիւն նրանց և ուրիշ քրիստոնէական ազանդների միջև։ Բաղդէացիք, այն է՝ Միջագետքի և Զագրոսի քրիստոնեաները, որ ապրում են մեծ մասամբ սարերին երկրներում, Դիարբէքիրի շուրջը և Բաղդադից հիւսիս, ատանրվեցերորդ դարից Ջաքոնա-ում են, գոնէ պաշտօնապէս, հռոմէական կաթոլիկութեան հետ։ Սակայն պահպանել են իրենց նախկին դաւանութեան զանազան արարողութիւնները և քահանաները ամուսնացած են, բացառութեամբ բարձր հոգևորականութեան։ Բայց կան կաթոլիկ քարոզիչներ, որ աշխատում են բաղդէական արարողութիւնը հեռացնել Արևմտեան եկեղեցու արարողութեան։ Իսկ այն նեստորականները, որոնք հաստատրիմ են մնացել Ասորիքի նեղմիջէական դաւանութեանը, գլխաւորապէս 1831 թուից սկսած, գնում են ամերիկական քարոզիչների ազդեցութեան տակ։ Այս քարոզիչները մեծ վաթսուն հաստատութիւն ունին այդ երկրներում, օժանդակում են տեղական քահանաներին ուսմամբ և ուսումնարանների պահպանութեանը նպաստում։ Շատ անգամ էլ ազգու կերպով պաշտպանում են լեռնական քրիստոնեաներին թուրքերից և քրդերից։

(Կը շարունակուի)։

ՈՒՍՈՒՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՐԵՎԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ։

Կլիմայի, հողի և տեղական ուրիշ հանգամանքների համեմատ Կովկասը բաժանում են երկու մասերի, որոնք շատ են զանազանում մեկը միւսից—Ռիոնի և նրա վտակների աւազանը (Բուքայիսի նահանգը, Սոխումի, Արդուվինի, Բաթումի և Սև ծովի գաւառները) իր փոփոխական կլիմայով, յատուկ առհասարակ բոլոր ծովեզրեայ երկիրներին, յաճախ անձրևներով—կազմում է Կովկասի արևմտեան մասը։ Բարձր լեռնային շղթաները երեք կողմից շրջապատել են արևմտեան Կովկասը, իսկ Սև ծովը, բաղդի բերմամբ նրան պաշտպան է հանդիսանում արևմտեան կողմից։ Այսպիսի մի աշխարհագրական դիրքի պատճառով միայն, արևմտեան Կովկասում կլիման մեղմ է և օդը չափազանց խոնաւ, թէև միևնոյն ժամանակ չը պէտք է մոռանանք յիշել, որ այդ խոնաւութեանը շատ են նպաստում Սև ծովից փչող քամիները։ Կլիմայական բարերար հանգամանքները ազդում են բուսականութեան աճման վերայ և այդ է հէնց նորա հողագործութեան նպաստող հանգամանքներից մեկը։ Բարեբաղդաբար հողագործութիւնն այդտեղ չէ պահանջում արհեստական միջոցներ իր հողերի ոռոգման համար, քանի որ անձրևները ոչ միայն խոնաւ են պահպանում հողը, այլ և շատ տեղերում դարձնում են նրան ճահճային։

Բոլորովին ուրիշ բնաւորութիւն ունի արևելեան մասը (Երևանի, Տփխիսի, Բագուի և Գանձակի նահանգները)[1], որի հովիտներում կլիման խիստ տաք է, ստորոտներում մեղմ և լեռնային տեղերում ցուրտ։ Օդը և հողը չեն պարունակում այնքան խոնաւութիւն կամ ջրի առատութիւն, ինչպէս տեսանք արևմտեան մա-

---

1) Կովկասի արևելեան մասն են կազմում Ղարսի և Դաղստանի նահանգները (область), սակայն դրանց մասին այստեղ չենք խօսիլ։

տում։ Մինչև անգամ Կասպից ծովի ազդեցութիւնն էլ թուլանում է տեղական հանգամանքների շնորհիւ, այսինքն հողի որպիսութեան, լեռների, երկրի բարձր դիրքի և այլն։ Բացառութիւն է կազմում Էնքորանի գաւառի ծովեզերքը, որտեղի օդի և հողի խոնաւութիւնը յիշեցնում է մեզ Բուլթայիսի նահանգը։

Եթէ արևմտեան մասում աւելորդ է մտածել ջրերի մասին, այստեղ ընդհակառակն ոռոգման հարցն ամենալուրջ և կարևոր հարցն է շինականի համար։ Ասանց ոռոգման ջրանցքների ամեն ինչ խամրում է այս կլիմայի տակ և գետինը չորանում է ինչպէս փուռն կաւը։ բայց ուր որ հոսում է բարեբեր ջուրը, գետինն սկսում է կանաչել և ծաղկել, անապատի մէջ օվազիս է ծնում[2]։

Արաքսի և Կուրի հովիտներում ճանապարհորդը յաճախ է հանդիպում ընդարձակ, բերրի, բայց միևնոյն ժամանակ անմայր անապատ հողերի (Ղարաբաղի, Մուղանի, Կարաեազի, Մարդարապատի անապատները)։ Արեգակի կիզիչ ճառագայթները այրել կամ խանձել են մինչև անգամ վատ ու չոր բուսականութիւնը այդ մեծ և ընդարձակ անապատներում և միայն գետերի, գետակների կամ վտակների ափերի վերայ է կեանք նշմարւում...։ Այդ ջուրն է նրանց կեանք տալիս, ոչ մի ուրիշ միջոցներ չեն կարողանում զուարթացնել այդ անապատները։

Երևանեան կամ Հայոց նահանգը[3]) համարձակ կարող է անուանուել ոչ միայն արևելեան Կովկասի այլ և ամբողջ Ռուսաց պետութեան ամենաբերրի և հարուստ անկիւններից մին։ Բնութիւնը ոչ մի բանից չէ զրկել այդ հարուստ և երջանիկ նահանգը։ բերրի հողը, տաք կլիման, ջուրը, աշխարհագրական բարեյաջող դիրքը նպաստում են ամեն կերպով նրա ժողովուրդի բարգաւաճմանը։ Եթէ բնութիւնը այդպէս առատ չը վարձատրէր Հայոց նահանգը, այդ դէպքում նրա ողջ ստորին մասը սիտի ներ-

---

2) Է. Ռեկլիւ. «Ռուսակ. Հայաստան». թարգմ. Միրաբան. Վաղարշապատ, 1891 թ.։

3) Այժմեան Երևանեան նահանգը առաջ Հայոց նահանգ էր կոչւում։

կայացնէր անհուն ամայի անապատ։ բայց եթէ մի օր բոլոր ջրերը, որոնք առանց գործածութեան կորչում են գետերի մէջ բարձրանային և ուռուցին այդ անապատ դաշտերը, այն ժամանակ միայն Հայոց նահանգը աւելի կարդիւնաբերեր քան ամբողջ Կովկասը [4]։ Բայց և այնպէս ուրիշ երկրների գիւղացին շրջապատուած լինելով աւելի վատ հանգամանքներով գտնուում է աւելի լաւ տնտեսական պայմանների մէջ, քան մեր Երևանեան նահանգի երկրագործը, որը կամ մի կերպ կառավարուում է կամ ծանրացած է լինում պարտքերով։ Շատ և շատ սխալ կը լինէր գիւղացու նեղ տնտեսական պայմանները վերագրել նրա անընդունակ լինելուն հողագործութեան մէջ կամ թէ նրա ընդհանուր ստոր կուլտուրական զարգացողութեան։ Ընդհակառակը պէտք է արդար խոստովանել, որ Կովկասում բնակուող բոլոր ազգերի մէջ մեր հայ գիւղացին ամենաընդունակ և հմուտ երկրագործն է ճանաչուում։ իսկ եթէ նա հերկում է իւր հողը նոյն նահապետական անճոռնի գործիքներով, ինչով նրա նախնիքն են հերկել, դրա պատճառն է մի ուրիշ աւելի կուլտուրական տարրի բացակայութիւնը Երևանեան նահանգում։ Հարևան թաթարները հայերին լաւ մշակութեան օրինակ չեն կարող տալ երբէք, իսկ քուրդ հովիները մինչև այսօր էլ «թափառում են Արարատի պառէկներում, Արագածի կողերի և Սևանի ափերի վրայ» [5]։

Բայց կան և ուրիշ պայմաններ, որոնք նոյնպէս մեծ վնասներ են տալիս տեղական գիւղատնտեսութեանը։ Վերջին վաթսուն չորս տարիների ընթացքում 1828—30 և 1877—78 թուականների կռիւներից յետոյ Պարսկաստանի և Թիւրքիայի հայերից շատերը գաղթեցին և հաստատուեցան Արաքսի և Կուրի հովիտներում։ երկու անգամից աւելի շատացաւ Հայոց նահանգի ազգաբնակութիւնը, հետևաբար պէտք է աւելանար հողի և ջրի պահանջը։

---

4) Шопенъ. Историч. помятникъ состоянія. Арм. обл.

5) Է. Ռէկլիւ «Ռուսակ. Հայաստան». թարգմ։ Միսաքեան. Վաղարշապատ. 1891 թ.։

Այդ պատճառով էլ շատ իրաւացի է ակնարկում ուսուցչապետ Սողոմոն Եղիազարեանը, որ գիւղացու բարօրութեան ահարկու թշնամին այսօր ոչ թէ հողի պակասութիւնն է, այլ ջրի կարօտութիւնը [6]: Այն նայելով ազգաբնակութեան աճմանը, ջուրը ոչ թէ աւելացաւ այդ ժամանակամիջոցում, այլ և նուազեց, որովհետև տարէցտարի առուներից շատերը մնալով անհոգ վիճակի մէջ բոլորովին ոչնչացել էին կամ առաջուանից քիչ էին ջուր մատակարարում:

Հողերի ուռոգումն ամենանշանաւոր և կարևոր հարցն է դարձել Երևանեան նահանգի համար: «Ջրանցքներին սպասելով, որ նոր կենդանութիւն են տալու դաշտերին գրեթէ ամբողջ ռուսական Հայաստանի և առհասարակ Կովկասի երկրագործութիւնը խեղճ – տարրական վիճակի մէջ է [7]». Արաքսի և Կուրի հովիտներում, ուր ազգաբնակութիւնը շատ տեղերում խիտ է, մեծ կարիք է զգացւում ջրանցքների և բոլորովին դորանից է կախուած նրանց թէ ներկայ և թէ ապագայ տնտեսական դրութիւնը:

Երևանեան նահանգի հարուստ և բերրի հողերը ենթարկուած լինելով գրեթէ վեց ամսուայ ընթացքում արեգակի կիզիչ ճառագայթների ազդեցութեանը՝ մնում են առանց որևէ գործածութեան: Այդտեղ ջրի մեծ կարևորութիւն կայ, բայց հողերի բարձրը դիրքի պատճառով նպատակին կարելի է հասնել միայն արհեստական ամբարտակներով, որոնք մեծ ծախքեր են պահանջում:

Մի երկու գիւղացի միջոց չունին թանգագին ջրանցքներ կառուցանելու, իսկ հայ և թուրք ազգաբնակութիւնը դեռ հասկացողութիւն չունի հաւաքական ընդհանուր ոյժերով մի մեծ գործ ձեռնարկելու մասին: Մնում է, որ այդ գործին ձեռնամուխ լինեն դրա տերերը կամ ինքը կառավարութիւնը:

Ռուսաց կառավարութիւնը Հայոց նահանգը տիրելուց յետոյ այդտեղ պատրաստ գտաւ բոլոր այն ջրանցքները և առուները,

---

6) Сводъ матеріаловъ по изученію эк. быта гос. крест. т. I. ст. 136.

7) Ի. Ռեկլիս «Ռուս. Հայաստան». Թարգմ. Միսրան. Վաղարշապատ. 1891 թ.:

որոնց ծագումը, ինչպէս վկայում են ժողովրդական աւանդութիւնները և աւերակների մնացորդները՝ Տիգրան Բ-ի թագաւորութեան ժամանակներին են պատկանում (89 թիւ Ք. ծ. յառ.), իսկ դոցա նորոգութիւնները և կարգի բերելը—Պարսից տիրապետութեան օրերին [8]: Պարսից տէրութիւնը իր երկրում մեծ ուշադրութիւն էր դարձնում և ներկայումս էլ դարձնում է ջրի վրայ: Այնտեղ մեծ խնամքով են պահպանում ջրանցքները, որովհետև բոլոր կեանքը դրանցից է կախուած [9]: Դրեթէ ամբողջ Պարսկաստանը, որը զուրկ է գետերից, ուռոգւում է «քահրեզներով», որոնց մասին հոգս է տանում ինքը կառավարութիւնը: Այդ էր պատճառը, որ դոքա իշխելով Հայոց նահանգին ամեն տեսակ միջոցների էին դիմում ջրանցքներ և առուներ անց կացնելու համար. Հայոց նահանգը ամենից աւելի պարտական է վերջին սերդար Հիւսէին խանին, որի բազմօգուտ գործերը մեծ զարկ տուին այդ նահանգի հողագործութեանը և այգեգործութեանը:

Պարսիկները են փորել այս երկրի ուռոգման բոլոր կաւառները և մեծ հոգածութեամբ անց են կացրել առուները նեբքնուղիներով որպէս զի թանգագին հեղուկի գոլորշիացումը նուազ լինի. ուրեմն և պարսիկներն են այն բարերարները, որոնց պարտական են այս երկրի բնակիչները իրենց գոյութիւնը [10]:

Երևան քաղաքը աւելի պարտաւոր է յիշել այդ յայտնի ժողովրդական գործիչին, որի շնորհիւ նա այժմ թագուած է գեղեցիկ և բազմապտուղ այգիների մէջ: Ներկայ բոլոր առուները ստեղծուած են խելացի և գործունեայ սերդարի նախագծերով. նրա եռանդը, տոկունութիւնը, երկաթի կամքը և բնական խելքը շատ էին զանազանում նրան առաջուայ սերդարներից, որոնց մրցքերը մեծ մասամբ ժողովրդին հարստահարելու վրայ էր դարձրած: Իր սերդարութեան քսան երկու տարուայ ընթացքում (1806

8) Сборникъ Кавк. Общ. селск. хоз. выпуск III.

9) Ռէկլիւ. Ռուս. Հայաստան. Թարգմ. Մխաբան. Վաղարշ. 1891 թ.

10) Ռէկլիւ. «Ռուսական Հայաստան». Թարգմ. Մխաբան. Վաղարշապ. 1891 թ.

—1828) Հայոց նահանգի հմուտ տնտեսը մեծ առուներ անցկացրեց, այգիներ և անտառակներ գցեց։ Մօտակայ խանութիւններից շատերն էին թողնում իրանց տեղերը և տեղափոխւում Երևանեան խանութիւնը, որտեղ սերդարից օգնութիւն էին ստանում, հողագործութեան անհրաժեշտ գործիքներով, անասուններով, սերմերով և այլն։ Դալմի, Մամրի, Նորագիւղի, Սարդարաբադի, Աբուհաեաթի, և այլ առուները, որոնցից վերջինը շատ տարիներ իսափանուած մնալուց յետոյ, նորերում է նորոգուել—բոլորն էլ Հիւսէին խանի օրերով են անցկացրած։ Հռչակաւոր Դալմի այգիները գցած են նորա ժամանակ շնորհիւ Դալմի առուի. այդ առուն սկիզբ է առնում Երևանից դուրս ժայռոտ ու նեղ կիրճի միջից և անցնելով 350 սաժէն երկարութեամբ տունելի միջով Դեալմի բաղերի մօտ արդէն մի մեծ գետի տպաւորութիւն է անում։

Այդ բոլոր առուները Հիւսէին խանը անց է կացրել միայն ժողովրդի օգնութեամբ։ Համոզուած լինելով, որ գիւղացիների տրնտեսական վիճակը կը բարւոքուի միայն ջրանցքների շնորհիւ և տեսնելով, որ նրանք իրենց կամքով չեն ցանկանում ձեռնամուխ լինել այդ գործին, Հիւսէին խանը ուղղակի պարտաւորեցնում էր ժողովրդին պատրաստել հարկաւոր թուով բանուորներ։ Նա հրամայում էր և նրա հրամանին հնազանդւում էին բոլոր ստորադրեալները։ Արդարև, նա ստիպողական և խիստ միջոցներով էր կառուցել այդ բոլոր առուները, բայց այդ բռնակալութեան նպատակն էր—բարւոքել ագգաբնակութեան տնտեսական խիստ նեղ դրութիւնը։

Նորա ժամանակ չը կային մասնաւոր դրամատէրներ, որոնք, մեծ գումարներ ծախսելով, գետից առուներ դուրս բերէին, ոռոգէին ընդարձակ և ամայի անապատները և դորանից շահուէին ապագայում։ Այդ հին ժամանակներում, ինչպէս դեռ մեծ մասամբ և այժմ, ժողովուրդը կրթուած լինելով պարսկական ոգով, չէր աշխատում ինքը լաւացնել իր վիճակը։ Եթէ ժողովուրդը սպասում էր իր կեանքի բարւոքումը, այդ կամ ամենակարող Աստուածանից էր և կամ բարի և բազմախնամ սերդարից։ Պարսից կառավարութիւնը իր գանձարանի փողերով կառուցանում էր ահագին ջրանցք-

ներ ժողովրդի համար և յուրաքանչյուր փոխադարձաբար տարբերտարի յետ էր ստանում իր ծախսած գումարը տոկոսներով նոյն համայնքներից, որոնց հողերը ուռոգում էին նոր անցկացրած ջրանցքներով (1)։ Այդպես էին ժողովրդին կրկնել անցեալ օրինակները։ այդ պատճառով էլ նա քաջ համոզուած է, որ միայն կառավարութիւնը պէտք է հոգայ ջրանցքների մասին։ Կովկասի ժողովրդից չի էլ կարելի պահանջել, որ նա ուրիշ կերպ մտածէ կամ եւրոպացի գիւղացու նման ամբողջ համայնքով աշխատէ իր տնտեսական վիճակի բարւոքման համար։ Հեշտ չէ այդպես շուտ ազատուիլ պարսկական անհոգութեան, անտարբերութեան և անշարժութեան ոգուց, որով կրթուել է նա մի քանի դար շարունակ։ Յուսալ, որ ժողովուրդը բարենորոգութիւններ կը մտցնէ տնտեսութեան մէջ, կարելի է միայն այն ժամանակ, երբ լուսաւորութիւնը և գործնական գիտութիւնը մուտք կը գործէ նորա նեղ, մութ և խոնաւ խրճիթը։ Եւրոպայի պէս քաղաքակրթուած երկրում միայն ժողովուրդն իւր սեպհական ուժերով կատուցանում է ահագին աշխատանք և գումարներ պահանջող ջրանցքներ։ Ֆրանսիայի հարաւային դեպարտամենտներում, Վալէնսիայում, Պիեմոնդում, նոյնպէս Պերմնիայում և այլ շատ տեղերում ընդհանուր ուռոգման մասին հոգ են անում գիւղացիք և փոքր կալուածատէրները, որովհետև նոցա համար պարզ է, թէ ինչպիսի գործեր կարելի է անել առանց մեծ գումարների, երբ միայն ամբողջ գաւառները նուիրում են իրենց ոյժերը այդ գործին։ Սակայն վերոգրեալ միտքը շատ խորթ պիտի թուի մեր գիւղացուն, որովհետև նա դարերի ընթացքում սովորել է կառավարութեան հոգատարութեան յանձնել գիւղական հողերի ուռոգումը և նրանից սպասել իր խեղճ, անել դրութեան բարւոքումն։

II.

Վերջին սերդար Հիւսէին խանի օրերով, ինչպէս վերև յիշեցինք, մեծ ուշադրութիւն էր դարձնում ուռոգման հարցի վերայ, բայց

(1) Сбор. Кавк. общ. Сел—хоз. Вып. III.

նրա անկումը շուտով հանում է, երբ Հայոց նահանգը ռուսների ձեռքն է ընկնում: «Զը նայելով, որ Ռուսաց կառավարութիւնը նոյնպէս միշտ ցոյց էր տալիս իր հոգացողութիւնը ջրանցքների մասին, սակայն հարկաւոր է խոստովանել, որ այդ հոգսերը յաճախ ապարդիւն էին լինում[12]):

Պարսից տիրապետութեան ժամանակ ջրի վերաբերմամբ կային որոշ, առանձին կանոններ, որը ժողովուրդը պատրաստ էր ճշտութեամբ կատարել: Այնպէս որ այդ ժամանակ իւրաքանչիւր մարդ պարզ հասկանում էր և ճանաչում թէ իր և թէ ուրիշների իրաւունքները: Այդ էր պատճառը, որ գիւղական ազգաբնակութիւնը յայտնի և որոշ հայեացք էր կազմել ջրի մասին: Ժամանակը ստեղծել էր յայտնի մի կարգ ջրից օգտուելու համար և մի երկար շարք կանոնների, որոնց հետ սերտ կապուած էր գիւղացին[13]): Այդ ինքնուրոյն կարգերը և կանոնները այնքան իրար արմատներ էին ձգել ազգաբնակութեան մէջ, որ ոչ երկրի վարչական փոփոխութիւնը, և ոչ միրաբների կամ ուրիշ պաշտօնեաների կամայականութիւնը չէին կարող արմատախիլ անել ժողովրդի իրաւախոհութիւնից նրա հին սովորութիւնները: Երևանեան նահանգի անցեալ կառավարիչների ժամանակ ջրի իրաւունքն ապահովուած էր ինքնուրոյն «տոմարներով», որոնք մնացել են մինչև այսօր դեռ ժողովրդի յիշողութեան մէջ[14]):

Պարսկական տիրապետութեան ժամանակ Երևանեան սերդարութիւնը բաժանում էր քսան երեք մահալների: Մահալը — դա դետի ջրաբաշխն է: Իւրաքանչիւր մահալում ջրերը յանձնվում էին միրաբին, որը պարտաւոր էր կանոնաւոր կերպով ամենայն ճշդութեամբ բաժանել ջուրը գիւղական համայնքների մէջ, համայնքի ջրի քանակութեան համեմատ նշանակել, թէ որքան պէտք է լինեն ամենայն մի բոյսի ցանքսերը և հսկել ջուվարների վրայ: Միրաբին նշանակում էր խանը կամ թէ ինքը սերդարը:

---

12) Сборникъ Кавк. общ. селск. хоз. Выпускъ III.

13) Сводъ матеріаловъ по изученію Гос. крест. т. I.

14) Егіазаровъ.

այդ դէպքը շատ էր բարձրացնում նրան ժողովրդի աչքում: Միրաբի ստորադրեալ ծառայողները—ջուվարներն էին, որոնք պարտական էին պահպանել առուն և կաւառը (բեանդ), հսկել, որ ջուրը հերթով բաժանուի առանձին համայնքների մէջ և տեղեկութիւն տալ միրաբին առուի վերայ պատահած անկարգութիւնների մասին [15]: Միրաբների դերը Պարսից տիրապետութեան ժամանակ ծանր և պատասխանատու էր. այդ էր պատճառը, որ միրաբը միայն մի տարուայ ժամանակամիջոցի համար էր նշանակւում: Միրաբի անհոգութիւնը կամ թուլութիւնը մեծ վնաս էր պատճառում Պարսից գանձարանի արդիւնքներին, որովհետև հարկերը ժողովւում էին հողի արտադրութիւններից:

Բոլոր ջրերը Պարսից տիրապետութեան ժամանակ բաժանվում էին երկու կարգի—բնական և անբնական («հանած ջուր»): Այսպիսի մի բաժանումը իրաւաբանական տեսակէտից մեծ նշանակութիւն ունէր. ամենայն ջուր, քանի որ նա բնական դրութեան և աւազանի մէջ է գտնւում (լիճ, գետ, վտակ, հեղեղ, ճահճային ջուր և այլն), պատկանում էր եգերաբնակ ազգաբնակութեանը հաւասարաչափ. ընդհակառակն՝ անբնական կամ հանած ջուրը (առու, քեայրեզ և այլն) միակ մասնաւոր անձնաւորութեան կամ որոշ համայնքի սեպհականութիւն էր կազմում [16]:

Ջուրը արևելքում պատկառանք և համակրանք է վայելում թէ ժողովրդի և թէ կառավարութեան կողմից: Արգելքներ դնել ջրի անցքի դէմ անկարելի է: Իբրև ապացոյց, առաջ եմ բերում Պարսկաստանի ջրաբաշխական օրէնքներից մէկը, որ ասում է, թէ «եթէ անհրաժեշտ լինի ջուր անցկացնել մի տեղից, բայց արգելքի պատահեն, օրինակ՝ ճանապարհին պառկած լինի յղի կին [17]»,

---

15) Հիմայ թոյլ հսկողութեան պատճառով առուի սկզբում բնակուող գիւղերը մեծ մասամբ ջրի գողութեամբ են պարապվում՝ սեպհականացնելով իրանց ստորին գիւղի ջրերը:

16) Егіазаровъ. Администр. эк. оч. общ. Эрив. губ.

17) Ցայտնի բան է, որ պարսիկների համար յղի կինը գրեթէ սրբութիւն է համարւում:

այդ դէպքումն էլ չը վհատուիլ, այլ պատառել փորը և նրա միջից ջուրը անցկացնել»[18]: Պարզ է, որ Պարսկաստանի պէս մի երկրում, ուր կլիման շատ շոգ է, և հողը աւազային կամ աղտաղտուկ, կարող էր դոյութիւն ունենալ այսպիսի մի օրէնք: Մի ուրիշ օրէնք, որ ապացուցանում է, թէ մասնաւոր շահերը ոչինչ էին ընդհանուր տնտեսական և հողագործական շահերի առաջ. «Մասնաւոր կալուածատէրը իրաւունք չունի արգելել ուրիշին անցկացնելու ջուրը իր հողի միջով կամ պահանջել մի որ և է վարձատրութիւն ջրի ճանապարհի համար»: Պարսկաստանի այդ ջրաբաշխական օրէնքը Հռոմի «ջրանցքի սերվիտուտն է» – rivus կամ aquaeductus.

Զը նայելով, որ քեայրեկը, հորը, կամ այլ հանած ջուրը, ինչպէս վերև յիշեցինք, միայն մասնաւոր սեպհականութիւն է կազմում, սակայն կար օրէնք (հրամայական aquae haustus), որ թոյլ էր տալիս իւրաքանչիւրին օգտուելու այդ ջրից անասունների կամ տան գործածութեան համար: Կային և այլ դէպքեր, երբ իրաւունք էր տրվում ազատութեամբ օգտուելու ուրիշի ջրից: Եթէ ջուրը, նրա տէրի անհոգութեան շնորհիւ դուրս կը գար հողի սահմանից, նա «աւելորդ ջուր» էր համարում և նրանից օգտուել իրաւունք ունէին հարևան հողատէրերը: «Քամից»[19] կամ ոռոգելուց յետոյ աւելորդ մնացած ջրից օգտուիլը—նոյնպէս դրացի հողատէրների իրաւունքն էր: Վերջապէս թոյլ էր տրուում համայնքի անդամներին գործածել ուրիշի ջուրը անհրաժեշտ շինութիւններ կառուցանելու համար:

Զը նայելով, որ ընդհանուր օրէնքի համեմատ ոչ մի ծուխ, ոչ մի կալուածատէր չէր կարող զրկուել իրան պատկանող ջրից, բայց կար մի դէպք, երբ միրաբին իրաւունք էր տրուում խափանել կարճ ժամանակով մահալի բոլոր ջրերը: Ջրի խափանման իրաւունքը տեղի էր ունենում «դիրդաւ» ժամանակ[20]: Ամարային տաք ա-

---

18) Сборникъ Кавк. общ. селск. воз. Выпуск. III. (ст. Ханагова).

19) «Քամ» քամել խօսքից է։

20) Պարսկերէն «դիրդաւ» նշանակում է ջրի խափանումն կամ դադարումն։

միներին, երբ արևի ազդեցութեան տակ ջուրը գետերում և առուներում սակաւանում է, և նրա նուազման պատճառով քիչ ջուր ունեցողների ցանքսերը պէտք է չորանային — ահա երբ է խախտւում այդ օրէնքը: Իսկոյն և եթ խափանում են առուի բոլոր երկրորդական ճիւղերը և սկսում են ոռոգել առաջ ամենաթշուառ վիճակի մէջ գտնուող ցանքսերը, իսկ յետոյ աստիճանաբար ուրիշ համայնքների ցանքսերը, մինչև որ ջրուին բոլոր համայնքների հողերը: Բացի այս դէպքից երբէք չէր սահմանափակւում կամ խափանւում ջրի իրաւունքը [21]):

Ջրի զողութեան պատճառով, խիստ հսկողութիւնը և անողորմ պատիժը ստիպում էր ազգաբնակութեանը ճանաչել թէ իր և թէ ուրիշների իրաւունքները: Ցանցաւորները պատիժ էին կրում պաշտօնեաներից և այն անձնաւորութիւններից, որոնց իրաւունքները ջրի վերաբերմամբ խախտւում էր: Եթէ հողատէրը բռնում էր յանցաւորին ջուր զողանալու ժամանակ, օրէնքը նրան թոյլ էր տալիս պատժել յանցաւորին: Իսկ եթէ հողատէրը չէր կարողանում ինքը պաշտպանել իր իրաւունքը, այն ժամանակ համայնական կառավարութիւնը յանցաւորին մարմնական պատժի էր ենթարկում: Բայց պատահում էլ էր որ մէկը օգտւում էր ուրիշի ջրից, հերթից դուրս, այդ դէպքում համայնական կառավարութիւնը ստիպում էր յանցաւորին հէնց միւս օրը գնել նոյն քանակութեամբ ջուր յօգուտ վնասուածի:

Ինքնուրոյն և խիստ էին գուցէ, մեր այժմեան տեսակէտից, ջրի վերաբերեալ այն ժամանակուայ օրէնքները, բայց չը պէտք է մոռանալ, որ նոցա անմիջապէս ժողովրդի հողագործութեան և բարօրութեան էին նպաստում և նրա աչքում իրրև սրբութիւն էին պաշտւում [22]): Վերջապէս խիստ կանոնները առիթ չէին տալիս այն անկարգութիւններին և կամայականութիւններին, որոնք այժմ յաճախ են կրկնւում ջրի պատճառով:

ՅՈՎՍ. ԱԹԱԲԻԳԵԱՆՑ.

---

21) Егіазаровъ. Админ. эк. ог. общ. Эрив. губ.

22) Сборникъ Кавк. общ. селск. хоз. Выпускъ III.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԻՆՕԳԻ ՕԳՈՒՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

2 Յունուարի. Թիֆլիսի թեմի խեմարան գիւղի Մովսէս քահանայ Մեծուզեանցի խնդիրը՝ որով խնդրում է Գորի քաղաքը տեղափոխուել, մերժուում է, քահանաների տեղափոխութիւնը արգելուած լինելով։

—

2 Յունվ. Մայր Աթոռոյ ատարանին տրուում է երեք ժապաւինեալ տումար՝ Ա. Բ. Գ. այդ հատատաութեան մուրն ու եղքը գրքերը և բոլոր իրեղէնները յուցակագրելու համար։

—

2 Յունվ. Վանական կառավարութեանը տրուում է եօթը ժապաւինեալ տումար՝ Ա – Է. տառերով պատուիրելով գրել տուաջինում՝ Մայր Աթոռոյ ամեն տեսակ ծախսերը, երկրորդում՝ Հեմարանի, երրորդում՝ Մուանի պաշտպանեղինայ, չորրորդում՝ Ցղարանի, հինգերորդում՝ Միաբանից, վեցերորդում՝ Ագարակի և եօթներորդում՝ նորոգութիւնների, կարկատանների, վարպետների և մշակների ծախսերը, վաւերացնելով իւրաքանչիւր յօդուածը պատշաճաւոր ստորագրութեամբ և տարուայ վերջը ներկայացնել Սինօդին՝ ապացուցական թղթերով և համառօտ ցուցակներով միասին վերաքննութեան համար։

—

2 Յունվ. Մայր Աթոռոյ գանձարանի՝ 1892 տարուայ ընթաց-

քում մուտքն ու ծախսը անօրինելու համար՝ Սինոդի երկու անդամների և պրոկուրորի ստորագրութեամբ վաւերացուած երկու ժողովական տումար առաքուեց բարեշնորհ գանձապահին պատուիրելով՝ դրանցից մէկում գրել Մայր Աթոռի գրամական բոլոր մուտքն ու ծախսը այս 1892 տարուայ ընթացքում և միւսում՝ աւանդապահութեանը՝ իւրաքանչիւր յօդուածը համեմատ Սինոդի գրաւոր պատուէրներին և այդ տումարները իւրաքանչիւր ամսի սկզբում ներկայացնել Սինոդին ի տեղեկութիւն՝ իսկ տարուայ վերջում՝ վկայագրերով և համառօտ հաշուեցուցակներով միասին՝ ի վերանայութիւն։

—

2 Յունվ. Սինոդի Դատաստանական մասի գործավարի պաշտօնակատար Բերք Տէր-Պետրոսեանի արձակման պատճառով ազատուած 106 ռուբլի 56 կոպէկը բաժանուեց՝ ըստ տրամադրութեան Օրէնքի՝ Սինոդի ատենադրներին։

—

2 Յունվ. գանձարանի Աւանդապահութեան բաժնում մնացած՝ կապիտան Եղիշէ Սուքիասեանի գրաւականի մնացորդը վերադարձնում է իրեն։

—

2 Յունվ. Սինոդը վերաղնեց 1891 ամի Մայր Աթոռի մուտքի և ծախսերի տումարները՝ որից երևեց՝ Արդեանց տումարում մուտք 150907 ռուբլի 67 կոպ. ծախք՝ 109368 ռուբլի 30 կոպ.՝ մնացորդ առ 1-ն յունուարի 1892 ամի՝ 41539 ռուբլի 37 կոպ. Աւանդապահութեան տումարում մուտք՝ 38871 ռուբլի 2 կոպ. ծախք՝ 10281 ռուբլի 78 կոպ. առ 1-ն յունուարի մնացորդ՝ 28586 ռուբլի 24 կոպ.։

—

2 Յունվ. Տէր Տեղակալը և Սրբազան Անդամները ժողովելով Մայր Աթոռի գանձարանում ի ներկայութեան պրոկուրորի՝ ըստ տրամադրութեան 48-դ յօդուածոյ Պօլժենիցի՝ գնեցին անցեալ դեկտեմբեր ամսի հաշիւները։

—

2 Յունվ. Սինոդը զիջանելով Սահակ վարդապետ Բաղդասարեանցի աղերսագրին—որով թախանձում էր տեղափոխել իրեն Սևանից մի որ և իցէ ուրիշ վանք, որովհետև չէ կարողացել տանել Սևանի խունաւութեանը և մշտապէս հիւանդ է,—անօրինեց տեղափոխել նրան Աղիանու Ս. Աստվածածնոյ վանքը, որի վրայ նա ձեռնադրուած է, այնտեղ ապաշխարելու։

—

3 Յունվ. Մերժուեց Կարսի Հոգևոր Կառավարութեան միջնորդութիւնը այնտեղի քարտուղարին Սանիսլաւի 3-դ աստիճանի շքանշանով վարձատրելու մասին, այլ և յանդիմանուեցին յիշեալ Կառավարութեան անդամները, որոնք քարտուղարին ջատագովելու համար վատահայել են ստուեր ձգել նախկին փոխանորդների օգտակար գործերի վրայ։

—

3 Յունվ. Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիան խնդրում է թոյլ տալ Տաւրիկեան նահանգի Եալտայ քաղաքում աղօթատուն հաստատել այնտեղի օրից օր աճող հայ գաղթականների համար, որոնք 1888 թուին կազմել են մի ընկերութիւն «Հոգատար ընկերութիւն Հայոց Եալտայի» անունով, հաստատուած հրամանով հոգեշնորհ Հայրապետի և վիճակի հանգուցեալ առաջնորդի։ Այդ ընկերութեան նպատակն է Եալտայում Աղօթատուն հաստատել, ժամանակին նաև եկեղեցի, եթէ միջոցները ներեն։ Սինոդը յարգեց Կոնսիստորիայի միջնորդութիւնը, թոյլ տալով աղօթատուն բանալու, մնրմնաւոր իշխանութեան հետ պատշաճաւոր հաղորդակցութիւնից յետոյ, բայց արգելեց աղօթատան մէջ պատարագի համար շարժական սեղան ունենալը, որ հակառակ է Հայաստանեայց եկեղեցու սովորութիւններին։

—

3 Յունվ. Ս. Գեղարդի վանքի վանահայր Վարդան վարդապետը արձակուելով իւր պաշտօնից՝ կարգուեց Մայր Աթոռոյ Ագարակի տեսուչ։

—

8 Յունվ. Շամախու Կոնսիստորիան յայտարարում է, որ Սարգիս աւագ քահանայ Փիրվերդեանցը և Սահակ աւագ քահանայ Տէր-Սահակեանցը անձնական տկարութեան և զառամութեան պատճառով իրենց խնդրի համաձայն արձակուեցան՝ առաջինը Կոնսիստորիայի անդամութիւնից և երկրորդը քահանայագործութիւնից: Վերջինիս ժողովրդի հովուութիւնը առժամանակ յանձնուած է Դիրք գիւղի Վահան քահանային, այն պայմանով, որ գոյացած տրդիւնքները համահաւասար կերպով բաժանուին Սահակ և Վահան քահանաների մէջ: Կոնսիստորիան յայտնում է նաև, որ Վահան քահանան նշանակուած է Կոնսիստորիայի անդամ: Հրամայեցին. Վահան քահանային վերադարձնել Դիրք, որի ժողովրդի վրայ ձեռնադրուած է նա, որովհետև քահանաների տեղափոխութիւնը տրգելուած է: Իսկ Սրբազան Աւագնորդը կարող է նրա տեղը հրաւիրել մի ուրիշին քաղաքի քահանաներից իբրև Կոնսիստորիայի անդամ, իսկ ժողովրդի հովուութիւնը յանձնել մի այնպիսի քահանայի, որի մասին հաւանութիւն կը յայտնէ ինքը ժողովուրդը:

—

10 Յունվ. Սինոդի Դիւանապետ Ստեփանոս Մուշեղեանցը 35 տարի հաւատարիմ ծառայութեանը հետևանք առաջարկում է Ս. Վլադիմիրի 1-ի տասիճանի շքանշանն ստանալու:

—

10 Յունվ. Երևանի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը յայտարարում է, որ քաղաքի հրապարակում մամաճաուութիւնը տրգելուած լինելով՝ կապալառուն հրաժարուում է պայմանաւորուած տրդիւնքը հատուցանել դպրանոցին, որով անհնարին է դառնում դպրանոցը բարւոք կառավարել, ուստի և խնդրում է Սինոդից կարգադրել, որ թեմի բոլոր գործակալները պարտաւորուին Կոնսիստորիայից գնել՝ կանխիկ վճարելով, իրենց եկեղեցիների հարկաւոր եղած մոմը, որով թէ դպրանոցի եկամուտը կապահովուի և թէ եկեղեցիները կազատուին դրսից գնուած անպիտան մոմից, որի գործադրութիւնը ապտականում է սրբազան անօթները և եկեղեցական զարդերը, այլ և նրանց այրուածքի

անախորժ թղթումը խանգարում է աղօթաւորների աղատ շնչառութիւնը և վնասում է նրանց առողջութեան։ ՀՐԱՄԱՅԵՑԻՆ՝ զիջանելով Երևանի թեմական Դպրանոցի հոգաբարձութեան խնդրին՝ շրջաբերական հրամանով պատուիրել բոլոր գործակալներին՝ որ պարտաւորեցնեն նրանք Երևան քաղաքի բոլոր եկեղեցիներին՝ այլ և Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուրի, Կոտայքի և Ծաղկաձորի գաւառների բոլոր եկեղեցիների երեցփոխաններին միմիայն Կոնսիստորիայից գնել կնքած մոմ։ Իսկ Կոնսիստորիային պատուիրել պահել ժառաւինեալ մատեան՝ որի մէջ ուրոյն ուրոյն գրուի ամեն մի եկեղեցու վաճառուած մոմը մոմավաճառի ձեռքով և իւրաքանչիւր յօդուածը վաւերացուի գնող երեցփոխանի ստորագրութեամբ՝ այլ և տարուայ վերջում մոմավաճառից առնելով այդ տումարը բաղդատել երեցփոխանների տումարների հետ և եթէ տարբերութիւն գտնուի՝ յանցաւորներին պատժել տուգանքով և արձակել պաշտօնից։ Այլ և պատուիրել երեցփոխաններին չը գործադրել եկեղեցիներում կոճառներ՝ այլ այդ վերադարձնել կապալաւորին ըստ 10-դ յօդուածի դաշնագրին։

—

10 Յունվ. բարեշնորհ Սահակ սրբազան Ամատունին չափազանց զբաղուած լինելով իբրև վանական կառավարութեան անդամ՝ իբրև մատենադարանապետ և իբրև վերակացու Վեհարանի գոյքից՝ ազատ է կացուցանուում Տպարանական Խորհրդի անդամութիւնից։ Այդ պաշտօնին նրա փոխանակ կարգւում է բարեշնորհ Նիկիտա սրբազան Սուքիասեանը։

—

10 Յունվ. Տէրութեան օրէնքների XI-դ հատորի 985 յօդուածի 13 և 14 պարբերութեանց տրամադրութեան համաձայն՝ շրջաբերական հրամանով պատուիրուեց թեմական տեսաններին կազմել 1891 թուի համար պահանջուած հաշիւները և ցուցակները և ներկայացնել Սինոդին մինչև առաջիկայ տպրիլի վերջը։

—

17 Ըստ կարգադրութեան Ամենապատիւ Տեղակալի՝ Սինոդի

անգամ՝ Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոս Ազուանեանը ծառայութեան գործով ուղևորուում է Թիֆլիս ամսի 13-ին։

—

17 Յունվ. Սևան անապատի միաբանութիւնը յունուարի 2-ին յայտարարութեամբ դիմում է Սինոդին, յայտնելով վանահայր Կարապետ վարդապետ Բիւլբիւլեանցի մահը և խնդրելով թոյլատրութիւն ըստ վաղեմի սովորութեան ընտրել իրենց համար վանահայր։ Սինոդը իրաւունք է տալիս յիշեալ միաբանութեանը կատարել վանահօր ընտրութիւնը և առաջարկել այդ Սինոդի հաստատութեանը։

—

17 Յունվ. Էջմիածնի Միաբան բարեշնորհ Կիւրեղ աբեղայ Կիւրեղեանցը կարգւում է գործակալ Նոր-Բայազիտու և Ծաղկաձորի (Դարաչիչակ)։ բարեշնորհ Անտոն վարդապետը՝ վանահայր Խոր-Վիրապի։ իսկ Խոր-Վիրապի վանահայր բարեշնորհ Գրիգոր վարդապետ Տէր-Ստեփանոսեանը նոյն պաշտօնով փոխադրւում է Ս. Դայիանէի վանքը։

—

17 Յունվ. անցեալ դեկտեմբ. 21-ին Տէր Տեղակալը և Սինոդական անդամները ժողովուելով գանձարանը կորեցին Մայր Աթոռի և Ջեմարանի բանկային տոմսերի կտրօնները՝ տրքունի բանկին ուղարկելու համար։

—

17 Յունվ. պատուիրուեց վանական կուսակրութեանը Ջեմարանի ծախսից տումարում գրել 306 ռուբլի։ որ Ջեմարանի Սրբազան Տեսուչը տուել է պ. Ս. Կանայեանցին իբրև ճանապարհածախս։

—

20 Յունվ. մերժուեց Մկրտիչ Ջենաեանցի խնդիրը։ որ խնդրում էր գործավարի պաշտօն Սինոդում պարապ տեղ չը լինելու պատճառով։

—

20 Յունվ. Հրամայեցին. որոմհետև ինչպէս տեսնւում է գոր-

ծից՝ Գարեգին քահանայ Բաղդասարեանցը ձեռնադրուել է Եկատերինոդար քաղաքի ժողովրդեան փոքրաթիւ մասի և շրջակայ անքահանայ գիւղերի վրայ, իսկ խնդրատուների թշնամութիւնը յիշեալ քահանայի հետ արդէն յայտնի է Սրբազան Առաջնորդի յանուն գործակալին տուած աւաջադրութիւնից, որի մէջ ասուած է. «Հակառակորդք նորա ուխտեալ են ոչ ուտել և ոչ ըմպել մինչև հեռացուցեն զնա», ուստի՝ Գարեգին քահանան Եկատերինոդարից հեռացնելու համար կազմուած յանձնաժողովի խնդիրը մերժել, որովհետև քահանաների տեղափոխութիւնը արգելուած է։ Իսկ եթէ յիշեալ քահանան որ և է յանցանք ունի գործած, այդ մասին կարող են դիմել Առաջնորդին, որը և կը նշանակէ պատիժ, համեմատ յանցանքին։

—

20 Յունվ. Կովկասեան զինուորական շրջանի շտաբի գրութիւնից երևում է, որ տեղական պահեստի զօրքերի Արդահանի և Նոր-Բայազիտի գնդերի և ուրիշ տեղական զօրաբաժինների համար սահմանուած է հայ քահանայի պաշտօն՝ 441 ռուբլի ռոճիկ և 99 ռուբլի ննդադրամով. Այդ պաշտօնի համար միջնորդութիւն էր եղած Երևանի Տէր-Գրիգոր Սուքիասեանց քահանայի համար։ Վերադարձնելով այդ քահանայի ցուցակ ծառայութեանը, յայտնել կով. զինուորական շրջանի շտաբին, որ ծխատէր քահանաներին իրենց ժողովրդից հեռացնելը արգելուած է։ Ուստի և Սինոդը շտաբի հաճութիւնն է հարցնում՝ հայ զինուորների համար յատկապէս նոր քահանայ ձեռնադրելու համար։ Այդ քահանան բնակուելու է Թիֆլիսում և լինելու է բարեբարոյ և ուսումնասիրտ անձն։ Ընտրութիւնը կատարելու է Սինոդը։

—

22 Յունվ. Սինոդի անդամ՝ Արիստակէս Դաւթեան Սրբազանը օծել է անցեալ նոյեմբերի 11-ին Կուաշ (Կոշ) աւանի նորակառոյց եկեղեցին։ Հրամայուեց այդ եկեղեցու շինութեան վերատեսչին, լրացնել պարսպի թերին և քարակոյտերը վերցնել շինութեան մօտից։

22 Յունվ. Տէր Տեղակալը աւաջադրեց Սինոդին իւր անունով տրուած երկու հրաժարականներ, որով բարեշնորհ Բարգուզիմէոս վարդապետ Գէորգեանը և պ. Կարապետ Կոստանեանը հրաժարւում են Ուռումնարանական վարչական Յանձնաժողովի անդամութիւնից։ Տէր Տեղակալը աւաջադրում է հրաժարուածների փոխանակ կարգել Ջեմարանի Դեր. Տեսչին և բարեշնորհ Լևոն աբեղայ Խաչատեանցին։ Բարգուզիմէոս վարդապետի հրաժարականից երևում է, որ նա հրաժարւում է հիւանդութեան պատճառով, մանաւանդ, որ ծանրաբեռնուած է և Սինոդի անդամութեան և Գանձապահութեան պաշտօններով. իսկ պ. Կոստանեանցը գրում է իւր հրաժարականում։ «Երեկ Ձեր Արբազնութիւնից հաւատիանալով, որ Էջմիածնի Սինոդը ըստ իւր նկատողութեան վերակազմել է արդէն Ուռում։ Վարչ. Յանձնաժողովը, որը հաստատուած էր հանգուցեալ Հայրապետի կոնդակով (1889 ամի 10 հոկ. թ. 510)։ Արդ՝ որովհետև Յանձնաժողովի կազմակերպութեան գործին Սինոդի միջամտելուց յետոյ այդ Յանձնաժողովի պարտքերի և իրաւունքների սահմանները անստուգութեան մէջ են մնում, որից անշուշտ ծագելու է գործավարութեան եղանակի բազդրութիւն և անակնուելի տարակուսանքների յաւելումն, վասնզի ապագայ ծանր պատասխանատուութիւնից խոյս տալու համար, համարձակւում եմ Ձեր Արբազնութիւնից խնդրել համարել ինձ հրաժարուած Ուռում։ Վարչ. Յանձնաժողովի անդամակցութիւնից, որին կարգուած էի յիշեալ Հայրապետական կոնդակով և ընկերակցութեամբ Նահապետ աբեղայի ու պ. Սեդրակ Մանգինեանի»։ Սինոդը արձակեց խնդրատուներին իրենց պաշտօններից և նրանց փոխանակ կարգեց Տէր Տեղակալի աւաջադրածներին։

—

22 Յունվ. Տրուեց գանձարանից Վանական Կաւավարութեանը ութ հազար ռուբլի յունուարի ծախսերի համար։

—

24 Յունվ. Երևանի կոնսիստորիայի ատենադպիր Զաքարիա Տէր-Զաքարեանցը, լրացրած լինելով հաւատարիմ ծառայութեան

35 տարին, աւաջարկուեց վարձատրութեան Ս. Վլադիմիրի Ջորջորդ աստիճանի շքանշանով։

—

24 Յուն. Նոր-Բայազիտի գործակալ բարեշնորհ Կիւրեղ աբեղային կարգուեց 500 ռուբլի ռոճիկ և միանուագ հրամայուեց տալ պաշինեերից մի խալատ ցորեն և մի խալատ գարի, այլ և մի ձի՝ վանքից։

—

29 Յունի. Մայր Աթոռս Երևանում ունեցած «Նորագիւղի» այգին տրուեց կապալով հրապարակական աճրդախօսութեամբ՝ տարեկան 650 ռուբլով, երեք տարի ժամանակով։

—

8 Փետրուարի. Տէր Տեղակալը և անդամք Սինօդի, պ. Պրոկուրօրի ներկայութեամբ ժողովեցան գտնուարանում՝ յունուարի մնացին ու ելքը զննելու համար։ Արդեանց ստացում մնաց երևեցաւ՝ 15619 ռ. 16 կոպ., ծախք՝ 8300 ռուբլի։ Աւանդապահութեան ստացում մնաց՝ 9 ռուբլի, ծախք՝ 1439 ռ. 12 կոպ.։

—

10 Փետր. Ս. Շողակաթ վանքի վանահայրը՝ Խորով վարդապետ Փիլիպոսեանցը, ուղարկուեց Սևանի անապատը՝ ապաշխարութեան։

—

10 Փետր. Արքեպան Աղաանեանցը վերադարձած լինելով Թիֆլիսից, հրաւիրուեց պաշտօնատարութեան Սինօդում։

—

10 Փետր. Կարսի վիճակի, Փոքրուան գիւղի բնակիչ Խանում Պապիկեանցին, որի մարդը՝ Յակոբ Մուրատեան, ապանութեան համար դատապարտուած է ատժանակիր աշխատութեան, թոյլ տրուեց նորից ամուսնանալու, ում հետ որ ցանկանում է։

—

10 Փետրուարի. Մայր Աթոռս վանական պ. Ռուբէն Հասան Ջալալեանցին տրուեց գործակարութեան ծախք՝ 57 ր. 70 կ.

12 Փետրուարի. Ճեմարանի գեր. տեսչի յայտարարութիւնից երևում է, որ սրանից երեք տարի առաջ Հռիփսիմում Սահակ վարդապետ Բաղդասարեանցը, իբրև քարտուղար Վ. Եհափ. Հայրապետի, ստացել է Ճեմարանի աշակերտ Համբարձումի Տէր Վարդանեանցի հօրից 50 ռուբլի իբրև գրաւական Ճեմարանին յանձնելու։ Այժմ երբ աշակերտը վերադառնալու է հայրենիք և պահանջում է իւր գրաւականը, ներկայացնելով Բաղդասարեանց վարդապետի ստացագիրը, հաղիւ ուրեմն իմացուում է, որ այդ գումարի մասին բնաւ տեղեկութիւն չէ երևում Սինօդի տումարներում։ Հրամայեցին. տալ վանքի գանձարանից վերոյիշեալ աշակերտին ճանապարհածախս, և պահանջել Բաղդասարեանց վարդապետից 50 ռուբլին և բացատրութիւն, թէ ի՞նչ պատճառով մինչև այժմ պահել է իւր մօտ այդ դրամը, և ինչի՞ չէ հասցրել ժամանակին, ուր հարկն էր։

—

12 Փետրուարի. Աստրախանի վիճակի չերքեզահայերի Արմաւիր աւանի Յարութիւն քահանայ Խաչերեսեանը ինչ ինչ յանցանքների համար 1887-ի յունիսի 26-ին Սինօդիս օրագրութեամբ լուծուած էր քահանայութիւնից և դասուած սոսկ աշխարհականների շարքը։ 1890-ին նա արժանացաւ հանգուցեալ Վ. Եհափառ Հայրապետի գթութեանը, ստոտի և Սինօդն օրագրութեամբ (27 փետր 1891) վճռեց այսպէս. «ըստ մակագրութեան Նորին Վ. Եհ. Սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց դարձուցանել զղջացեալ Յարութիւն քահանայ Խաչերեսեանցին քահանայութեան կարգը և թոյլ տալ նրան քահանայագործել, որի մասին յայտնելով Աստրախանի վիճակի կոնսիստորիային պատուիրել նրան, թղթակցելով պատշաճաւոր քաղաքական իշխանութեան հետ, վերստին հանել նոյն քահանայի անունը հարկատուների դասակարգից»։ Պ. Պրոկուրորը անհամաձայն լինելով այս վճռին, նոյն թուի մարտի 17-ին վերադարձրեց օրագիրը Սինօդս, մատնանիշ լինելով, որ չէ պահպանուել օրինաց IX հատորի 481 յօդ. տրամագրած կարգը։

Բայց Սինօդս իւր նախկին վճիռը չգտնելով պ. Պրոկուրորի առաջ բերած օրէնքի մտքին հակառակ, որոշեց նոր օրագրով (3

ապրիլ՝ 1891) ի կատար ածել նոյնութեամբ իւր վճիռը՝ և այս օրագրի պատճէնը ի տեղեկութիւն տալ նորին Գերազնութեան Պրոկուրորին։ Այս վճռի կատարման համար հրամանը տրուեց Աստրախանի Կոնսիստորիային նոյն ապրիլի 5-ին։ Եւ որովհետև անցեալ սեպտեմբերի 19-ի ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հրամանով՝ որ յայտնուած էր պ. Կառավարչապետից Ամենապատիւ Տեղակալին (հոկտ. 10 թ. 517)՝ և որը կարդացուեց Աստեանում ի ներկայութեան նորին Բարձր Սրբազնութեան՝ սրբազան ատենակալների և պ. Պրոկուրորի՝ հրամայւում է Նորէց Վերահասու՝ լինել Բոլոր այն գործերին՝ որոնց մասին Բողոքել է պ. Պրոկո-րորը՝ ուստի ՀՐԱՄԱՅԵՑԻՆ. պատուիրել Աստրախանի Կոնսիստորիային դադարացնել Յարութիւն քահանայ Խաչերեսեանցին քահանայագործութիւնից՝ եթէ տակաւին գտնւում է նա հարկատու վիճակում և նորից խնդրել պ. Նահանգապետի անօրինութիւնը յիշեալ քահանան հարկատուութիւնից ազատելու համար։ Այս օրագրի պատճէնը ուղարկել պ. Պրոկուրորին ի տեղեկութիւն։

—

12 փետր. Երևանի վիճակի Ադիամանի գիւղի Յովհաննէս քահանայ Տէր Ոսկանեանը իւր ինչ ինչ յանցանքների համար Սինոդիս օրագրով (30 դեկտ. 1887) լուծուած էր քահանայական կարգից և դատուած էր ոսկ աշխարհականների շարքը։ 1890 և 1891-ին տուած տղերսագրով արժանանալով Հանգուցեալ Հայրապետի գթութեանը՝ Սինոդս օրագրով (6 մարտի 1891) վճռեց. «ըստ մակագրութեան Նորին Վեհափառութեան դարձուցանել Տէր Յովհաննէս զղջացեալ քահանային քահանայութեան կարգը՝ որի մասին յայտնել Երևանի Կոնսիստորիային պատուիրելով պատշաճաւոր թղթակցութեամբ քաղաքական իշխանութեան հետ հանել տալ նորից այդ քահանայի անունը հարկատուների կարգից»։ Պ. Պրոկուրորը անհամաձայն գտնուելով այս վճռին վերադարձրեց օրագիրը՝ խնդրելով պահել IX հատորի 481 յօդուածի ոսկմանած կարգը։ (Նախ ազատել հարկատուութիւնից և ապա իրաւունք տալ քահանայագործութեան)։ Սինոդը իւր նախկին վճիռը չգտնելով Պրոկուրորի ցոյց տուած յօդուածի մտքին հակառակ՝ որոշեց

(ապրելի 3) միևնոյն վճիռը անփոփոխ ի կատար ածել, ուղարկելով այդ նոր օրագրի մի պատճէնը Պրոկուրորին ի տեղեկութիւն։ Այս վերջին վճռի կատարման համար տրուեց հրաման Երևանի կոնսիստորիային նոյն ապրիլի 5-ին։

Եւ որովհետև ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հրամանով անցեալ սեպտեմբերի 19-ին, որ յայտնուած է պ. կառավարչապետից Ամենապատիւ Տեղակալին հոկտ. 10-ին, և որը կարդացուեց Ատեանում, նորին Բարձր Սրբազնութեան սրբազան ատենակալների և պ. Պրոկուրորի ներկայութեամբ, հրամայուած է նորից վերահասու լինել բոլոր այն գործերին, որոնց մասին քննութիւն է պ. Պրոկուրորը, ուստի ՀՐԱՄԱՅԵՑԻՆ, պատուիրել Երևանի կոնսիստորիային դադարացնել Յովհաննէս քահանայ տէր Ոսկանեանցին քահանայագործութիւնից, եթէ տակաւին գտնուում է նա հարկաւոր վիճակում և վերատին խնդրել նահանգապետի անօրինութիւնը նրան հարկից ազատելու համար։ Այս օրագրի պատճէնը տալ. պ. Պրոկուրորին ի տեղեկութիւն։

—

12 փետր. Երևանի թեմի Ղուշչիբիկակ գիւղի Մկրտիչ քահանայ Գիւլիջանեանցը իւր ինչ ինչ յանցանքների համար լուծուած էր քահանայութիւնից (1886-ապրիլի 21) և արժանացել ներման 1891 մարտի 6-ին։ Եղել էր նոյն բողոքը պ. Պրոկուրորի կողմից և Սինոդի նմանօրինակ կարգադրութիւնը, ինչպէս վերևի երկու օրագրերում։ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հրամանի զօրութեամբ նորից տեսնուեց այս գործը և դրուեց նմանօրինակ վճիռ, ինչպէս վերևում։

—

12 փետր. Թիֆլիզի թեմի Ոսկանապատ գիւղի Միքայել քահանայ տէր Աւագեանցը Սինոդի վճռով խարդախ մետրիքական քաղուածք տալու համար ենթարկուել էր եռամեայ ապաշխարութեան Հաղարծնի վանքում։ Պ. Պրոկուրորը անհամաձայն լինելով այս վճռին, վերադարձրեց օրագիրը, յիշեցնելով, որ տէր Աւագեանցի յանցանքը նախատեսուած է պատժական օրէնքի 362 և 1441 յօդուածներով (кассац. рѣш. 1873 г. № 781) և նոյնպիսի վճռի զօրութեամբ 1867 թ. № 594 Սոկոլովի գործում՝ այն

որբանոցագործ անձինքը, որ մեզագրւում են խարդախ մեարիքական քաղուածք ուղում, ենթարկւում են ոչ թէ հոգևորական, այլ աշխարհական դատաստանի, ուստի և այս գործը պէտք էր յանձնել տեղական քննչին քննութեան։ Սինոդը նոր օրագրով, մարտի 29-ին 1891, որոշեց իւր առաջին ժողովը, որի դէմ բողոքել էր պ. Պրոկուրորը, անփոփոխ ի կատար ածել և այս նոր օրագրի պատճէնը ուղարկել իրեն՝ Պրոկուրորին ի տեղեկութիւն։

Վերևն յիշատ. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հրամանի զօրութեամբ Սինոդն կայացնում է այժմ երկրորդ նոր ժողով, հրամայելով մեզապարտ քահանայի գործը յանձնել քննչի քննութեան։

—

19 փետր. Լսեցին զեկուցում. Մայր Աթոռս միաբանների սենեակները շատ անյարմար, անճոռնի, խոնաւ և առողջութեան վնասակար են։ Եւ որովհետև հարատարապես պ. Շտերնը անցեալ տարի պատրաստեց Մայր Աթոռս շինութիւնների ընդհանուր ծրագիր, ուստի ՀՐԱՄԱՅԵՑԻՆ, պատուիրել Վանական Կառավարութեանը այս գարնան պատրաստել շինութեան համար կարևոր նիւթերը և շուտով ձեռնարկել նոր յարմարաւոր բնակարանների շինութեան, պ. Շտերնի ծրագրի համեմատ։

—

21 փետր. Լսեցին Ամենապատիւ Տէր Տեղակալի առաջադրութիւնը, որի մէջ ասուած է. Վանական Կառավարութեան անդամները լինելով հոգևորական անձինք, բոլոր առևտուրը կատարւում է նրանց ձեռքով, որ կրօնաւորական սքեմով և փեղարով շրջում են շուկաներում և Երևան քաղաքի ու գիւղերի վաճառականոցներում կարևոր պիտոյքներ և Միաբանութեան և ճեմարանի համար ոնուոգ գնելու համար։ Տեսնելով մենք, թէ անպատեհ և բոլորովին անպատշաճ է մեր հոգևորականներին պարապել առևտուրի գործերով, կամեցանք այդ պաշտօնին կարգել աշխարհականներ, որ քաջահմուտ և յաջողակ լինին առևտուրում։ Ուստի գրեցինք Ագուլիս ասանի բնակիչներին, որոնք իրենց միջից քուէարկութեամբ ընտրեցին երկու բարեյոյս մարդ՝ մահտեսի Յովհաննէս Կոստանեանցին և Յակոբանոս

Արասխանեանցին։ Արդ որովհետև վանական կառավարութեան անդամներից բարեշնորհ Ղևոնդ վարդապետը արդէն կամովին հրաժարուել է և միւսը՝ բարեշնորհ Սահակ աբեղան սաստիկ ծանրաբեռնուած է աւելի կարևոր գործերով, ուստի այդ երկուսին հանելով արձակուած կառավարութեան անդամութիւնից, թողնելով այդ պաշտօնում միայն բարեշնորհ Ներսէս վարդապետ Հայկազունուն և Գեղարդատի Նախագահին՝ Ազուանեանց Սրբազանին, տալով որոնց օգնական վերոյիշեալ աշխարհականներին, մի տարի ժամանակով իբրև փորձ, իւրաքանչիւր աշխարհականին տալով 1000 ռուբլի ռոճիկ։ Հրամայեցին կատարել Տէր Տեղակալի ուսուցչագրութիւնը։

—

24 Փետր. Թոյլ տրուեց Զաքամալեցի Մարիամ Կարապետեան Յարութիւնեանցին մնալ նորից ամուսնութեան մէջ, նրա մարդը, Խաչիկ Յարութիւնեանը մարդասպանութեան համար դատապարտուած լինելով տասը տարի տաժանակիր աշխատանքի և մշանջենաւոր բնակութեան Սիբիրում։

—

24 Փետր. Սևանի միաբանութիւնից վանահայր ընտրուած բարեշնորհ Գալուստ վարդապետ Ադվաղեանին թոյլատրուեց վարել վանահայրութեան պաշտօնը, հաստատութիւնը թողնելով տպագոյ Կոթուղիկոսի բարեհաճութեանը։

—

24 Փետր. Սինոդի ստորհանուր հանգուցեալ Մկրտիչ Շահպազեանի ծառայութեան յուցակի վաւերացեալ պատճէնը տրուեց նրա այրուն՝ Մարիամ Շահպազեանցին։

—

24 Փետր. Յարգելով Շամախու թեմական կրկին միջնորդութիւնը թոյլ տալ Դիրք գիւղի վարդան քահանայ Ամանասեանցին մի տարի ժամանակով մնալ Շամախում մինչև որ այդ քաղաքի համար ռեսկական քահանայ ձեռնադրուի, որովհետև պարտական են քահանաները ցմահ անբաժան մնալ իրենց ժողովրդից։

28 փետր. տրուեց Վանական կառավարութեանը 6000 ռուբլի փետր. ամսի ծախսերի համար։

—

28 փետր. Թիֆլիսի թեմի Աղբալաղ գիւղի բնակիչ Կարապետ Յարութիւնեանցին թոյլ է տրւում նորից ամուսնանալ, որովհետև նրա կինը՝ Մարգարիտ Յարութիւնեանցը, մեղադրուելով սպանութեան մասնակցութեան մէջ, դատապարտուած է ութամեայ ստիպողական աշխատութեան և մշանջենաւոր բնակութեան Սիբիրում (45 և 50 յօդ. X հատ. I մասին օրինաց)։

—

24 փետր. թոյլ տրուեց Երևանցի Մարգարիտ Թովմասեանցին նորից ամուսնանալ, որովհետև նրա պսակագրութեան մասին ոչ մի արձանագրութիւն չը կայ և յայտնի չէ թէ պսակուած է արդեօք Հայոց թէ ասորիների եկեղեցում՝ ասորի Նաղար Գիւվարգիզեանցի հետ։ Վերջինս 15 տարուց ի վեր անյայտացած է և Ատրպատականի տաճկերգի տուած տեղեկութիւնից երևում է, որ նա՝ Նաղար Գիւվարգիզեանցը, առաջուց ամուսնացած է եղել Ղրմի գաւառի Ջամալ-Աւալ գիւղում ասորի կնոջ հետ և ունեցել է զաւակներ և յետոյ խաբէութեամբ կրկին ամուսնացել է յիշեալ Մարգարտի հետ, մինչդեռ առաջին կինը կենդանի է։

—

26 Նոյեմբեր, 1891 ամ. ըստ հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ Ամենայն Ռուսաց Ս. Էջմիածնի Հայոց Լուսաւորչական Սինոդում՝ լսեցին զեկուցում։ Սինոդի Ատենապետի Տ. Տեղակալ Ամենապատիւ Արքեպս. Երեմիա Եպիսկոպոսի առաջարկութեան համաձայն կազմուեց օրագիր՝ Թիֆլիսեցի ազնուական Խաչատուր Բարսեղեան Էլիարեանցի պսակի թոյլտուութեան համար Վարդուհի Ստեփանոսեան Ամիրեանցի հետ ազգականութեան եօթներորդ աստիճանում։ Այս օրագիրը Սինոդի նախկին անդամ Ս. Սուքիաս եպիսկոպոսը պահելով իւր մօտ կազմել տուեց չորս անդամների ստորագրութեամբ մի ուրիշ օրագիր, որ ունի այսպիսի վճիռ. «Որովհետև եօթներորդ ազգականութեան աստիճանի պսակների թոյլատուութիւնը վերա-

պահուած է միմիայն Ամենայն Հայոց Կաթուղիկոսին, ուստի քանի որ պարապ է Հայրապետութեան Աթոռը վերոյգրեալ խօսեցեալների պսակը արգելել և այդ ծանուցանել նրանց Թիֆլիսի Կոնսիստորիայի ձեռքով։ Իսկ Սինոդիս պ. Պրոկուրորը հաստատելով Էլիարեանցի պսակի գործի էութեանը չը համաձայնեց այն օրագրին և վերադարձրեց Սինոդը իւր գրութեան հետ անցեալ Հոկտեմբերի 12-ին, թ. 56, որի մէջ ասուած է. «Կարդալով Սինոդիդ օրագիրը ամսոյս 11-ին, որ Տփխիսեցի աղնուական Խաչատուր Բարսեղեան Էլիարեանցի պսակի թոյլատուութեան մասին է, չեմ կարող համաձայնել նորա հետ, առաջին՝ որովհետև այդ օրագիրը չէ հաստատուած Կաթուղիկոսի Տեղակալ Երեմիա եպիսկոպոսի ստորագրութեամբ և երկրորդ՝ Սինոդի չորս անդամները՝ Սուքիաս, Դերսէս, Սարգիս և Արիստակէս (Դաւթեան) եպիսկոպոսները չընդունելով ամենևին Սինոդիդ դիւանատան մէջ կազմուած օրագիրը ըստ առաջարկութեան Կաթուղիկոսական Տեղապահի Էլիարեանցի պսակի թոյլատուութեան մասին իրենք իրենցից կազմել են այդ մասին ուրիշ օրագիր առանց մասնակցութեան և կանխագոյն հաճութեան Տեղապահի, բացատելով Էլիարեանցին և փոխանակ ստորագրել տալու այդ օրագիրը Տեղապահին և կամ մի կամ չորս անդամների անհամաձայնութեան դէպքում վարուելու օրինաց I մասի II հատորի 145, 146, 147, 148, 149, 150, 151 և 152 յօդուածների համաձայն. բացի այս՝ չեմ կարող համաձայնել օրագրիդ և այն գլխաւոր պատճառով, որ Էլիարեանցի պսակի նոյն իսկ բացառութիւնը իւր էութեամբը տարականոն է և քիչ համապատասխան այն արդարութեան, որով պէտք է վերաբերուել բոլոր այն մարդկանց, որոնք դիմում են Սինոդիդ և Հայաստանեայց եկեղեցու Հոգևոր Ս. Հայրերի արդարադատութեանը։ Երբ որ աղերսարկու Էլիարեանցը այսօր Սինոդիդ Ատենում յայտնեց թէ իւր պսակին համանման բազմաթիւ պսակներ տղգականութեան եօթներորդ աստիճանում շատ և շատ անգամ թոյլատրուած են, այն ժամանակ իմ հարցմանս՝ Սինոդի անդամներ Սուքիաս և Դերսէս եպիսկոպոսները ցուցումն տուին թէ ար-

դարև Կոմիտասի կենդանութեան ժամանակ տրուած է եօթ-ներորդ աստիճանի պատկերներ, մինչև անգամ ազգականութիւն վեցերորդ աստիճանի և իսնամութեան չորրորդ աստիճանի լուծում, բայց Կոմիտասի մահից յետոյ չէ տրուած ոչ մի լուծում ազգականութեան եօթներորդ աստիճանի պատկի և այսուհետև էլ մինչև նոր Կոմիտասի ընտրութիւնը չեն կարող և մատիր էլ չեն տալ։ Ուստի և իսկոյն պահանջեցի ես Սինոդի գործերից տեղեկութիւն և ընդունեցի երկու օրագիր հանգուցեալ Մակար Կոմիտասի մահից յետոյ. մինը դրանցից Մայիսի 10-ին կազմուած և ինձնից արձակուած, իսկ միւսը Յուլիսի 26-ին արձակուած իմ պաշտօնակատարից՝ իմ բացակայութեան ժամանակ՝ Սինոդից ատենադպիր Փիլիպպոսեանցից։ Այդ երկու օրագիրն էլ ազգականութեան եօթներորդ աստիճանի թոյլատրութիւն են։ Առաջին օրագրով Մայիսի 10-ին թոյլ է տրուում Թիֆլիսեցի Պօղոս Կարապետեան Զոհրապեանցի պատկը այսպիսի ճիւղագրութեամբ.

Ե ղ բ ա յ ր ն ե ր.

Անտոն ——— Պետրոս.
| | |
Կարապետ | Յաբէթ.
| |
Պօղոս | Բաբաջան
|
Տիրուհի.

Ամուսնացած են Պօղոսն ու Տիրուհին։ Այս ազգականութիւնը անկասկած եօթներորդ աստիճանի է։ Իսկ երկրորդ օրագրով Յուլիսի 26-ին թոյլ է տրուած Թիֆլիսեցի Արշակ Վարդանեան Նահատակեանցի պատկն այսպիսի ճիւղագրութեամբ.

Ե ղ բ ա յ ր ն ե ր մ օ ր ի ց խ ս ր թ.

Գրիգոր ——— Մկրտիչ
| |
Վարդան Անանա

Արշակ	Եղիսաբէթ
	Վերոնիքա։

Զուգաւորուած են Արշակն ու Վերոնիքան։ Աղգականութիւնը անկասկած նոյնպէս եօթներորդ աստիճանի է։ Թէպէտ Սինոդում Նորին Սրբազնութիւն Ներսէս եպիսկոպոսը յայտնեց՝ որ խորթութիւնը հեռացնում է աղգականութիւնը՝ բայց այդ տնհրնարին է հաստատել ոչ Հայաստանեայց եկեղեցու կանոնական օրէնքով ոչ քաղաքական օրէնքով և ոչ ուրիշ որ և է եղանակով՝ որով հնար լինէր աղգականութեան նշանակութիւնը նուազացնել՝ որովհետև այս օրինակում՝ երբայրների — Գրիգորի և Մկրտչի — համարիւն լինելն է գլխաւորը՝ որ ներսուած են մի հօրից՝ մանաւանդ որ Սինոդդ էլ իւր վճռահաստատութեան մէջ դրանց աղգաբանութիւնը համարում է ուղղակի եօթներորդ աստիճանի։ Այդ՝ դատնանք և հոմեմատենք աղերսարկու Էլիսաբեթի պրակը՝ որի աղգաբանութեան ճիւղագրութիւնն այսպէս է։

Ք ա յ ր ե ր։

Մաց	Նինո
Մարմար	Սաեվան
Եղիսաբէթ	Վարդուհի
Խաչատուր։	

Ամուսնացածներն են աղերսարկու Խաչատուրն և Վարդուհին։ Անկասկած որանք եօթներորդ աստիճանի աղգականներ են նման առաջին երկու օրինակների և բացի այդ որանց աղգաբանութիւնը ներսուած է իգականներից՝ որին և ինքն Հանգուցեալ Մակար Կաթուղիկոսն մի առանձին նշանակութիւն էր տալիս՝ աղգաբանութեան մերձաւորութիւնը նուազեցնող։ Արդարև Սինոդի վճռով առաջին երկու պրակները թոյլ են տրուած «ոչ յօրինակ այլոց»՝ սակայն ինչպէս ցոյց տուեց ինքը Սինոդի Ատենապետի

VII Ցուցակ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՔ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑ.

		1889-րդ տարուայ ընթացքում.										1890-րդ տարուայ ընթացքում.										1891-րդ տարուայ ընթացքում.									
		Փուդ.	Ֆունտ.	Ջուտ.	Շիշ.	Հատ.	Թոփ.	Արշին.	Սաժէն.	Ռուբլի.	Կոպէկ.	Փուդ.	Ֆունտ.	Ջուտ.	Շիշ.	Հատ.	Թոփ.	Արշին.	Սաժէն.	Ռուբլի.	Կոպէկ.	Փուդ.	Ֆունտ.	Ջուտ.	Շիշ.	Հատ.	Թոփ.	Արշին.	Սաժէն.	Ռուբլի.	Կոպէկ.
1	Ռոճկապրամ.									6174	02									7582	44									6964	73
2	Վոտպեռի.									1027	38									1644	28									3026	02
3	Մշակի.									134	02									471	83									392	92
4	Փոշտի ծախք.									220	51									259	56									652	17
5	Ճանապարհածախք և բերելավարձ.									1285	59									1178	45									[4])2416	38
6	Հարկ.									354	81									284	41									1096	82
7	Ժամոց.									300	—									300	—									300	—
8	Նուէր.									1742	—									516	—									[5])2454	—
9	Դաճ.	1430								528	20	3949	20							[3])842	40	3039								385	54
10	Երկսթ.									329	08	95	26½							538	38	65	33½							331	59
11	Կոաւ.						4	810		337	42						3	780¾		243	58						2	614½		166	81
12	Խաս կտոր.									—	—							135		239	31							60		137	52
13	Սապոն.	10	10			6				41	45	16	32			3				64	42	14	26			12				54	23
14	Մոմ.	21	16							361	89	19	05½							320	10	10	07							165	50
15	Տախտակ.									392	46									487	80					261				436	28
16	Վառելափայտ.									—	—								94	2662	50								44¾	1273	50
17	Ածուխ.	31		15						73	18	2		75						93	20	1	31	30						47	—
18	Ալիւր.			1						69	50		15	2						36	50		34	3						49	10
19	Միս.	1987	12							3224	77	1818	05							3080	70	18	30							[6])39	15
20	Իմակ.	48	38½							231	20	47	35							188	55	3	03							[6])13	12
21	Գէյթունի ձէթ.	14	33							192	13									3	40	1	18							23	12
22	Զուկ.	20	30							106	—	28	01							181	97	17	39							77	13
23	Հաւ և ճուտ.					73				13	70					217				111	37					220				51	35
24	Զու.					6615				65	40					6890				80	46					3355				39	75
25	Կանոչեղէն.									172	65									300	75									125	19
26	Սունկ.									81	59									98	90									64	—
27	Թէյ.		27¼							58	95		28							64	60		34							74	80
28	Շաքար.*	51	01¼							346	43	99	17							655	02									17	13
29	Գինի.				1033					126	20				2054					759	60									939	79
30	Օղի.				265					117	60				330					165	—										
31	Պատուղ.									169	15									142	10									48	72
32	Զոր միրգ.									72	94									21	37									61	05
33	Պատ. և մանր ծախք.									[1])4197	21									2784	28									[7])6259	80
34	Ձեմ. տօմարում.									31849	75									38720	08									36251	12
35	Վեհ. տօմարում.									14241	41									12579	74									2044	27
36	Տպարանի տօմարում.									**16514	27									16307	55									12598	84
37	Մաս. տօմարում.									[2])4458	44									[2])3176	28									7141	58
38	Օր. մշ. տօմար.***									2450	76									2784	30									3121	55
39	Դոմ. տօմարում.									6808	80									5914	67									6622	37
40	Միաբ. Հանդ. տօմար.									8359	80									7809	81									9716	20
	Գումար . . .									107230	96									113695	66									105681	24

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. [1]) 1000 ր.-ն 3 հատ մարմար քարի գին, 760 ր. 50 կ.-ը 12 հատ ջրաղացքարի գին։—[2]) 4458 ր. 44 կ-ը պակաս է «Ծախք Մառանի» (Տես Արարատ փետր. 184 եր. IV Ցուցակ) 4573 ր. 30 կ. գումարից 114 ր. 86 կ.-ով, որը (29 փ. 18 ֆ. ձիթապտղի գին) գրուած և հաշուած է 1890-րդ տարուայ Մառանի տօմարում, թէև ծախսուել է 1889 րդ տարուայ ընթացքում, այնպէս որ Մառանի իսկական ծախքը 1890-րդ թուականում 4573 ր. 30 կ. է, իսկ 1889-րդ թուականում 3061 ր. 42 կ. [3]) 511 ր. 50 կ.-ը (1530 փ.) կրի ծախքն է։—[4]) 700-ր.-ն տրուած է Ճարտարապետին իբրև ճանապարհածախք և իբրև վարձ։—[5]) 2000 ր. նուէրը տրուած է յօգուտ «Անչափահաս բանտարկելոց» և «Թուսաստանի սովելոց» հազարական ռուբլի։—[6]) Տես Արարատ փետր. 184 եր. IV Ցուցակ «Ծախք Մառանի»։—[7]) 2478 ր. 15 կ.-ը կալուածագրերի հաստատութեան համար է ծախսուած։—

ՎԵՐԴԻՐ. *) Արարատ Փետր. 189 եր. II Ցուցակ 88 փ. 1'/, ֆ. շաքարի փոխանակ պէտք է կարդալ 53 փ. 36 ֆ. 88 փ. 27'/, ֆ. փոխ. կարդալ՝ 55 փ. 2'/, ֆ. այսինքն պէտք է հանել Ցուցակ II «Ծախք Վեհարանի» համապատասխան տարիների 34 փ. 5'/, ֆ. և 33 փ. 25 ֆ.-ը։— **) Արարատ Փետր. 181 եր. III ցուցակ «Ծախք Տպարանի» 1889-դ տարուայ «Պատահական և մանր ծախք»-ի վերայ պէտք է աւելացնել 37 ր. 40 կ.— ***) Արարատ փետր. 185 եր. V Ցուցակ «Ծախք օրական Մշակների» «Ոչոչ» հոգիների փոխանակ պէտք է կարդալ «Զանազան անձերին կապալով տրուած»։—

Տեղակալը և ինչպէս ինձ էլ յայտնի է՝ այդ «ոչ յօրինակ այլոց» բացառութիւնները այնչափ յաճախ են՝ որ կարելի է նրանց ընդունել իբրև ընդհանրական կանոն «յօրինակ ամենեցուն» և ոչ թէ իբրև մի առանձնաշնորհութիւն։ Այդպիսի պսակները տասնեակներով են պատահում տարուայ մէջ՝ իսկ Պատրիարքական Տեղապահի տեսլով այդպիսի դէպքերը հաղուագիւտ չեն իւրաքանչիւր ամսի սկզբում և վերջում։ Իսկ որպէս զի ձեռք բերուի աւելի մեծ չափով արդարութիւն և հետևաբարութիւն՝ և որպէս զի օրէնքները՝ կանոններն ու ամեն տեսակ կարգադրութիւն Ռուսաց Կայսերութեան մէջ միևնոյն օրինակով և հաւասարապէս գործ դնուին ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ բոլոր հպատակների համար՝ ես իմ կողմից ենթադրում եմ թէ եօթներորդ աստիճանի պսակի թոյլտուութիւնը աւելի օրինաւոր է և աւելի նպաստակայարմար՝—ինչպէս նաև աղերսարկու Էլիարեանցի պսակի թոյլտուութիւնը՝ Էլիարեանցի՝ որ բողոքում է թէ ծանր՝ շատ ծանր է նրա դրութիւնը՝ որ գալով Թուրքեստանից՝ որ 3000 ասպարէզով հեռու է՝ շատ դժուարին՝ գրեթէ անհնարին է նրան գնալ և վերադառնալ նորից։ Եւ քանի որ ինքը՝ Էլիարեանցը պարզապէս ասաց Սինոդումդ թէ քառասուն տարեկան հասակում ստիպուած կլինի դուրս գալ Հայաստանեայց եկեղեցու ծոցից և ընդունել ուրիշ դաւանութիւն՝ թողնելով այդ Սինոդի խղճին՝ որը միատեսակ՝ հաւասար կերպով չէ վերաբերւում իրեն՝ ինչպէս որ վերաբերուել է նոյն Հայաստանեայց եկեղեցու միւս որդիներին։ Ուստի և ես չեմ կարող լուռ մնալ և այս էլ չասել՝ որ Էլիարեանցը դրուելով այդպիսի դժուար դրութեան մէջ Սինոդի չորս Անդամներից՝ որ ակներև կերպով խուսափում էք պսակների թոյլտուութեան կանոնները միակերպ գործածելուց՝ յանդգնել է մինչև անգամ ձեռնարկել շատ ցաւալի և ոչ ցանկալի բռնութեան սինոդական անդամներից մէկի՝ Սրբազան Սուքիաս եպիսկոպոսի դէմ՝ որ պահանջել է ոստիկանի միջամտութիւն և արձանագրութեան (պրոտոկոլ) կազմումն (որի համեմատ և կպատժուի անշուշտ Էլիարեանցը՝ եթէ յանցաւոր ճանաչուի)։ Եւ այս իսկ պատճառով՝ խիստ՝ հա-

մանման և օրինական վերաբերումն դէպի ամենքը, որոնց գործերը միամանն գրութեան մէջ են գանուում, առանց խորութիւն դնելու աղերսարկուների մէջ, շատ ցանկալի է թէ ինդրատուների շահի համար և թէ Աւետարանական խոստագոյն և օրինական արդարութեան և ճշմարտութեան պահպանութեան համար։ Ի նկատի առնելով այս բացատրութիւնները՝ վերադարձնում եմ Սինոդիդ ինչպէս այս՝ հոկտեմբերի 11-ի օրագիրը, նոյնպէս և մայիսի 11-ի և յուլիսի 26-ի օրագրերը, որ ստացել էի Սինոդիդ իբրև տեղեկութիւն և խնդրում եմ Սինոդիդ իւր ամբողջական կազմութեամբ տալ բացադրութիւն. թէ ինչով են արդարացուում այդպիսի անկանոն վերաբերութիւնը դէպի Էլիարեանցը և Սինոդիդ չորս անդամների այդպիսի ինքնակամ արարքները Էլիարեանցի եօթներորդ աստիճանի աղգականութեան պատճառ արգելելու համար։ Փոխանակ վարուելու ընդհանուր կարգով, ինչպէս առաջարկել է Պատրիարքի Տեղապահը, նրա օրագիրը Սինոդիդ անդամներից մէկը, Սուրբիաս եպիսկոպոսը, տարել է իւր բնակարանը և ես թէև պահանջեցի Սինոդի Ատենադպրի ձեռքով, բայց՝ հակառակ 1251 յօդուածի II հատ. I մասին, չկարողացայ ձեռք բերել այդ օրագիրը, այլ ստացայ միայն նրա պատճէնը, որի բնագիրը Սուրբիաս եպիսկոպոսը չը տուեց։ Ուրեմն գոնէ «ոչ յօրինակ այլոց» թոյլ տուէք այս պատկը ինչպէս որ արդէն Մակար Հայրապետի մահից յետոյ այդպիսիները թոյլ են տրուել և մանաւանդ որ Ձեր՝ սինոդականներիդ վկայութեամբ՝ թոյլ են տրուել նաև ոչ միայն 7-րդ աստիճանի, այլ աղգականութեան վեցերորդ և խնամութեան չորրորդ աստիճանի պատկներ։ Իսկ եթէ այս դէպքում իբրև հիմունք կառնուի այն, որ այդպիսի խնդիրների վճռահատութիւնը կախուած է միմիայն Հայրապետի իրաւունքից, այն ժամանակ ինկատի ունեցէք և այս, որ I մասի, XI հատորի 939 և 940 յօդուածների 4-դ հատուածի և 938 յօդուածի 7-րդ հատուածի զօրութեամբ Սինոդն է վախճանական վճիռ տալիս ամեն տեսակ պատկների գործերի մասին։ Եթէ մինչև անդամառ բոլէ կանգ առնենք այն հայեցակէտի վրայ, որ ունին մի

քանիսը Սինոդական անդամներից՝ թէ այսպիսի գործերը չեն կարող վճռուիլ մինչև Հայրապետի ընտրութիւնը և չեն կարող վճռուիլ Սինոդում՝ ապա ուրեմն Սինոդական չորս անդամներդ իրաւունք չունէիք վճռել այս գործը ըստ Լութեան և մերժել Էլիարեանցի պատկի թոյլատրութիւնը՝ մինչև իսկ չիսոսելով այն բանի մասին՝ որ այդպիսի պատկիներ՝ ինչպէս բացատրուած է վերևում՝ արդէն վճռուած են Սինոդումդ մինչև Հայրապետի ընտրութիւնը և Հայրապետի մահից յետոյ։ Ամենայն դէպքում՝ խնդրում եմ Սինոդիցդ ծանուցանել ինձ ձեր սնոբինութեան արդիւնքը այս գործի մասին»։ ՀՐԱՄԱՅՑԻՆ՝ Որովհետև տաճարեբերդի դարի սուրբ ժողովը՝ որ կոչւում է Սսի երկրորդ ժողով՝ այսպէս է սահմանում՝ «զպատկն ընտրութեամբ արասցեն՝ վեց ՅՆՈՐՈՎ հեռացեալ յաղգակցութենէ աբեան»՝ որից պարզապէս իմացւում է՝ թէ վեց ծնունդ հեռու պահելով՝ եօթներորդին միայն թոյլատրւում է ամուսնութիւնը ութերորդի հետ՝ ինչպէս և երանելի՝ սուրբ Հայր Բարսեղ Կեսարացին նշանում է և արգելում է վեցերորդի ամուսնանալը եօթներորդի հետ՝ իսկ Ներսէս Շնորհալին՝ Գրիգոր Տաթևացին և ուրիշ շատերը եկեղեցու սուրբ և հեղինակաւոր հայրերից աւելի ևս արգելքներ են դնում՝ միով բանիւ՝ և Հայաստանեայց եկեղեցու ծիսարանը՝ Մաշտոց անուանուածը՝ որով ուսանդուում են մինչև այսօր մեր եկեղեցու արարողութեանց կարգերն ու կանոնները ամեն աշխարհքներում՝ «եղբ արենակցութեան» կոչելով եօթներորդը՝ ապա թէ իրաւունք է տալիս նրան ամուսնանալ ութերորդին հետ։ Եւ արդ՝ եթէ տակաւին չէ խափանուած պատկի հին օրինագրութիւնը՝ ինչպէս տեսանք՝ ոչ ոք կարող է խափանել այն առանց մեղանչելու և խղճելու՝ որովհետև մի միայն եկեղեցուն է վերաբերւում օրէնքներ կարգելն ու խափանելը։ Նաև Պոլժենիայի 25՝ 10՝ 40՝ 41 և 42 յօդուածների համաձայն՝ ազգիս Հայրապետի սեպուհ պարտաւորութիւնն է հրահանգուիլ միշտ եկեղեցու նախնի կանոններով հոգևոր խնդիրներում և վճիռներում և տալ բացարձակ որոշումն (резолюція)։ Այս այսպէս լինելուց յետոյ՝ յիրաւի՝ ինչպէս և նորին Գե-

բաղնութիւնը՝ Սինոդիս պ. Պրոկուրորն ասում է իւր գրութեան մէջ՝ որ կարդացուեց Սինոդումն՝ եղել են Հանգուցեալ Հայրապետի օրով և նրա մահից յետոյ պսակի թոյլատրութիւն վերսերդին եօթներորդի հետ՝ սակայն պէտք է քաջ խելամուտ լինել և հասկանալ՝ որ նոյն իսկ նրանք որ այդպիսի հրամաններ են տուել ասելով «ոչ յօրինակ այլոց»՝ հէնց գրանով խոստովանել են անմեղութեամբ թէ մեղանչել են օրէնքներին։ Սակայն մեզ պէտք է օրէնքների համեմատ գնալ և ոչ թէ նրանց հետևել։ Իսկ պ. Պրոկուրորի գրութեան մէջ առաջ բերուած 938 յօդուածի 7-րդ հատուածը և 939 յօդուածի 4-րդ հատուածը վերաբերում են դատաստանական և վարչական գործերին և ոչ թէ զուտ հոգևորներին՝ ինչպիսին է Էջմիածնայի խնդիրը և 940 յօդուածը վերաբերում է Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի անկախ և լիազօր իրաւունքներին։ Ուստի և Տփխիսեցի աղնուական խաչատուր Բարսեղեան Էջմիածնայի պսակը Վարդուհի Սաեփանոսեան Ամիրեանցի հետ որի մասին է խնդիրը՝ որ գտնուում է արենակցութեան եօթներորդ աստիճանում՝ արգելել՝ գտնելով այն հակառակ մեր եկեղեցու օրէնքների։ Այլ և պատշաճ է դատում՝ մինչև օրս գայթակղուած մոքերը ուղղելու համար՝ հրամայել կոնսիստորիաներին՝ որոնց ձեռքով և հոգևոր կառավարութիւններին՝ յայտնել ի գիտութիւն բոլոր քահանաների և ժողովուրդների՝ թէ այսուհետև բնաւ երբէք չէ թոյլատրուում այդպիսի պսակ՝ որովհետև անհրաժեշտ հարկ է սուրբ պահել օրէնքները։ Այս օրագրի քաղուածը հրատարակել տալ Աթոռիս պաշտօնական «Արարատ» ամսագրում և պատճէնը ուղարկել Նորին Գերազնութեան՝ Սինոդի Պրոկուրորին ի տեղեկութիւն։ (Ստորագրութիւն բոլոր անդամների։ Տեղակալ Սրբազան Երեմիա եպիսկոպոսի և Արիստակէս Սեդրակեան Սրբազան եպիսկոպոսի ստորագրութիւններին կից հետևում է «ունիմ վկարծիս» յաւելուածը)։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մամուլի տակից դուրս են եկել հետևեալ գրքերը.

ԱՒԵՏԱՐԱՆ փոքրագիր, գրաբար, վառակազմ գինն է 70 կոպ.: ՕՐԱՑՈՅՑ 1892 թ., գինն է 20 կոպ.: Յանկացողները կարող են դիմել Վիճակային Կոնսիստորիաներին: Աւետարանի համար կարող են դիմել նաև Տպ. Ժողովին:

Այլ և Տպարանական Ժողովս սորանով յայտնում է ի գիտութիւն Ռուսումնարանական և այլ հաստատութեանց վարչութիւններին, թէ կատարում է ամենայն մաքրութեամբ և ազատութեամբ զանազան պատուէրներ պաշտօնական թղթերի և բլանկների վերաբերութեամբ:

Ժողովիս հետ գործ ունեցողները կարող են դիմել հետևեալ հասցէով. Въ Эчміадзинскій типографическій комитетъ, Вагаршапатъ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Տպարանական Ժողովը խնդրում է այն Գործակալներից՝ որոնք տակաւին չեն ուղարկել յառաջիկայ 1892 թ. բաժանորդաց ցուցակը, շտապեն ուղարկել. հակառակ դէպքում՝ կենթարկուին պատասխանատուութեան: